



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱՍՄԱՐԱՆ

ՀԱԱՀ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2017

«Առաքելություն և նպատակներ» չափանիշի սահմաններում Համալսարանն իր առջև դրված առաջնահերթ խնդիրներ է դիտում հետևյալ հարցերի լուծումը.

- Համալսարանի առաքելության, նպատակների և խնդիրների մեջ ներքին և արտաքին շահակիցների կարիքների արտացոլման ապահովում,
- Համալսարանի առաքելության, ռազմավարական պլանով նախատեսված առանձին ռազմավարական նպատակների ու խնդիրների երաշխավորված և արդյունավետ իրականացում,
- Համալսարանի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման ու բարելավման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների մասնակցության ապահովում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 1.

Համալսարանի առաքելության, նպատակների և խնդիրների մեջ ներքին և արտաքին շահակիցների կարիքներն արտացոլող մեխանիզմների մշակում և հաստատում

Քայլ 1.1. Համալսարանի դիմորդների պահանջները բացահայտող մեխանիզմների մշակում և հաստատում

ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատվել են 06.02.2015 թ. (արձ. № 9) «Մասնագիտական կողմնորոշման կարգ» և «Շահակիցների կարիքների գնահատման կարգ» փաստաթղթերը (պատճենները կցվում են):

Ըստ վերը նշված փաստաթղթերի մշակվել են համալսարանի դիմորդների կարիքները բացահայտող մեխանիզմները:

Մասնագիտական կողմնորոշման հիմնական մեխանիզմներ են՝

- հանդիպումների կազմակերպում տարածաշրջանների դպրոցներում,
- հարցումների կազմակերպում դիմորդների շրջանում:
- տեղեկատվության ապահովում՝ անհատական, խմբակային, մասսայական, անմիջական (դասընթացների, զրույցների, ԶԼՄ-երի միջոցով),
- մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն:

Ներդրվել են մասնագիտական կողմնորոշման հիմնական մեխանիզմները, ըստ որի իրականացվում են՝

- դիմորդ-աշակերտների հետ նախաբուհական պարապմունքների կազմակերպում,
- հանդիպումներ և խորհրդատվություն համալսարանի դասախոսական կազմի կողմից,
- դիմորդ-աշակերտների հետ հարցումների կազմակերպում,
- դիմորդի արձագանքի վերլուծություն՝ համալսարանի կայքի միջոցով,
- պոտենցիալ դիմորդների վերաբերյալ ինֆորմացիայի հավաքագրում,
- դիմորդների հետ ֆոկուս-խմբերի կազմակերպում,
- տարբեր դպրոցների աշակերտների հետ միջոցառումների կազմակերպում, դիմորդ-ների կարծիքների արձանագրում և վերլուծություն,
- համալսարանում բաց դռների օրերի կազմակերպում՝ շահակիցների արձագանքը լսելու համար:

Հղում՝ https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/kariqneri_gna_hatman_karg.pdf

Փաստաթղթում ամրագրված գործընթացը կրում է պարբերաբար շարունակական բնույթ:

Քայլ 1.2. Համալսարանի ուսումնառողների պահանջները բացահայտող մեխանիզմների մշակում և հաստատում

ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատվել է 06.02.2015 թ. (արձ. № 9) «Շահակիցների կարիքների գնահատման կարգ» փաստաթուղթը:

Հղում՝

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/kariqneri_gnahatman_karg.pdf

Ըստ վերը նշված փաստաթղթի մշակվել ու ներդրվել են ուսանողների կարիքների բացահայտման հետևյալ մեխանիզմները, համաձայն որի բավարարվածության գնահատումը անցկացվում է հետևյալ ուղղություններով՝

- մասնագիտության կրթական ծրագրերի և ուսուցանվող դասընթացների բովանդակության,
- դասավանդման մեթոդների,
- լսարանների կահավորվածության,
- ուսումնամեթոդական ապահովվածության,
- քննություններ և գիտելիքի ստուգման այլ ձևերի և այլ հարցերի վերաբերյալ:

Միաժամանակ իրականացվում է ուսանողների բավարարվածության գնահատում՝

- դասավանդման գործընթացի և գնահատման համակարգի,
- կրթական ծառայությունների որակի,
- համալսարանի կողմից տրամադրվող այլ ծառայությունների,
- գիտահետազոտական աշխատանքներում ներգրավման աստիճանի,
- ռեսուրսային բազայի,
- վարչական կազմի կողմից տրված ծառայությունների ուղղությամբ:

Հղում՝ https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/kariqneri_gnahatman_karg.pdf

Փաստաթղթում ամրագրված գործընթացը կրում է պարբերաբար շարունակական բնույթ:

Քայլ 1.3. Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի պահանջները բացահայտող մեխանիզմների մշակում և հաստատում

ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատվել է 06.02.2015 թ. (արձ. № 9) «Շահակիցների կարիքների գնահատման կարգ» փաստաթուղթը:

Համաձայն վերը նշված փաստաթղթի մշակվել ու ներդրվել են պրոֆեսորադասախոսական կազմի պահանջների բացահայտման մեխանիզմները, համաձայն որի պրոֆեսորադասախոսական կազմի բավարարվածությունը գնահատվում է՝

- ամբիոնի նիստում և այլ միջոցառումներին քննարկումների միջոցով,
 - անհատական և կոլեկտիվ բողոքների ուսումնասիրման միջոցով,
 - անանուն կամ բաց անկետավորման անցկացման միջոցով,
 - այլ մեթոդների կիրառման միջոցով:
- Բավարարվածության գնահատումը անցկացվում է՝
- դասավանդման համար անհրաժեշտ ռեսուրսային բազայի,
 - գիտահետազոտական ոլորտի:
- Բարոյահոգեբանական վիճակի այլ հարցերի շուրջ:
- Պրոֆեսորադասախոսական կազմի բավարարվածության գնահատումը ներառում է՝
- բավարարվածության գնահատումը դասավանդման համար նախատեսված ռեսուրսային ապահովվածությունից,
 - բավարարվածությունը համալսարանի ընդհանուր միջավայրից,
 - բավարարվածությունը մասնագիտական ուսումնամեթոդական բազայից,
 - գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվածությունը:

Հղում՝ https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/kariqneri_gna_hatman_karg.pdf

Փաստաթղթում ամրագրված գործընթացը կրում է պարբերաբար շարունակական բնույթ:

Քայլ 1.4. Համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի որակից շրջանավարտների բավարարվածության բացահայտման մեխանիզմների մշակում և հաստատում

Քայլ 1.5. Համալսարանի շրջանավարտների գիտելիքների և կարողությունների մակարդակից գործատուների բավարարվածության բացահայտման մեխանիզմների մշակում և հաստատում

ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատվել է 06.02.2015 թ. (արձ. № 9) «Շահակիցների կարիքների գնահատման կարգ» փաստաթուղթը: (պատճեն կցվում է): Համաձայն մշակված և հաստատված փաստաթղթի կարգավորվել է համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի որակից շրջանավարտների բավարարվածության բացահայտման ու շրջանավարտների գիտելիքների և կարողությունների մակարդակից գործատուների բավարարվածության բացահայտման մեխանիզմները:

Ըստ ներդրված համակարգի շրջանավարտների գնահատումն իրականացվում է՝

- պարբերական անկետավորման միջոցով,
- ֆոկուս-խմբերի տեսքով,
- հարցազրույցների կազմակերպման միջոցով,
- կազմակերպությունների կողմից առաջարկությունների ուսումնասիրման միջոցով,

- շրջանավարտների հետ համալսարանի ղեկավարության հանդիպումների և զրույցի կազմակերպման միջոցով,
 - հետադարձ կապի այլ տեսակների կիրառման միջոցով:
- Շրջանավարտների բավարարվածության գնահատումն իրականացվում է հետևյալ հարցերի շուրջ՝
- Համալսարանում ստացված գիտելիքների և ունակությունների բավարար լինելը մասնագիտական աշխատանքում կիրառելու համար:
 - Էթիկական կոդմերը:
 - Մասնագիտությունների կրթական ծրագրերի բովանդակությունը և որակը:
 - Համալսարանի կողմից տրամադրված կրթական ծառայությունների որակը:
 - Բավարարվածության վրա ազդող այլ գործոններ:
- Գործատուների բավարարվածության գնահատումն իրականացվում է հետևյալ հիմնական հարցերի շուրջ՝
- Մասնագիտությունների կրթական ծրագրերի որակը և բովանդակությունը:
 - Համալսարանի շրջանավարտների գիտելիքների և կարողությունների մակարդակը:
- Շրջանավարտների և գործատուների բավարարվածության գնահատումն անկացվում է տարին մեկ անգամ:

Հղում՝ https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/kariqneri_gna_hatman_karg.pdf

Քայլ 1.6. Համալսարանի միջազգայնացման ոլորտի գործունեությունից համալսարանի հետ առնչվող միջազգային կառույցների պահանջների բացահայտման մեխանիզմների մշակում և հաստատում

ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատվել է 03.06.2016 թ. (արձ. № 10) «Միջազգային համալսարանների և կառույցների պահանջների բացահայտման ընթացակարգ» փաստաթուղթը (պատճեն կցվում է):

Համաձայն նշված փաստաթղթի ներդրվել են միջազգային համալսարանների և կառույցների պահանջների բացահայտման մեխանիզմներ, որոնք են.

Միջազգային համալսարանների և կառույցների տեղեկատվական բացահայտման ուսումնասիրում.

- վերոհիշյալ համալսարանների և կառույցների հետաքրքրությունների շրջանակի բացահայտում,

- համագործակցությանը ներկայացվող պահանջների բացահայտում,

Միջազգային համալսարանների և կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպում, կլոր սեղաններ, բանավոր հարցախույզ:

Արտերկրի ուսանողների հետ հանդիպումներ:

Փաստաթղթում ամրագրված գործընթացը կրում է պարբերաբար շարունակական բնույթ:

Քայլ 1.7. Համալսարանի առաքելության, սահմանված նպատակների և խնդիրների վերանայման քաղաքականության մշակում և հաստատում

ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատվել է 03.06.2016 թ. (արձ. № 10) «Ռազմավարական պլանավորում և կառավարում» փաստաթուղթը: (պատճեն կցվում է):

Համալսարանի առաքելության և նպատակների վերանայման գործընթացը երաշխավորում է ՀԱԱՀ-ի զարգացման հեռանկարների պլանավորումը, իրականացումը և զարգացման կայունության ապահովումը: Համալսարանի առաքելության և նպատակների վերանայման ապահովման համար իրականացվում է՝

- վերանայման համար շահակից կողմերի ներգարվման համար մեխանիզմների մշակում և ներդրում,

- առաքելության և նպատակների վերանայում՝ հիմնվելով գնահատման արդյունքների վրա,

- նոր առաքելության և նպատակների սահմանում՝ որոնք արտացոլում են շահակիցների կարիքները և պահանջները:

Հղում՝ https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/razmavarakan_planavarum.pdf

Ըստ վերը նշված փաստաթղթի գործընթացը կարգավորվում է յուրաքանչյուր 5 տարին 1 անգամ, անհրաժեշտության դեպքում այն կարող է իրականացվել յուրաքանչյուր տարի:

Քայլ 1.8. Համալսարանի ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործընթացների իրականացման արդյունավետության վերլուծություն

ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատվել է 06.02.2015 թ. (արձ. № 9) «Շահակիցների կարիքների գնահատման կարգ» փաստաթուղթը: (պատճեն կցվում է):

Ըստ վերը նշված փաստաթղթի շահակիցների կարիքների գնահատումը կարգավորվում է հետևյալ նպատակներով՝

Օբյեկտիվ տվյալների ամբողջականության ապահովում՝ որակի կառավարման համակարգի վերլուծության համար, և բարելավմանը ուղղված հիմնավորված կառավարչական որոշումների կայացում:

Համալսարանի կրթական, գիտական և այլ ծառայությունների որակի բարձրացում:

Համալսարանի և շահակիցների միջև կապի ամրապնդում:

Համալսարանի իմիջի և ռեյտինգի բարձրացում պոտենցիալ շահակիցների, գործատուների մոտ:

Համալսարանի ծառայությունների որակի շարունակական բարձրացում:

Համալսարանի շահակիցներ հանդիսանում են ուսանողները, համալսարանի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը, դիմորդը, շրջանավարտները, գործատուները, հասարակությունը և պետական մարմինները:

Շահակիցների կարիքների գնահատման կարգը ներառում է՝

Ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի բավարարվածության գնահատումը համալսարանի միջավայրից և մատուցվող ծառայություններից:

Շրջանավարտների, գործատուների և այլ արտաքին շահակիցների կարիքների և պահանջների ուսումնասիրումն ու գնահատումը համալսարանի կողմից մատուցվող ծառայություններից և այլ գործոններից:

Հասարակության, դիմորդների և այլ արտաքին շահակիցների բավարարվածության գնահատումն իրականացվում է հետևյալ ճանապարհներով՝

Շահակիցների կողմից ստացված կարծիքների և առաջարկների վերլուծություն,

Համատեղ աշխատաժողովների և կոնֆերանսների անցկացում՝ ներառելով հասարակության և միջնակարգ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներին:

Այլ մեթոդների կիրառում:

Շրջանավարտների, ինչպես նաև այն կազմակերպությունների կարիքների գնահատումը, որտեղ աշխատում է շրջանավարտը, կատարվում է՝

Պարբերական անկետավորման միջոցով:

Ֆոկուս-խմբերի տեսքով:

Հարցազրույցների կազմակերպման միջոցով:

Կազմակերպությունների կողմից առաջարկությունների ուսումնասիրման միջոցով:

Շրջանավարտների հետ համալսարանի ղեկավարության հանդիպումների և զրույցի կազմակերպման միջոցով:

Հետադարձ կապի այլ տեսակների կիրառման միջոցով:

Հղում՝ https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/kariqneri_gna_hatman_karg.pdf

Սույն փաստաթուղթը կարգավորում է համալսարանի ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործընթացների իրականացման արդյունավետության վերլուծությունը և ենթադրում է շարունակական գործընթաց:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 2.

Համալսարանի առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման ընթացակարգերին համապատասխան կատարողականի ցուցանիշների մշակում

Քայլ 2.1. Համալսարանի առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականության մշակում և հաստատում

ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատվել է 03.06.2016 թ. (արձ. № 10) «Ռազմավարական պլանավորում և կառավարում» փաստաթուղթը: (պատճեն կցվում է):

Համալսարանի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ է առաջնահերթ վերլուծության ենթարկել և գնահատել համալսարանի ռազմավարական պլանը և հեռանկարային ծրագիրը վերջին հինգ տարվա համար: Այդ գործընթացն իրականացնելու համար կազմվել է աշխատանքային խումբ, մշակվել աշխատանքային պլան-ծրագիր, որը ներառում է իրականացման ժամկետները, պատասխանատուներին, կիրառվող մեթոդները և գործիքախումբը:

Գնահատման համար որպես ելակետային ինֆորմացիա դիտարկվում է ռազմավարական ծրագրի նպատակները, խնդիրները և սպասվելիք արդյունքները: Ծրագրում նշված պլանային ցուցանիշները համեմատվում է փաստացիների հետ: Գնահատման համար կիրառվում են ռազմավարական գնահատման մեթոդներ և գործիքներ:

Գնահատման արդյունքների հիման վրա պատրաստվում է ամփոփ հաշվետվություն և ներկայացվում համալսարանի գիտական խորհուրդ քննարկման և որոշումների կայացման համար:

Ըստ վերը նշվածի համալսարանի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականության մշակման, ներդրման և իրականացման համար պատասխանատուներ են հանդիսանում՝ համալսարանի ռեկտորը (գործընթացի ղեկավար), պրոռեկտորները ըստ ուղղությունների (գործընթացի պատասխանատուներ), աշխատանքային խումբ (գործընթացի իրականացնողներ), տվյալ ոլորտի համար պատասխանատու այլ շահակից կողմերը, որոնց կարծիքը կարևոր է տվյալ գործընթացի ապահովման համար:

Հղում՝ https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/razmavarakan_planavarum.pdf

Քայլ 2.2. Համալսարանի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման ընթացակարգերի մշակում

ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատվել է 03.06.2016 թ. (արձ. № 10) «Ռազմավարական պլանավորում և կառավարում» փաստաթուղթը: (պատճեն կցվում է):

Համաձայն վերը նշված փաստաթղթի համալսարանի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման խնդիրներն են՝

– Համալսարանի գործունեության ռազմավարական գնահատում՝ հստակ սահմանված մեխանիզմների և գործիքակազմի հիման վրա:

– Համալսարանի առաքելության գնահատումը՝ հստակ սահմանված չափանիշների հիման վրա:

– Համալսարանի առաքելությանը համապատասխան սահմանված նպատակների գնահատումը՝ ըստ գերակա ուղղությունների:

– Համալսարանի առաքելության փոփոխումը (մասնակիորեն կամ ամբողջությամբ)՝ համալսարանի շահակից կողմերի կարիքների և պահանջներին համապատասխան:

Համալսարանի առաքելության աշխատանքի իրականացման արդյունքների գնահատման նպատակով՝

Կայացվել է որոշում ուղղված առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատմանը: Իրականացվել է համալսարանի գործունեության ինքնավերլուծություն /ռազմավարական վերլուծություն ըստ համալսարանի գերակա ուղղությունների/:

Ձևավորվել է աշխատանքային խումբ գնահատման պլանի մշակման համար: Տվյալ փուլում մուտքային ինֆորմացիան ներառում է գնահատմանը ուղղված տեխնիկական առաջադրանքը և այլ սկզբնական տեղեկություններ, իսկ ելքում՝ համալսարանի գնահատված առաքելությունը և նպատակները:

Իրականացվել է գործընթացի գնահատում՝ ներգրավելով շահակից կողմերին: Համեմատվել է պլանային և փաստացի ցուցանիշները:

Նոր կամ վերանայված առաքելության սահմանում, ըստ դրա նպատակների և խնդիրների սահմանում:

Կազմվել է պատասխանատվությունների և իրավասությունների բաշխման մատրից:

Հղում՝ https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/razmavarakan_planavarum.pdf

Քայլ 2.3. Համալսարանի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման ու բարելավման ընթացակարգերին համապատասխան կատարողականի ցուցիչների մշակում

ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատվել է 03.06.2016 թ. (արձ. № 10) «Ռազմավարական պլանավորում և կառավարում» փաստաթուղթը: (պատճեն կցվում է):

Համաձայն վերը նշված փաստաթղթի համալսարանի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատումն իրականացվում և կարգավորվում է հետևյալ ձևով՝

- Համալսարանի առաքելության գնահատում՝ ներգրավելով շահակից կողմերին:

- Համալսարանի նպատակների և խնդիրների գնահատում՝ համեմատելով պլանային և փաստացի ցուցանիշները:

Գնահատման գործընթացի իրականացման համար պատրաստվել են հետևյալ մուտքային փաստաթղթերը և գործիքները՝

- հաստատված աշխատանքային ծրագիրը,
- գնահատման մեթոդները և մեխանիզմները,
- գնահատման չափորոշիչները,
- հարցման թերթիկները՝ հիմքերի և իրադարձությունների (շահակիցների կարիքների և պահանջների) արձանագրման համար:

Աշխատանքային խումբն իրականացնում է գնահատման աշխատանքները՝ հիմնվելով աշխատանքային ծրագրի և նրանում սահմանված ժամկետների ու այլ կետերի վրա:

Կազմակերպվում են հարցումներ համալսարանի հիմնական շահակիցների շրջանում:

Որպես ելքային հիմքեր են դիտարկվում ուսումնասիրությունների և գնահատումների վերաբերյալ գրանցումները, գիտական խորհրդի կողմից կայացված որոշումները, ինչպես նաև գիտական խորհրդի կողմից կայացված որոշումները՝ ուղղված նոր առաքելության և նպատակների սահմանման վերաբերյալ:

Հղում՝ https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/razmavarakan_planavarum.pdf

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 3.

Ռազմավարական հայեցակարգով նախատեսված առանձին ռազմավարական ծրագրերի համար մշտադիտարկման քանակական և որակական ցուցիչների մշակում

Քայլ 3.1. Ռազմավարական ծրագրերի առանձին խնդիրների մշտադիտարկման քանակական ցուցիչների մշակում

Քայլ 3.2. Ռազմավարական ծրագրերի առանձին գործընթացների մշտադիտարկման որակական ցուցիչների մշակում

ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատվել է 03.06.2016 թ. (արձ. № 10) «Ռազմավարական պլանավորում և կառավարում» փաստաթուղթը: (պատճեն կցվում է):

Համաձայն վերը նշված փաստաթղթի մշակվել և կարգավորվել են ռազմավարական ծրագրերի առանձին խնդիրների և առանձին գործընթացների մշտադիտարկման հետևյալ քանակական և որակական ցուցիչները՝

Քանակական կատարողականի ցուցիչները կազմված են թվերից և նրա նկարագրից: Թիվը ցույց է տալիս չափը (որքան) , իսկ նկարագիրը ցույց է տալիս թվի իմաստը (ինչը):

Որակական ցուցիչները արտահայտվում են բացատրական ձևով: Որակական ցուցիչները որքան հնարավոր է պետք է խտացրած լինեն վարկանիշային սանդղակի ձևով, օրինակ, հետազոտության որակը գնահատվել է որպես «գերազանց», «միջին» կամ «միջինից ցածր»: Դա թույլ կտա ապահովել համադրելիությունը ժամանակի մեջ: Համապատասխան ցուցիչների բնութագրիչներն են հանդիսանում՝

- ❖ Վավերացվածություն – ցուցիչները չափում են այն, ինչ մտադիր էին չափել:
 - ❖ Հավաստիություն – հավաքագրված տվյալները պետք է լինեն նմանատիպ (եթե հավաքագրված տվյալները բազմիցս անգամ են հավաքագրվել, նույն պայմաններում և միևնույն ժամանակահատվածում):
 - ❖ Մատչելիություն – պետք է մշակվեն տնտեսական ցուցիչների հավաքման մեթոդներ:
 - ❖ Հասանելիություն – տվյալները պետք է հասանելի լինեն ծրագրի դինամիկային հեշտությամբ հետևելու համար:
 - ❖ Համապատասխանություն – հավաքագրված տվյալները պետք է կապ հաստատեն ծրագրի վերջնարդյունքի հետ:
- Մշակված և կիրառության մեջ դրված փաստաթղթի ցուցիչները պետք է լինեն կառավարելի:

Հղում՝ https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/razmav_arakan_planavarum.pdf

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 4.

Մշտադիտարկման և կատարողականի ցուցիչների վերաբերյալ տվյալների հավաքագրման ընթացակարգերի մշակում

Քայլ 4.1. Մշտադիտարկման վերաբերյալ տվյալների հավաքագրման ընթացակարգի մշակում

Քայլ 4.2. Կատարողականի ցուցիչների վերաբերյալ տվյալների հավաքագրման ընթացակարգի մշակում

ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատվել է 03.06.2016 թ. (արձ. № 10) «Ռազմավարական պլանավորում և կառավարում» փաստաթուղթը, համաձայն որի կարգավորվել է մշտադիտարկման վերաբերյալ տվյալների հավաքագրման և կատարողականի ցուցիչների վերաբերյալ տվյալների հավաքագրման ընթացակարգերը: Ըստ վերը նշված փաստաթղթի գործընթացը կարգավորվում է հետևյալ ձևով.

- տվյալների աղբյուրների ընտրություն,
- տեղեկատվության հավաքման մեթոդների և մեխանիզմների ընտրություն,
- տվյալների հավաքագրման համար պարբերականության և պատասխանատուների որոշում,
- տվյալների հավաքագրում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 5.

Մշտադիտարկման և կատարողականի ցուցիչների վերաբերյալ տվյալների աղբյուրների, տվյալների հավաքման, վերլուծությունների իրականացման և վերլուծության արդյունքների կիրառման մեխանիզմների կանոնակարգում

Քայլ 5.1. Մշտադիտարկման վերաբերյալ տվյալների հավաքման, վերլուծությունների իրականացման և վերլուծության արդյունքների կիրառման մեխանիզմների կանոնակարգում

Քայլ 5.2. Կատարողականի ցուցիչների վերաբերյալ տվյալների աղբյուրների, տվյալների հավաքման, վերլուծությունների իրականացման և վերլուծության արդյունքների կիրառման մեխանիզմների կանոնակարգում

ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատվել է 03.06.2016 թ. (արձ. № 10) «Ռազմավարական պլանավորում և կառավարում» փաստաթուղթը: Համաձայն վերը նշված փաստաթղթի մշակվել և կարգավորվել են մշտադիտարկման վերաբերյալ տվյալների հավաքման, վերլուծությունների իրականացման և վերլուծության արդյունքների կիրառման մեխանիզմները՝

- վերլուծության արդյունքների կիրառում.
- վերլուծության արդյունքների հիման վրա իրականացվում են միջոցառումներ՝ արդյունավետության ցուցիչների վերստուգման և պարզելու համար, թե ինչ այլ ռեսուրսներ են անհրաժեշտ տվյալների հավաքագրման համար:

Համաձայն ընթացակարգի վերլուծության արդյունքները հաշվետվության տեսքով ներկայացվում են համալսարանի գիտական խորհուրդ քննարկման և հաստատման համար:

Կայացվում են որոշումներ ուղղված արդյունքների հիման վրա՝ հետագա անելիքների

պլանավորման, տարբեր գործընթացների բարելավման համար:

Վերլուծության արդյունքները կիրառվում են՝

- համալսարանի զարգացման ծրագրերի մշակման համար,
- մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայման և վերամշակման փուլում,
- ռեսուրսային բազայի թարմացման և կատարելագործման համար,
- կրթական ծառայությունների զարգացման համար և այլն:

Մշակվել են նոր ռազմավարության, ռազմավարական նպատակների և խնդիրների, կատարողականի ցուցիչներ, որի միջոցով հնարավոր է վերհանել առկա խնդիրները, պահանջներն ու նպատակները և տալ դրանց լուծումները համապատասխան մեխանիզմների ներդրման միջոցով:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 6.

Համալսարանի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունն ապահովող մեխանիզմների մշակում:

Քայլ 6.1. Համալսարանի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում:

Քայլ 6.2. Համալսարանի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունն ապահովող մեխանիզմների մշակում:

Քայլ 6.3. Շահակիցներից ստացված արձագանքների հավաքագրում, կանոնակարգում և վերլուծում:

ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատվել է 03.06.2016 թ. (արձ. № 10) «Ռազմավարական պլանավորում և կառավարում» փաստաթուղթը: Համաձայն փաստաթղթի կարգավորվում է համալսարանի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականության և ընթացակարգերի մշակումն ու հաստատումը, ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունն ախտահովող մեխանիզմները և շահակիցներից ստացված արձագանքների հավաքագրումը, կանոնակարգումը և վերլուծումը: Համալսարանի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունն ապահովելու համար մշակվել են հետևյալ մեխանիզմները.)

Շահակիցների շրջանում անցկացված հարցումների արդյունքների մշակման համար իրականացվում են հետևյալ գործողությունները՝

- հարցումների մեջ ներառված հարցերի կողավորում,
- կողավորված տեղեկատվության մշակում համակարգային ծրագրային միջոցներով,
- մշակված տեղեկատվության վերլուծության իրականացում,
- վերլուծության ենթարկված տեղեկատվության մեկնաբանում:

Տվյալների համակարգչային մշակման համար օգտագործվում են ծրագրային միջոցներ (MS Excel, SPSS):

Մշակված և վերլուծված տվյալների հիման վրա ստեղծվում է ընդհանուր տեղեկատվական հենք:

Վերջիններս հնարավորություն է ընձեռում ապահովել ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը, իրականացնել արձագանքների հավաքագրում, կանոնակարգում և վերլուծում:

Հղում` https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/razmavarakan_planavarum.pdf

«Կառավարում և վարչարարություն» չափանիշի շրջանակներում Համալսարանն իր առջև դրված առաջնարհերթ խնդիրներ է դիտում հետևյալ հարցերի լուծումը.

- Համալսարանի համար սահմանված էթիկայի կանոնների առկայության և «Բարեվարքության կանոնագրքի» մշակում ու հաստատում:
- Որակի կառավարման սկզբունքով Համալսարանում վարչարարության իրականացում և գնահատում:
- Մասնագիտության կրթական ծրագրերի և Համալսարանում այլ գործընթացների արդյունավետ իրականացում:
- Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ տնօրինում և օգտագործում:
- Համալսարանի գործունեության ներքին և արտաքին ռիսկերի գնահատում և դրանց նվազեցում:
- Համալսարանի շահերի հաշվառումով հրապարակային տեղեկատվության տարածման ապահովում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 1.

Համալսարանի համար կառավարման էթիկայի կանոնների սահմանում:

Քայլ 1.1. Համալսարանի կառավարման էթիկայի հանձնաժողովի ստեղծում:

Համալսարանի ռեկտորի 28.12.2015 թ. № 136/ԱԾ հրամանով ստեղծվեց Համալսարանի էթիկայի հանձնաժողով (հրամանի պատճ. կցվում է):

Քայլ 1.2. Համալսարանի համար կառավարման էթիկայի կանոնների սահմանում:

Համալսարանի էթիկայի հանձնաժողովի և այլ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից մշակվեց, 2015 թ. փետրվարի 6-ին Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատվեց և գործածության մեջ դրվեց «ՀԱԱՀ էթիկայի կանոնակարգը» (պատճ. կցվում է):

Հղում՝

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/Etikayi_ev_akademia_kan_aznvwutyayn_apahovum.pdf

2016 թ. մարտին համալսարանում ձևավորվեց համակարգող հանձնախումբ՝ կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ «Համալսարանի բարեկարգության կանոնագրքի» մշակման նպատակով:

Քայլ 1.3. Համալսարանի կառավարման համակարգում կառավարման էթիկայի կանոնների ներդրում:

Համալսարանի կառավարման էթիկայի հանձնաժողովի ստեղծումից և «Համալսարանի էթիկայի կանոնակարգի» մշակումից հետո «Էթիկայի կանոնակարգը» տրամադրվեց համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներին՝ էթիկայի կանոններն իրենց կառույցներում ներդնելու նպատակով:

Էթիկայի հանձնաժողովի ստեղծումը, էթիկայի կանոնների սահմանումը և Համալսարանի կանոնակարգի հաստատումը նպաստեց համալսարանում էթիկայի մշակույթի զարգացմանը, վարչական ու դասախոսական կազմի, դասախոսական կազմի և ուսանողության և այլ մակարդակներում աշխատանքային փոխհարաբերությունների կարգավորմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 2.

Համալսարանի քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարության որակի կառավարման սկզբունքով իրականացնելու և գնահատելու համար կանոնակարգերի, մեխանիզմների և գործիքների մշակում և հաստատում:

Քայլ 2.1. Համալսարանի կառավարման վարչարարության որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգի մշակում և հաստատում:

Քայլ 2. 2. Որակի կառավարման սկզբունքով քաղաքականության և ընթացակարգերի իրականացման մեխանիզմների մշակում և հաստատում:

Համալսարանի քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարության որակի կառավարման սկզբունքով իրականացնելու և գնահատելու նպատակով 2012-2016 թթ. մշակվեցին, համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատվեցին և գործողության մեջ դրվեցին հետևյալ փաստաթղթերը.

- Որոշում կայացնելու գործընթացներում ուսումնառողների և դասավանդողների մասնակցությունը երաշխավորող քաղաքականություն (պատճ. կցվում է)
- Ֆինանսների տնօրինման քաղաքականություն և ընթացակարգ (պատճ. կցվում է)
- ՀԱԱՀ զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման գնահատման և վերանայման քաղաքականություն (պատճ. կցվում է):

Հղում՝

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/razmavarakan_planavarum.pdf

- ՀԱԱՀ բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգ (պատճ. կցվում է)

Հղում՝ https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/Benchmarking.pdf

- Անհամապատասխանությունների կառավարման ընթացակարգ (պատճ. կցվում է)
- Ուղղիչ և նախազգուշացնող գործողությունների ընթացակարգ (պատճ. կցվում է)
- Փաստաթղթերի և գրանցումների կառավարման ընթացակարգ (պատճ. կցվում է)
- Տեղեկատվական միջավայրի կառավարման ընթացակարգ (պատճ. կցվում է)

Հղում՝

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/Voraki%20karavarum.PDF

- ՀԱԱՀ կրթական գործունեության գնահատման կարգ (պատճ. կցվում է)
- ՀԱԱՀ շահակիցների կարիքների գնահատման կարգ (պատճ. կցվում է)

Հղում՝

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/kariqneri_gnahatman_karg.pdf

- ՀԱԱՀ կրթական գործունեության որակի մշտադիտարկման կարգ (պատճ. կցվում է)

Հղում՝

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/vorak%20mshtaditarkum.PDF

- ՀԱԱՀ էթիկայի կանոններ (պատճ. կցվում է)

Հղում՝

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/Etikayi_ev_akademia_kan_aznvwutyan_apahovum.pdf

- Ուսումնական և գիտահետազոտական գործունեության մշտադիտարկման ինֆորմացիայի քարտեզ (պատճ. կցվում է)

Հղում՝

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/Mshtaditarkman%20qartez.pdf

- Ուսումնական և գիտահետազոտական գործունեության մշտադիտարկման ցուցանիշներ (պատճ. կցվում է)

Հղում՝

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/usumnakan%20ev%20gita_hetazotakan.pdf

- Որակի մշտադիտարկման, վերլուծության և գնահատման մեթոդաբանություն (պատճ. կցվում է)

Հղում՝

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/vorak%20mshtaditarkum.PDF

- Տեղեկատվական ապահովման հայեցակարգ (պատճ. կցվում է)
- Համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության համար կիրառվող մեթոդներ և գործիքներ (Ուղեցույց) (պատճ. կցվում է):

Սույն փաստաթղթերը տեղադրված են համալսարանի կայք էջի «Որակի ապահովում» բաժնում, իսկ բնօրինակները պահվում են ԿԲՌՊՆՏ բաժնում:

Այս փաստաթղթերի ներդրումը հնարավորություն տվեց ավելի կատարելագործելու Համալսարանի կառավարման համակարգը և Որակի կառավարման սկզբունքով քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարության իրականացում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 3.

Ֆինանսների տնօրինման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում:

Քայլ 3.1. Ֆինանսների տնօրինման քաղաքականության մշակում և հաստատում:

Քայլ 3.2. Ֆինանսների տնօրինման ընթացակարգի մշակում և հաստատում:

Համալսարանի համապատասխան կառույցների կողմից մշակվեցին և Համալսարանի Գիտական խորհրդի 2015 թ. փետրվարի 9-ի նիստում հաստատվեցին և գործողության մեջ դրվեց «ՀԱԱՀ ֆինանսների տնօրինման քաղաքականություն և ընթացակարգ» և «Ռեսուրսների բաշխման ընթացակարգ» փաստաթղթերը (պատճ. կցվում են):

Քայլ 3.3. Ֆինանսական աուդիտի նշանակման կանոնակարգի մշակում և հաստատում:

Ֆինանսական աուդիտի նշանակման կարգը և ժամանակացույցը Համալսարանում առկա է՝ ներկայացված համապատասխան պետական կառույցների կողմից:

Քայլ 3.4. Ֆինանսական աուդիտի իրականացում և արդյունքների վերլուծում:

Հաստատված կարգին և սահմանված ժամանակացույցին համաձայն, համապատասխան պետական կառույցների կողմից պատշաճ կերպով համալսարանում իրականացվում է ֆինանսական աուդիտ, որի արդյունքները համակողմանի վերլուծվում են և դրանց ցուցանիշներն առկա են:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 4.

ՄԿԾ-ների և համալսարանում իրականացվող գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկավորության հավաքագրման, վերլուծության կիրառումը գնահատող մեխանիզմների մշակում:

Քայլ 4.1. Մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատման մեխանիզմների մշակում և հաստատում:

Քայլ 4.2. Համալսարանում իրականացվող կրթական գործընթացների գնահատման մեխանիզմների մշակում:

Համալսարանի կողմից մշակվեց, 2013 թ. հուլիսի 1-ին Գիտական խորհրդի կողմից հաստատվեց և գործողության մեջ դրվեց «Մասնագիտության կրթական ծրագրերի և որակավորումների արտոնման, հաստատման մոնիթորինգի և պարբերական վերանայման» կանոնակարգը, որի մեջ ներառված են.

- Կրթական ծրագրերի որակի ապահովման հիմնական գործընթացները
- Ծրագրերի մշակման արտոնումը
- Կրթական ծրագրերի հավանության ձեռքբերումը (ներբուհական հաստատում)
- Կրթական ծրագրերի իրականացման որակի մոնիթորինգը
- Կրթական ծրագրերի պարբերական վերանայում
- Որակի ապահովման գործընթացներում ուսանողների մասնակցությունը
- Արտաքին փորձաքննություն
- Մասնագիտության կրթական ծրագրերի նախագծում և մշակում
- ՄԿԾ-ների մոնիթորինգի հաշվետվության կազմման Ձևաթերթ
- ՄԿԾ-ների մոնիթորինգի հանձնախմբի ընդհանուր եզրակացության Ձևաթերթ:

Հղում՝

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/Masnagitakan%20krtakan%20cragrer/krtakan%20cragreri%20artonum.pdf

Այս փաստաթղթերի մշակումն ու ներդրումը համալսարանին հնարավորություն տվեց համակարգված կերպով իրականացնելու համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի իրականացման որակի մոնիթորինգ և պարբերական վերանայում, որի արդյունքում 2014-16 թթ. վերանայվեցին և արմատապես վերափոխվեցին համալսարանում իրականացվող բակալավրային և մագիստրական կրթական ծրագրերը և դասավանդվող դասընթացների առարկայական ծրագրերը:

Քայլ 4.3. Տեղեկատվության հավաքագրման միասնական համակարգի ստեղծում:

Համալսարանի տարբեր ստորաբաժանումների առանձին աշխատակիցներից կազմված հանձնախմբի կողմից մշակվեց, 2015 թ. փետրվարի 6-ին Գիտական խորհրդի կողմից հաստատվեց և գործողության մեջ դրվեց «Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման կանոնակարգը», որը հնարավորություն տվեց համալսարանում իրականացնելու փաստաթղթաշրջանառության արդյունավետ գործընթաց:

2016 թ-ից համալսարանում գործում է տեղեկատվության հավաքագրման միասնական համակարգ:

Քայլ 4.4. Համալսարանում գործող ՄԿԾ-ների և այլ գործընթացների գնահատման մեխանիզմների արդյունավետության վերլուծության իրականացում:

Համալսարանում գործող ՄԿԾ-ների և այլ գործընթացների գնահատման մեխանիզմների արդյունավետության վերլուծությունը շարունակաբար իրականացվում է: Վերլուծության արդյունքները ցույց տվեցին, որ որոշ դեպքերում գնահատման մեխանիզմները արդյունավետ չեն, իսկ որոշ դեպքերում գնահատման մեխանիզմները գործում են արդյունավետ:

Մասնավորապես համալսարանում մասնագիտությունների խոշորացման, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի արմատական վերանայման, մագիստրոսական կրթական ծրագրի տևողության փոփոխության և այլ գործընթացների վերանայումը կատարվեց գործընթացների գնահատման արդյունավետ մեխանիզմների կիրառման շնորհիվ:

Անարդյունավետ գործող գնահատման մեխանիզմները շարունակաբար վերանայվում և կատարելագործվում են:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 5.

Համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության գործընթացի կանոնակարգում, այդ գործոնների ուսումնասիրության մեխանիզմների և գործիքների մշակում

Քայլ 5.1. Համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության համար կիրառվող մեխանիզմների և գործիքների մշակում

Քայլ 5.2. Համալսարանի զարգացման պլանների գնահատման և վերանայման քաղաքականության մշակում և հաստատում

Քայլ 5.3. Համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության արդյունքները ռազմավարական ծրագրում արտացոլող մեխանիզմների մշակում

Համալսարանի կողմից մշակվեց, 2015 թ. փետրվարի 9-ին Գիտական խորհրդի նիստում հաստատվեցին և գործողության մեջ դրվեց «Համալսարանի գործունեության մշտադիտարկում, չափումներ և ռազմավարական գնահատում» և «Համալսարանի ռազմավարական պլանավորում» ընթացակարգերը, որոնցում ներառված են.

- Համալսարանի գործունեության ռազմավարական վերլուծության քայլերը
- Համալսարանի գործունեության ռազմավարական վերլուծության ընթացակարգը
- Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից պլանների իրականացման վերաբերյալ ցուցանիշների հավաքագրման կարգը
- Համալսարանի ռազմավարական զարգացման պլանի իրականացման վերաբերյալ ամփոփիչ հաշվետվության կազմման կարգը
- Տվյալների աղբյուրների ընտրության կարգը
- Տվյալների հավաքման մեթոդներն ու մեխանիզմները
- Տվյալների հավաքման պարբերականության և դրա համար պատասխանատուների որոշման կարգը
- Համալսարանի շահակիցների կարիքների և պահանջների հետազոտման կարգը
- Համալսարանի ներքին և արտաքին միջավայրի գնահատման մեխանիզմները
- Նոր ռազմավարություն, ռազմավարական նպատակների և խնդիրների կատարողականի ցուցիչները
- Համալսարանի նպատակների և պլանների վերաբերյալ բոլոր շահակիցներին տեղեկատվության ապահովման կարգը
- Ռազմավարական ծրագրի մշակման վերաբերյալ որոշման ընդունման կարգը
- Վերլուծության իրականացման մեխանիզմները

- Համալսարանի առաքելության և զարգացման ռազմավարական ուղղությունների շտկման և հաստատման կարգը
- Մշակված նախագծերի վերլուծության և գնահատման ընթացակարգը
- Համալսարանի ռազմավարական պլանի հաստատման և ներդրման կարգը
- Գործընթացների մշտադիտարկման կարգը:

Հղում՝

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/razmavarakan_planavarum.pdf

Բացի այդ մշակվեց, 2016 թ. հունիսի 3-ի Գիտական խորհրդի նիստում (արձ. N 10) հաստատվեց և գործողության մեջ դրվեց <<Համալսարանի գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականությունը>> (պատճ. կցվում է):

Այս փաստաթղթի մշակումն ու ներդրումը հնարավորություն է տալիս համալսարանի գործունեության և բոլոր գործընթացների հստակ պլանավորում, կառավարման և մշտադիտարկման սկզբունքների ու կարգերի սահմանում, կազմակերպում և իրականացում ու համալսարանի գործունեության զարգացում:

Բացի այդ մշակված փաստաթղթերի կիրառումը հնարավորություն է տալիս.

- առավել հաջող կառուցել զարգացման ծրագրի առանցքային նպատակները և խնդիրները,

- զարգացման ծրագրի նպատակները և խնդիրները փոխանցել նպատակային ցուցանիշների (ցուցիչների) տեսքի՝ դրանք քանակապես չափելի դարձնելով,

- զարգացման ծրագրերի միջոցառումները և նախագծերը կապել դրանց վրա ծախսվող ռեսուրսների և զարգացման նպատակների հետ,

- ստանալ կարևոր տեղեկատվություն զարգացման ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ ամբողջությամբ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 6.

Համալսարանի հրապարակային տեղեկատվության տարածման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում:

Քայլ 6.1. Համալսարանի հրապարակային տեղեկատվության տարածման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում:

Քայլ 6.2. Համալսարանի հրապարակային տեղեկատվության տարածման ընթացակարգերի մշակում:

Քայլ 6.3. Հրապարակային մատչելիությունը և օբյեկտիվությունը գնահատող մեխանիզմների մշակում և հաստատում:

Քայլ 6.4. Համալսարանի կողմից տրամադրված որակական և քանակական տեղեկատվության հրապարակումների գնահատման մեխանիզմների արդյու-նավետության վերլուծության իրականացում:

Համալսարանի կողմից մշակվեցին, 2015 թ. փետրվարի 6-ին Գիտական խորհրդի կողմից հաստատվեցին և գործողության մեջ դրվեցին «ՀԱԱՀ տեղեկատվության տարածման քաղաքականությունը» և «Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման կանոնակարգը» (պատճ. կցվում են), որոնցում ներառված են.

- Տեղեկատվական համակարգի տարրերը
- Փաստաթղթաշրջանառության կազմակերպման սկզբունքները
- Փաստաթղթաշրջանառության կազմակերպման կարգը
- Համալսարանի փաստաթղթային ֆոնդի կարգը:

Բացի այդ մշակվեցին, Գիտական խորհրդի նույն նիստում հաստատվեցին և գործողության մեջ դրվեցին «Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման ընթացակարգը» և «Համալսարանի շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման ընթացակարգը» (պատճ. կցվում են):

Այդ փաստաթղթերի կիրառումը հնարավորություն տվեց համալսարանի բոլոր շահակիցներին ապահովել պատշաճ տեղեկատվություն համալսարանի և առանձին ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ, սահմանել տեղեկատվության ապահովման մեթոդները և մեխանիզմները, ստեղծել տեղեկատվության ապահովման միասնական համակարգ, տարանջատել տեղեկատվությունը ըստ օգտագործող-ների խմբերի և արտաքին շահակիցներին տեղեկատվության տրամադրման արդյունքում հետադարձ կապի մեխանիզմների ու գործիքների միջոցով գնահատել իր գործունեության արդյունքները:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 7.

Հրապարակման ենթակա կամ արգելող և ներքին օգտագործման համար (կոնֆիդենցիալ) տեղեկատվությունների կանոնակարգում:

Քայլ 1. Հրապարակման ենթակա տեղեկատվության ճշգրտում և հաստատում:

Քայլ 2. Հրապարակման համար արգելվող տեղեկատվության ցանկի ճշգրտում և հաստատում:

Քայլ 3. Ներքին օգտագործման համար (կոնֆիդենցիալ) տեղեկատվության ցանկի ճշգրտում և հաստատում:

Համալսարանի կողմից մշակված, 2015թ. փետրվարի 6-ին Գիտական խորհրդի կողմից հաստատված և գործողության մեջ դրված «ՀԱԱՀ տեղեկատվության տարածման քաղաքականության» (պատճ. կցվում է) մեջ ներառված են.

- Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրները
- Տեղեկատվական համակարգի տարրերը
- Հրապարակման ենթակա տեղեկատվության ցանկը
- Հրապարակման համար արգելվող տեղեկատվության ցանկը
- Ներքին օգտագործման համար (կոնֆիդենցիալ) տեղեկատվության ցանկը:

«Մասնագիտության կրթական ծրագրեր» չափանիշի շրջանակներում Համալսարանն իր առջև դրված առաջնահերթ խնդիրներ է դիտում հետևյալ հարցերի լուծումը:

- Մասնագիտության կրթական ծրագրերի շարունակական բարելավում
- Ուսումնառության ակնկալվող կրթական վերջնարդյունքներին համապատասխանող մասնագիտության կրթական ծրագրերի կազմում
- Համալսարանում իրականացվող կրթական գործընթացներում ակադեմի-ական ազնվության ապահովում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 1

Մասնագիտությունների կրթական ծրագրերի (ՄԿԾ) խոշորացման իրականացում:

Քայլ 1.1. Համալսարանում իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերի խոշորացման ծրագրի մշակում և հաստատում:

Դեռևս 2012 թ. Համալսարանում մշակվեց և հետագայում գործողության մեջ դրվեց մասնագիտության կրթական ծրագրերի խոշորացման ծրագիր:

Քայլ 1.2. Ագրարային ոլորտի աշխատաշուկայի պահանջներից և ՅՈՒՆԵՍԿՕ-ի սկզբունքներից ելնելով Համալսարանում իրականացվող մասնագիտությունների ցանկի վերանայում և ճշգրտում:

2010-2013 թթ. համակողմանի ուսումնասիրելով ագրարային ոլորտի աշխատաշուկայի պահանջները և ելնելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի սկզբունքներից Համալսարանում վերանայվեց, ճշգրտվեց և հաստատվեց իրականացվող մասնագիտությունների ցանկը:

Մասնավորապես.

«Ագրոնոմիա» և «Բույսերի սելեկցիա, գենետիկա» մասնագիտությունները խոշորացվեցին, միավորվեցին և հաստատվեց «Ագրոնոմիա, բույսերի սելեկցիա, գենետիկա» մասնագիտությունը:

Համալսարանում ներդրվեց և իրականացվում է «Պաշտպանված գրունտի տեխնոլոգիա» մասնագիտությունը:

«Կաշվի և մորթու տեխնոլոգիա» մասնագիտության կրթական ծրագրերը վերանայվեցին և ներդրվեց «Կաշվի և մորթու արտադրանքի տեխնոլոգիա» մասնագիտությունը:

Վերանայվեց «Անասնաբուծություն» մասնագիտության կրթական ծրագիրը և ներդրվեց «Գյուղատնտեսական կենդանիների սելեկցիա, գենետիկա և կենսատեխնոլոգիա» մասնագիտությունը:

«Գյուղատնտեսության մեքենայացում» և «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ» մասնագիտությունները խոշորացվեցին, միավորվեցին և հաստատվեց ու ներդրվեց «Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» մասնագիտությունը:

Վերանայվեց «Հողաբարելավում, հողային և ջրային ռեսուրսների համալիր օգտագործում» մասնագիտության կրթական ծրագիրը հաստատվեց ու ներդրվեց «Հողաբարելավում, հողային և ջրային պաշարների օգտագործում, հիդրոտեխնիկական կառուցվածքներ» մասնագիտությունը:

Վերանայվեց «Կենսագործունեության անվտանգության և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում» մասնագիտության կրթական ծրագիրը և հաստատվեց ու ներդրվեց «Կենսագործունեության անվտանգություն» մասնագիտությունը:

Խոշորացվեցին և միավորվեցին «Փոխադրումների կազմակերպում և կառավարում» և «Ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում» մասնագիտությունների կրթական ծրագրերը և ներդրվեց «Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում» մասնագիտությունը:

Խոշորացվեցին և միավորվեցին «Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում» և «Սննդարդյունաբերության էկոնոմիկա և կառավարում» մասնագիտությունները և ներդրվեց «Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա» մասնագիտությունը:

Վերանայվեցին, խոշորացվեցին և միավորվեցին «Ագրարային քաղաքականության և տեղեկատվության» մասնագիտությունների կրթական ծրագրերը և ներդրվեց «Ագրարային քաղաքականություն, խորհրդատվություն և տեղեկատվություն» մասնագիտությունը:

Վերանայվեց «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մասնագիտության կրթական ծրագիրը և հաստատվեց ու ներդրվեց «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտությունը:

Վերանայվեց «Ֆինանսների կառավարում» մասնագիտության կրթական ծրագիրը և հաստատվեց ու ներդրվեց «Ֆինանսներ» մասնագիտությունը:

Քայլ 1.3. ՀՀ կրթության և գիտության նախարարության մասնագիտության կրթական ծրագրի առաջարկությունների ներկայացում:

Քայլ 1.4. Համալսարանի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի հաստատում:

Համալսարանում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի վերանայումից և ցանկի հաստատումից հետո ՀՀ կրթության և գիտության նախարարություն ներկայացվեց մասնագիտության կրթական ծրագրերի խոշորացման առաջարկություն, որը նախարարությունում քննարկելուց հետո հաստատվեց և այժմ համալսարանը կրթական ծրագրերը իրականացնում է հաստատված նոր ցանկին համապատասխան:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 2.

Մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) պարբերական վերանայման, շարունակական բարելավման, կրթական վերջնարդյունքների կազմման գործընթացի իրականացում:

Քայլ 2.1. ՄԿԾ-ի պարբերական վերանայման քաղաքականության մշակում և հաստատում:

Քայլ 2.2. ՄԿԾ-ի մշակման և հաստատման ընթացակարգի մշակում:

Քայլ 2.3.Նոր կրթական ծրագրի ստեղծման կամ վերանայման հայտի ձևաթերթի մշակում:

Քայլ 2.4. ՄԿԾ-ի մշակման, հաստատման ընթացակարգի մշակում:

Քայլ 2.5. ՄԿԾ-ի մշակման և հաստատման ճանապարհային քարտեզի մշակում:

Քայլ 2.6. ՄԿԾ-ի և որակավորումների արտոնման, հաստատման, մոնիթորինգի և պարբերական վերանայման կանոնակարգի մշակում և հաստատում:

Քայլ 2.7. Կրթական ծրագրի իրականացման մոնիթորինգի կարգի մշակում:

Քայլ 2.8. Կրթական ծրագրի տարեկան մոնիթորինգի հաշվետվություն ձևաթերթի մշակում:

Քայլ 2.9. ՄԿԾ-ի մոնիթորինգի ընթացակարգի մշակում:

Քայլ 2.10. Կրթական ծրագրերի գնահատման ընթացակարգի մշակում:

Քայլ 2.11. ՄԿԾ-ի գնահատման ընթացակարգի մշակում:

Քայլ 2.12. ՄԿԾ-ների պարբերական վերանայման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում:

Համալսարանի կողմից մշակվեց, Գիտական խորհրդի 2013թ. օգոստոսի 31-ի նիստում հաստատվեց և գործողության մեջ դրվեց «Մասնագիտության կրթական ծրագրերի պարբերաբար վերանայման քաղաքականությունը» (պատճենը կցվում է):

Քայլ 2.13. Ակադեմիական ազնվության ապահովման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում:

Համալսարանի Գիտական խորհրդի 2015թ. փետրվարի 9-ի նիստում հաստատվեց և գործածության մեջ դրվեց «Ակադեմիական ազնվության ապահովման քաղաքականությունը և ընթացակարգը» (պատճենը կցվում է):

Այդ փաստաթղթի ներդրումը հնարավորություն տվեց ավելի արդյունավետ պահպանել ակադեմիական ազնվության էթիկայի նորմերն ու պահանջները, համակարգված կերպով կանխարգելել ակադեմիական անազնվության դրսևորումները

և վերջին հաշվով խթանել կրթության որակի բարձրացումը, ինչպես նաև հասակեցնելու ուսանողների և դասախոսների իրավունքներն ու պարտականությունները:

Քայլ 2.14. Նոր կրթական ծրագրեր, առարկաներ և մոդուլներ մշակելու և հաստատելու ընթացակարգի մշակում և հաստատում

Քայլ 2.15. ՄԿԾ-ների պատասխանատուների ընտրության ընթացակարգի մշակում և հաստատում:

Համալսարանի կողմից մշակվեց, Գիտական խորհրդի 2013 թ. հուլիսի 1-ի նիստում հաստատվեց և գործողության մեջ դրվեց «Մասնագիտության կրթական ծրագրերի և որակավորումների արտոնման, հաստատման, մոնիթորինգի և պարբերական վերանայման» կանոնակարգը (պատճենը կցվում է), որում ներառված են.

-ENQA ստանդարտը՝ կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների հաստատման, մոնիթորինգի և պարբերական վերանայման համար

-Կրթական ծրագրերի որակի ապահովման հիմնական գործընթացների նկարագիրը

-Կրթական ծրագրի հավանության ձեռքբերման (ներբուհական հաստատման) կարգը

-Կրթական ծրագրի իրականացման որակի մոնիթորինգի կարգը

-Կրթական ծրագրի հավանության ձեռքբերման (ներբուհական հաստատման) կարգը

-Կրթական ծրագրի իրականացման որակի մոնիթորինգի կարգը

-Կրթական ծրագրերի պարբերական վերանայման ընթացակարգը

-Որակի ապահովման գործընթացներում ուսանողների մասնակցության ապահովման կարգը

-Կրթական ծրագրերի արտաքին փորձաքննության ընթացակարգը

-Մասնագիտության կրթական ծրագրերի նախագծման և մշակման ընթացակարգը

-ՄԿԾ-ի նախագծման և մշակման գործընթացի գրաֆիկական պատկերը (ճանապարհային քարտեզը)

-Նոր կրթական ծրագրի (մասնագիտության) ստեղծման կամ վերանայման հայտի Ձևաթերթը

-Կրթական ծրագրի տարեկան մոնիթորինգի հաշվետվության Ձևաթերթը

-Կրթական ծրագրերի մոնիթորինգի հաշվետվության Զրաթերթը

-Կրթական ծրագրերի մոնիթորինգի հանձնախմբի ընդհանուր եզրակացության Ձևաթերթը:

Համալսարանի կողմից մշակվեց Գիտական խորհրդի 2013 թ. օգոստոսի 31-ի նիստում հաստատվեց և գործողության մեջ դրվեց «Նոր կրթական ծրագրեր,

առարկաներ, մոդուլներ մշակելու և հաստատելու ընթացակարգերը» (պատճենը կցվում է):

Քայլ 2.16. ՄԿԾ-ների և ֆակուլտետային Որակի ապահովման պատասխանատուների ընտրություն և հաստատում:

Համալսարանի ռեկտորի 2016 թ. հունիսի 16-ի N 05/ԱԾ հրամանով նշանակվեցին ՄԿԾ-ների և ֆակուլտետային ՈԱ պատասխանատուների (հրամանի պատճեն կցվում է), որը հնարավորություն տվեց համալսարանում ստեղծելու Որակի ապահովման համակարգ և համակարգված կերպով համալսարանում սկսելու ՄԿԾ-ների վերանայման և բարելավման լայնամասշտաբ գործընթաց:

Քայլ 2.17. ՄԿԾ-ների վերանայման ու բարելավման պլան-ժամանակացույցի մշակում և հաստատում:

2013թ. ուսումնամեթոդական կենտրոնի կողմից մշակվեց և համալսարանի ռեկտորատի կողմից հաստատվեց ՄԿԾ-ների վերանայման ու բարելավման պլան-ժամանակացույցը:

Քայլ 2.18. ՄԿԾ-ների ուսումնառության ակնկալվող արդյունքների համապատասխանող ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխանող ուսումնառության, դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության, դասավանդման և ուսումնառության մեթոդների պարբերաբար արդիականացման քաղաքականության մշակում և հաստատում:

Համալսարանի կողմից մշակվեցին, Գիտական խորհրդի 2015թ. փետրվարի 9-ի նիստում հաստատվեցին և գործողության մեջ դրվեցին հետևյալ փաստաթղթերը.

-«Կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների վերանայման քաղաքականություն»

-«Մասնագիտության կրթական ծրագրերի իրականացման համար անհրա-ժեշտ ռեսուրսային կազմի ապահովման ընթացակարգ»

-«Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն և ընթացակարգ» և

-«Դասավանդման և ուսումնառության ռեսուրսների արդիականացման քաղաքականություն և ընթացակարգ» (պատճենները կցվում են):

Այդ փաստաթղթերի ներդրումը հնարավորություն է տալիս ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխան ընտրել դասավանդման և ուսումնառության մեթոդները և դրանց արդիականացումը, բարձրացնել ուսումնառության, դասա-

վանդման և ընդհանրապես կրթական գործընթացի որակը, ինչպես նաև բարձրացնել ուսանողների կրթական վերջարդյունքների ձեռքբերման որակը:

Քայլ 2.19. Առարկայական ուսումնական ծրագրերի մշակման ուղեցույցի մշակում և հաստատում:

2013 թ. մայիսի 24 –ին (արձանագրություն N 13) Համալսարանի Գիտական խորհրդի նիստում հաստատվեց և գործողության մեջ դրվեց «Առարկայական ուսումնական ծրագրերի մշակման ուղեցույցը», որի պահանջներին համապատասխան 2016թ. ընթացքում վերանայվեցին ըստ մասնագիտությունների համալսարանում դասավանդվող բոլոր առարկաների առարկայական ծրագրերը:

Քայլ 2.20. Դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման ընթացակարգի մշակում և հաստատում:

Քայլ 2.21. Դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման ընթացակարգի մշակում և հաստատում:

Համալսարանի կողմից մշակվեց, Գիտական խորհրդի 2015թ. փետրվարի 9-ի նիստում հաստատվեց «Դասավանդման և ուսումնառության ռեսուրսների արդիականացման քաղաքականությունը և ընթացակարգը», որն ուղղված է դասավանդման և ուսումնառության նյութերի և ռեսուրսների արդիականացմանը, դասավանդողներին ժամանակակից անհրաժեշտ ռեսուրսներով ապահովմանը և ուսումնառության վերջնարդյունքներին հասնելու համար՝ ուսումնառողներին որակյալ կրթությամբ ապահովմանը:

Այս փաստաթղթի ներդրումը հնարավորություն տվեց թարմացնելու, նորացնելու առկա դասավանդման և ուսումնառության նյութերն ու ռեսուրսները և կատարելագործելու ուսումնառության գործընթացը՝ ուսումնառության վերջարդյունքներն ապահովելու նպատակով:

Քայլ 2.22. Նոր կրթական ծրագրեր, առարկաներ և մոդուլներ մշակելու և հաստատելու ընթացակարգերի մշակում:

Համալսարանի Գիտական խորհրդի 2013թ. հուլիսի 1-ի նիստում հաստատվեց և գործողության մեջ դրվեց «Մասնագիտության կրթական ծրագրերի և որակավորումների արտոնման, հաստատման, մոնիթորինգի և պարբերական վերանայման կանոնակարգը», որում ի թիվս այլ դրույթների ներառված են նաև կրթական ծրագրի մշակման արտոնումը, մասնագիտության կրթական ծրագրերի նախագծման և մշակման ընթացակարգը, ՄԿԾ-ի նախագծման և մշակման փուլերը,

տեղեկատվական ապահովումը, գործընթացի գրաֆիկան ներկայացման սխեման և նոր կրթական ծրագրի (մասնագիտության) ստեղծման կամ վերանայման հայտի Ձևաթերթը (կանոնակարգի պատճեն կցվում է):

Բացի այդ մշակվեց և համալսարանի Գիտական խորհրդի 2014թ. փետրվարի 7-ի նիստում հաստատվեց ու գործողության մեջ դրվեց «Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման, վերամշակման ու խոշորացման, արտոնման, փորձաքննության և հաստատման կանոնակարգը» (պատճեն կցվում է), որում ներառված են կրթական ծրագրերի մշակման, վերամշակման և խոշորացման արտոնումը, կրթական ծրագրերի մշակման, վերամշակման և խոշորացման արտոնումը, կրթական ծրագրերի փորձաքննությունը և հաստատումը և նոր կրթական ծրագրեր, առարկաներ ու մոդուլներ մշակելու և հաստատելու ընթացակարգը:

Քայլ 2.23. ՄԿԾ-ների պատասխանատուների և Որակի ապահովման ֆակուլտե-տային պատասխանատուների վերապատրաստում:

Սկսած 2013թ.-ից ՄԿԾ-ների պատասխանատուների և Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուների համար կազմակերպվել և իրականացվել են բազմաթիվ սեմինարներ, դասախոսություններ, ֆոկուս խմբեր և վերապատրաստումներ:

Tempus Govern և Tempus Armenia դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում 2014, 2015 և 2016թթ. իրականացվեցին բազմաթիվ սեմինարներ մասնագիտության կրթական ծրագրերի և դրանց բաղադրիչների արդյունավետ ձևավորման վերաբերյալ:

2016թ. նոյեմբերին համալսարանում եվրոպական փորձագետների մասնակցությամբ իրականացվեց ՄԿԾ-ների և ՈԱ պատասխանատուների և վերապատրաստմանը նվիրված աշխատաժողով, որի ընթացքում ներկայացվեցին Որակավորումների ազգային շրջանակի դրույթները, դասընթացների համար կրթական վերջնարդյունքների ձևակերպման պահանջներն ու սկզբունքները, ՄԿԾ-ի նպատակի և կրթական վերջնարդյունքների ձևակերպման խնդիրները և առանցքային այլ հարցեր:

«Ծրագրի բովանդակությունը, դասավանդման և ուսումնառության մեթոդները, ԿՖԵՀ» թեմայի շրջանակներում ներկայացվեց կրթական վերջնարդյունքներին համապատասխան արդյունավետ դասավանդման և ուսումնառության ձևերն ու մեթոդները:

«Ուսանողների գնահատումը սահմանված չափանիշների օգնությամբ» թեմայով ունկրդիներին ներկայացվեց արդյունավետ գնահատման սկզբունքները և ձևակերպվեցին գնահատման չափանիշները:

Աշխատաժողովի արդյունքում վերապատրաստվեցին 60-ից ավելի դասախոսներ, ծրագրերի և ՈԱ պատասխանատուներ և վարչական աշխատողներ:

Քայլ 2.24. Իրականացնել ՄԿԾ-ների վերանայում և բարելավում ըստ ՄԿԾ-ների վերանայման ու բարելավման ժամանակացույցի:

Քայլ 2.28. ՄԿԾ-ների բարելավում

Քայլ 2.26. Վերանայված ՄԿԾ-ների իրականացում:

«Մասնագիտությունների կրթական ծրագրերի պարբերաբար վերանայման քաղաքականության և ընթացակարգի» հաստատումից ու գործողության մեջ ներդնելուց հետո հետո համալսարանում մեծածավալ աշխատանքներ սկսվեցին ՄԿԾ-ների վերանայման ու բարելավման ուղղությամբ:

Tempus Armenia ծրագրի շրջանակում համալսարանի աշխատակիցները մասնակցեցին ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի մշակման աշխատանքներին: Նույն ծրագրի շրջանակներում համալսարանի աշխատակիցների կողմից Որակավորումների եվրոպական և Ազգային շրջանակների պահանջներին համապատասխան մշակվեց «Գյուղատնտեսություն» ոլորտային շրջանակը, որը եվրոպական փորձագետների և ՀՀ ԿԳ նախարարության դրական եզրակացություններով ներկայացված է հաստատման:

Այդ ծրագրի շրջանակներում բակալավրային և մագիստրոսական կրթական ծրագրերի համար մշակվեց և հաստատվեց «Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա» ծրագրի մասնագիրը, որում ներառված է ծրագրի նպատակները, ծրագրի կրթական վերջնարդյունքները, ծրագրի ուսումնական պլանը, ուսումնական պլանի քարտեզը, գնահատման համակարգը, շրջանավարտների կարիերայի ապագա հնարավորությունները, ծրագրային կողմնորոշիչները և թվով 63 դասընթացների նկարագրիչները:

Մշակված փաստաթղթային փաթեթները տրամադրվել են համալսարանի բոլոր ուսումնական ստորաբաժանումներին համալսարանում իրականացվող մյուս կրթական ծրագրի փաթեթները մշակելու նպատակով:

Այդ աշխատանքներին զուգահեռ մշակվեցին և ներկայացվեցին բակալավրային և մագիստրոսական կրթական բոլոր ծրագրերի կրթական վերջնարդյունքները, որոնց հիման վրա հետագայում կմշակվեն ՄԿԾ-ների փաթեթները:

«Առարկայական ուսումնական ծրագրերի մշակման ուղեցույց»-ին համապատասխան մշակվել են բոլոր մասնագիտությունների գծով առարկայական ծրագրերը՝ հիմնված կրթական վերջնարդյունքների վրա:

Համալսարանի ֆակուլտետների կողմից ՄԿԾ-երի ստեղծման համար մշակված ձևաչափին համապատասխան 2016թ-ի ընթացքում կրթական վերջնարդյունքների հիման վրա մշակվեցին հետևյալ մասնագիտությունների կրթական ծրագրերի փաթեթները՝

- Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
- Բույսերի պաշտպանություն

- Ագրոէկոլոգիա
- Պաշտպանված գրունտի տեխնոլոգիա
- Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում
- Ագրոբիզնես,
- Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա,
- Խմորման արտադրությունների տեխնոլոգիա և գինեգործություն,
- Հողաշինարարություն, հողային կադաստր,
- Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ,
- Անասնաբուծություն:

Համալսարանում իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերի, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի և պրակտիկաների կազմակերպման գործընթացի վերաբերյալ ագրոպարենային ոլորտի հիմնական գործատուների, ընկերությունների և կազմակերպությունների ղեկավարների ու առաջատար մասնագետների մասնակցությամբ 2016թ-ի նոյեմբերի համալսարանում կազմակերպվեցին խորհրդակցություններ, որոնց ժամանակ քննարկման ներկայացվեցին հետևյալ հարցերը.

1. Հայսատանի ազգային ագրարային համալսարանի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի, ոլորտին վերաբերող մասում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության հիմնավորում:

2. Ոլորտի գործող մասնագիտությունների ուսումնական պլանների, մասնագիտական և թողարկող ամբիոններում դասավանդվող առարկաների ցանկի և առարկայական ծրագրերի վերլուծություն, գնահատում և առաջարկությունների ներկայացում:

3. Ապագա մասնագետների գործնական հմտությունների ձևավորման գործող համակարգի (լաբորատոր և գործնական պարապմունքների, ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների կազմակերպում) վերլուծություն և առաջարկությունների ներկայացում:

4. Արտադրությունում աշխատող մասնագետների, ֆերմերների վերապատրաստման և վերաորակավորման գործող համակարգի վերլուծություն և դրա կատարելագործմանն ուղղված առաջարկությունների քննարկում:

5. Ոլորտը որակյալ մասնագետներով ապահովմանն ուղղված գործատուների այլ առաջարկությունների քննարկում:

Քննարկումների արդյունքում գործատուների կողմից կարևոր առաջարկություններ ներկայացվեցին մասնագիտական և թողարկող ամբիոններում դասավանդվող առարկաների ծրագրերի և հատկացված ժամաքանակների վերանայման, ամբիոնների լաբորատոր բազան տեխնիկական և տեխնոլոգիական ժամանակակից միջոցներով համալրման, պրակտիկաների արդյունավետ կազմակերպման, հանրապետության մարզերում համալսարանի դասախոսների կողմից մասնագետների ուսուցողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպման վերաբերյալ:

Դասավանդվող առարկաների առարկայական ծրագրերի վերանայման ու բարելավման նպատակով, համապատասխան ոլորտների գործատուների մասնակցությամբ ստեղծվեցին փորձագիտական խմբեր և 2016թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ագրարային ոլորտի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, ուսանողների և համալսարանի մյուս շահակիցների սպասելիք-ներին համահունչ արմատապես վերանայվեցին և բարելավվեցին բակալավրային և մագիստրոսական կրթական ծրագրերի առարկայական ծրագրերը, ինչը ոչ միայն հնարավորություն տվեց բարելավելու համալսարանում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի որակը, այլ նաև լուրջ նախադրյալներ կստեղծի առաջիկա ծրագրային հավատարմագրումը բարեհաջող իրականացնելու համար:

Հաշվի առնելով նախորդ տարիների փորձը և մագիստրանտների առաջարկները՝ մագիստրոսական կրթական ծրագրի տևողությունը 2 տարուց փոխվեց մեկ տարվա:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 3.

Կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, արբելավման քաղաքականության և իրականացման մեխանիզմների մշակում և հաստատում:

Քայլ 3.1. Ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման քաղաքականության մշակում և հաստատում:

Համալսարանի կողմից մշակվեց, 2016թ. հունիսի 3-ի Գիտական խորհրդի նիստում (արձ. N10) հաստատվեց և գործողության մեջ դրվեց «Կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող վերջարդյունքների վերանայման քաղաքականությունը» (պատճենը կցվում է), որը հնարավորություն տվեց համալսարանում ՄԿԾ-ների և դասընթացների (մոդուլների) նպատակի և ՈՒԱՎ-երի վերանայման միջոցով աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթական ծրագրերի ստեղծում:

Քայլ 3.2. Ուսումնառության գնահատման մոտեցումների առաջավոր փորձի ուսումնասիրում:

Համալսարանի կողմից պարբերաբար իրականացվում է որակի ապահովման համակարգի տարրերի առաջավոր փորձի ուսումնասիրություն, մասնավորապես ուսումնառության գնահատման մոտեցումներին ուղղված փորձի ուսումնասիրություն:

Սանկտ-Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարան (Ռուսաստան), Սանկտ-Պետերբուրգի «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարան (Ռուսաստան), Կուբանի պետական ագրարային համալսարան, Բրայտոնի համալսարան (Անգլիա):

2016 թ.-ին համալսարանի տնտեսագիտական համալսարանի կողմից առաջարկություն է արվել՝ փոփոխություններ կատարել ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգում, որի արդյունքում ֆակուլտետում վերանայվել և վերափոխվել են որոշակի գործոններ և դրանց քաշային միավորները: Տվյալ գործընթացը կրում է շարունակական բնույթ՝ միտված ուսումնառողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի բարելավմանը:

Քայլ 3.3. Արտաքին և ներքին շահակիցների կարիքների ուսումնասիրման մեթոդների մշակում:

Արտաքին և ներքին շահակիցների կարիքների ուսումնասիրման նպատակով Համալսարանի կողմից մշակվել, հաստատվել (գիտական խորհրդի որոշում 06. 02. 2015 թ., արձ. № 9) և գործածության մեջ է ներդրվել «Շահակիցների կարիքների գնահատման կարգ»-ը, որում ներառված են շահակիցների կարիքների գնահատման ցուցիչները, կարիքների բացահայտման մեխանիզմները և գործիքները:

«Շահակիցների կարիքների գնահատման կարգ»-ին համապատասխան համալսարանում իրականացվում են ներքին և արտաքին շահակիցների կարիքների բացահայտում հարցումների միջոցով:

2016 թ.-ին իրականացված հարցման արդյունքում պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների և շրջանավարտների կողմից տրվել են մի շարք առաջարկություններ, որի մեջ է մտնում առարկայական ծրագրերի բովանդակության և ուսանողների գիտելիքի գնահատման համակարգի վերանայումը:

Տվյալ գործընթացը կրում է շարունակական բնույթ ուղղված մասնագիտությունների կրթական ծրագրերի բաղադրիչների բարելավմանը:

Քայլ 3.4. Մասնագիտությունների կրթական ծրագրերի պարբերաբար գնահատման քաղաքականություն, ընթացակարգի և մեխանիզմների մշակում և հաստատում:

Համալսարանի կողմից մշակվեցին, Գիտական խորհրդի 2013թ. մայիսի 24-ի նիստում հաստատվեցին և գործողության մեջ դրվեցին «Կրթական ծրագրերի որակի գնահատման քաղաքականությունը», «Կրթական ծրագրերի որակի գնահատման ընթացակարգը» և «Կրթության որակի կոմպլեքսի կարգը» (պատճենները կցվում են):

Այդ փաստաթղթերի առկայությունը հնարավորություն ընձեռեց.

Ուսումնական ծրագրերի գնահատում

Ուսումնառության ֆորմատիվ և սումատիվ գնահատում

Գնահատման գործընթացում հետադարձ կապի ապահովում

Մասնագիտության կրթական ծրագրերի իրականացման ռեսուրսների վերլուծություն

Գնահատման կառավարում

Գնահատման կազմակերպման որակի ապահովումը և բարելավումը:

Մինչ այդ համալսարանի գիտական խորհրդի 2012թ. օգոստոսի 31-ի նիստում հաստատվել և գործողության մեջ էր դրվել <<Կրթական ծրագրերի իրականացման մոնիթորինգի կարգը>> (պատճեն կցվում է):

Քայլ 3.5. Մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգի մշակում:

Համալսարանի կողմից մշակվեց, Գիտական խորհրդի 2013թ. հունիսի 1-ի նիստում հաստատվեց և գործողության մեջ դրվեց <<Մասնագիտության կրթական ծրագրերի և որակավորումների արտոնման, հաստատման, մոնիթորինգի և պարբերական վերանայման կանոնակարգը>> (պատճեն կցվում է), որում ներառված են <<Կրթական ծրագրերի իրականացման որակի մոնիթորինգի կարգը>>:

Այդ փաստաթղթերը հնարավորություն տվեցին արդյունավետ կերպով մշտադիտարկելու և վերանայելու համալսարանում իրականացվող կրթական ծրագրերը:

ՉԱՓԱՆԻՇ 4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

«Ուսանողներ» չափանիշի շրջանակներում Համալսարանն իր առջև դրված առաջնահերթ խնդիրներ է դիտում հետևյալ հարցերի լուծումը.

- Ագրարային ոլորտի աշխատաշուկայի պահանջներին ու կարիքներին համապատասխան ուսանողների հավաքագրման իրականացում,
- Համալսարանի կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակի շարունակական բարելավման ապահովում,
- Համալսարանի շրջանավարտների զբաղվածության և շրջանավարտների հետ կայուն հետադարձ կապի ապահովում,
- Գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողների պատշաճ ներգրավվածության ապահովում,
- Համալսարանում ուսանողների իրավունքների պաշտպանության ապահովում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 1

Հանրապետության ագրարային ոլորտի մասնագետների պահանջարկի ուսումնասիրում և ուսանողների հավաքագրման ու ընդունելության համակարգի ստեղծում

Քայլ 1.1. Դիմորդների շրջանում մասնագիտական կողմնորոշման իրականացման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում

Համալսարանի կողմից մշակվել է և գիտական խորհրդի կողմից հաստատվել է «ՀԱԱՀ մասնագիտական կողմնորոշման քաղաքականությունը և կարգը» նորմատիվային փաստաթուղթը (գիտական խորհրդի որոշում “06”. 02. 2015 թ. (արձ. № 9)), որում ներառված է *«Մասնագիտական կողմնորոշման մինչհամալսարանական ենթահամակարգ» ենթակետը:*

Հղում՝

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/usanoxneri_ajakcutyun_yndunelutyun.pdf

Սահմանված են համալսարանի կողմից իրականացվող մասնագիտական կողմնորոշման մինչհամալսարանական ենթահամակարգի ուղղությունները, իրականացվող միջոցառումները, ըստ որի համալսարանը պատշաճ մակարդակով իրականացնում է մասնագիտական կողմնորոշում ՀՀ բոլոր տարածաշրջանների դպրոցներում:

Քայլ 1.2. Ուսանողների հավաքագրման և ընդունելության գործընթացների իրականացման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում

Համալսարանը ուսանողների հավաքագրման և ընդունելության գործընթացի կանոնակարգման նպատակով մշակել և գիտական խորհրդի կողմից հաստատել է «ՀԱԱՀ ուսանողների ընդունելության քաղաքականությունը և ընթացակարգը» (գիտական խորհրդի որոշում “03”.06. 2016 թ. (արձ. № 10)):

Հղում՝

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/usanoxneri_ajakcutyun_yndunelutyun.pdf

Քաղաքականության մեջ ամրագրված են համալսարանի ընդունելության համակարգի ռազմավարական նպատակը, ուսանողների ընդունելության քաղաքականության նպատակը և խնդիրները, տվյալ գործընթացի նկարագրությունը:

Ընթացակարգը ներառում է երեք ընթացակարգ՝

- Ընդունելություն բակալավրիատ,
- Ընդունելություն մագիստրատուրա,
- Ընդունելություն ասպիրանտուրա:

«ՀԱԱՀ ուսանողների ընդունելության քաղաքականությունը և ընթացակարգը» դրված է գործածության մեջ:

Քայլ 1.3. Ագրարային համակարգի առանձին ոլորտների մասնագետների պահանջարկի ուսումնասիրում

Համալսարանը Տարածքային կառավարման և զարգացման նախարարության, ՀՀ մարզպետարանների հետ համատեղ (ըստ ուսումնասիրության արդյունքների) յուրաքանչյուր տարի ներկայացնում է հայտ Կառավարություն նպատակային անվճար տեղերի համար:

Տվյալ գործընթացը կրում է շարունանական բնույթ:

Քայլ 1.4. Ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի՝ առանձին մասնագիտություններում ընդգրկված ուսումնառողների շարժի ուսումնասիրում

Համալսարանը յուրաքանչյուր ուսումնական տարի իրականացնում է առանձին մասնագիտություններում ընդգրկված ուսումնառողների շարժի ուսումնասիրություն:

ՀՀ սահմաններում ուսումնառողների շարժի մասին տվյալները պահվում են ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ կենտրոնում, իսկ այլ երկրներ շարժի մասին տվյալները հավաքագրվում են Արտաքին կապերի դեպարտամենտում:

Համալսարանի ուսումնառողների շարժի ցուցանիշները կախված են շարժն ապահովող ծրագրերից և ուսումնառողների օտար լեզուներին տիպապետելու մակարդակից:

<u>Ցուցանիշ 7.5.</u>	<u>2012/13</u>	<u>2013/14</u>	<u>2014/15</u>	<u>2015/16</u>
<u>Արտասահմանում սովորողների թիվը</u>	<u>37</u>	<u>27</u>	<u>37</u>	<u>30</u>

Տվյալ գործընթացը կրում է անընդհատ բնույթ:

Քայլ 1.5. Համալսարանում գործող ուսանողներին, ընտրություն և ընդունելություն իրականացման մեխանիզմների արդյունավետության վերլուծության իրականացում

Ղիմորդների հավաքագրման և ընտրության նպատակով համալսարանում յուրաքանչյուր տարի պլանավորվում են միջոցառումների շարք՝

- ՀՀ ավագ դպրոցների հետ սերտ համագործակցության ապահովում՝ կնքված երկկողմանի պայմանագրերի համաձայն,
- մասնագիտական կողմնորոշման իրականացում ՀՀ տարածաշրջանների դպրոցներում (ՀԱԱՀ մասնագիտական կողմնորոշման քաղաքականության և ընթացակարգին համապատասխան),
- ՀՀ տարբեր տարածաշրջաններից համալսարան այցերի կազմակերպում (բաց դռների օրեր), որոնց ընթացքում ապագա ղիմորդներին ծանոթացնում են համալսարանի գործունեությանը, առկա մասնագիտություններին և կրթական ծառայություններին:

Վերլուծելով 2016թ.-ի ընդունելության արդյունքները ընդունող հանձնաժողովը կատարել է հետևյալ առաջարկությունները.

- Հաջորդ ընդունելության ընթացքում տարբերակված մոտեցում ցուցաբերել այն մասնագիտությունների համար, որտեղ 2016-2017 ուս. տարում առաջացել են թափուր տեղեր:
- Պարբերաբար հանրապետության տարբեր մարզեր գործուղել համալսարանի դասախոսներին՝ ղիմորդների մասնագիտական կողմնորոշման նպատակով: Հատուկ ուշադրություն դարձնել այն մարզերի վրա, որտեղից ղիմորդների թվաքանակը քիչ է՝ կապ ստեղծելով հենակետային վարժարանի հոսքային դասարանների հետ:
- Հատուկ ուշադրություն դարձնել նպատակային ընդունելությանը՝ առավել ուշադրություն դարձնելով գյուղատնտեսական ուղղվածության մարզերի և սահմանամերձ ու բարձր լեռնային գոտիների երիտասարդների ներգրավման հարցերի վրա:

Հղում՝

https://www.anau.am/images/stories/pastatxter/hashvetvutyun/hog_xorhurd%202016.pdf **կես**

1.1.4

Մագիստրատական ծրագրով ուսումնառողների հավաքագրումը և ընդունելությունը կազմակերպվում և իրականացվում է «ՀԱԱՀ ուսանողների ընդունելության քաղաքականության և ընթացակարգում» ներառված «Ընդունելություն մագիստրատուրա» ընթացակարգով:

Մագիստրատուրայի ընդունելությունը իրականացնելու նպատակով համալսարանի մագիստրատուրայի բաժինը հավաքագրում է դիմորդներ համալսարանի ուսանողներից և այլ բուհերից (ըստ մասնագիտությունների):

Ընդունելությունը մագիստրատուրա իրականացվում են բակալավրում ուսանողների կողմից ձեռքբերված ՄՈԳ-ի հաշվին: Մագիստրատուրա կարող են ընդունվել նաև բարձր ՄՈԳ ունեցող այլ բուհերի բակալավրիատի շրջանավարտներ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 2

Մատուցվող կրթական ծառայությունների որակի բարելավման միտված՝ ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և իրականացման մեխանիզմների մշակում և հաստատում

Քայլ 2.1. Ուսումնառողների կրթական կարիքների վերհանման քաղաքականության, մեխանիզմների և ընթացակարգերի մշակում և հաստատում

Համալսարանում ուսումնառողների կրթական կարիքների վերհանման գործընթացի կանոնակարգման և իրականացման նպատակով մշակվել են և գիտական խորհրդի կողմից հաստատվել են հետևյալ նորմատիվային փաստաթղթերը՝

- Ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականությունը (https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/usanoxneri_ajakcutyun_yndunelutyun.pdf) ,
- «Շահակիցների կարիքների գնահատման կարգը», որի մեջ ներառված են ուսանողների կրթական կարիքների գնահատումը, գնահատման մեխանիզմները և գործիքները:

Վերը նշված փաստաթղթերը և գործիքները դրված են գործածության մեջ, ըստ որի համալսարանը պարբերաբար իրականացնում է համալսարանի ուսանողների կարիքների գնահատում: Կարիքների գնահատման արդյունքները ներկայացվում են

հաշվետվության տեսքով («ՀԱԱՀ շահակիցների բավարարվածության մակարդակի մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն»):

Ամփոփ արդյունքներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղման մեջ՝

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/2015-16_hashv.KBRPNT-BAJIN.pdf

Քայլ 2.2. Ուսանողների կրթական կարիքների վերհանման հարցաթերթի մշակում և հարցումների իրականացում

Համալսարանի կողմից մշակված «Շահակիցների կարիքների գնահատման կարգ»-ի և ուսանողների կրթական կարիքների վերհանման հարցաթերթի համաձայն համալսարանի կողմից իրականացվում են ուսանողների կարիքների գնահատում ըստ հետևյալ ուղղությունների՝

- բավարարվածությունը դասընթացից,
- բավարարվածությունը ռեսուրսային բազայից,
- բավարարվածությունը համալսարանի կրթական ծառայություններ մատուցող կառուցվածքային ստորաբանումների գործունեությունից և այլն (https://www.anau.am/index.php?option=com_content&view=article&id=1724&Itemid=145):

Քայլ 2.3. Ուսանողների բացահայտված կրթական կարիքների վերլուծություն և համակարգում

Համալսարանում հարցումների միջոցով ուսանողների բացահայտված կրթական կարիքները մուտքագրվում են SPSS ծրագիր և ենթարկվում են մշակման:

Մշակված տվյալների բազան և կազմված հաշվետվությունները պահվում է Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների բաժնում:

Տվյալ գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Քայլ 2.4. Ուսանողների բացահայտված կրթական կարիքների վերաբերյալ որոշումների կայացում

Համալսարանում ուսանողների կրթական կարիքներին են դասվում՝

- ուսանողների վարձավճարի հետ կապված հարցերը,
- սոցիալական այլ հարցեր,
- ուսանողական կյանքին վերաբերող հարցեր:

Ուսանողների կողմից բացահայտված հարցերը կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, համալսարանի ուսանողական խորհրդի ներկայացուցիչը վեր են հանում ՀԱԱՀ ռեկտորատի նիստում՝ որից յուրաքանչյուրին տրվում է համապատասխան լուծում:

Ուսանողների բացահայտված կրթական կարիքների վերաբերյալ հարցը՝ այլ առանցքային հարցերի հետ մեկտեղ լսվում է համալսարանի գիտական խորհրդի նիստերին, մասնավորապես համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովման, նյութատեխնիկական բազայի նորացման և նորագույն սարքավորումներով համալրման, գնահատման բազմազործոնային համակարգի գործոնների վերանայման հարցերը (https://www.anau.am/images/stories/pastatxter/git.xorhrdi_voroshumner/n1_30.08.2016.pdf):

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 3

Կրթական ծառայությունների որակի բարելավմանը միտված խորհրդատվությունների և լրացուցիչ պարապմունքների համակարգի ստեղծում

Քայլ 3.1. Ֆակուլտետներում խորհրդատվական ծառայությունների համակարգի կատարելագործում

Ֆակուլտետներում խորհրդատվական ծառայությունների համակարգի կատարելագործման նպատակով համալսարանի ֆակուլտետային գիտական խորհուրդներում պարբերաբար լսվում են խորհրդատվությունների կազմակերպման և իրականացման հարցը, կայացվում են որոշումների ուղղված տրամադրվող խորհրդատվությունների կատարելագործմանը:

Համալսարանում խորհրդատվական համակարգի շրջանակներում իրականացվում են համալիր միջոցառումներ՝

- ամբիոններում ուսուցանվող առարկաների շրջանակներում խորհրդատվության տրամադրում ամբիոնի կողմից սահմանված դասախոսների հերթապահության գրաֆիկի համաձայն, որը փակցվում է յուրաքանչյուր ամբիոնի ցուցափեղկում,
- ամբիոններում ուսանողների կողմից կուրսային աշխատանքների կատարման ընթացքում ամբիոնի դասախոսական կազմի կողմից խորհրդատվության տրամադրում,

- ամբիոններում պետական քննություններից և դիպլոմային աշխատանքների պաշտպանությունից առաջ գրաֆիկով սահմանված ակնարկային դասախոսությունների և խորհրդատվությունների կազմակերպում և իրականացում:

Խորհրդատվական ծառայությունների պատշաճ իրականացման նպատակով տվյալ գործընթացները կանոնակարգվում և կազմակերպվում են ֆակուլտետների դեկանատների և համապատասխան ամբիոնների կողմից:

Համալսարանի յուրաքանչյուր ֆակուլտետում գործում է մասնագիտության համակարգող, որը աշխատանքներ է տանում ուսանողների հետ հետևյալ ուղղություններով՝

- մասնագիտական կողմնորոշում,
- համալսարանի գնահատման համակարգին ծանոթացում,
- խորհրդատվություն կրթական այլ այլ հարցերի շուրջ:

Տվյալ գործընթացը կրում է համակարգային բնույթ, կազմակերպվում է ըստ նախապես մշակված և ֆակուլտետի դեկանի կողմից հաստատված պլան-գրաֆիկի:

Մասնագիտության համակարգողների գործունեության վերաբերյալ հարցը պարբերաբար լսվում է ռեկտորատի և գիտական խորհրդի նիստերին, կայացվում գործունեության բարելավմանը ուղղված որոշումներ:

Հղում՝

https://www.anau.am/images/stories/pastatxter/git.xorhrdi_voroshumner/n10_14.03.2017.pdf

Տվյալ գործընթացը յուրաքանչյուր տարի պլանավորվում, իրականացվում է համալսարանի կողմից և կրում է շարունակական բնույթ:

Քայլ 3.2. Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների նկարագրի, նպատակների ու ժամանակացույցի սահմանում և հաստատում

Համալսարանի յուրաքանչյուր ամբիոնի կողմից սահմանված և փաստաթղթավորված են լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների նկարագիրը և նպատակները:

Յուրաքանչյուր ամբիոն լրացուցիչ խորհրդատվական պարապմունքները իրականացնում է ըստ ամբիոններում սահմանված ժամանակացույցի և կատարողների:

Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների կազմակերպման և իրականացման հարցը լսվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին (ամբիոնների քաղվածքներ), կազմվում է խորհրդատվությունների անցկացման ժամանակացույց և փակցվում ամբիոնի ցուցափեղկում՝ ուսանողներին հասանելի լինելու համար:

Տվյալ գործընթացը կրում է համակարգված և շարունակական բնույթ:

Քայլ 3.3. Համալսարանի կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման քաղաքականության մշակում և հաստատում

Համալսարանի կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման գործընթացը կանոնակարգելու նպատակով համալսարանի կողմից մշակվել է «ՀԱԱՀ կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման քաղաքականություն», որը հաստատվել է գիտական խորհրդի կողմից (01.07.2013 թ. արձ. № 14) և ներդրվել գործածության մեջ:

Հղում՝

(https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/usanoxneri_ajakcutyun_yndunelutyun.pdf):

Քաղաքականությունը ներառում է լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների տեսակները, գործունեության նպատակները, պարտավորությունները:

Քայլ 3.4. Խորհրդատվությունների և լրացուցիչ պարապմունքների արդյունավետության գնահատման մեխանիզմների մշակում և հաստատում

Համալսարանի կողմից իրականացվել է ուսանողների կարիքների բացահայտման և գնահատման հարցաթերթիկի վերամշակում, որում ավելացվել է «Խորհրդատվությունների և լրացուցիչ պարապմունքների արդյունավետության գնահատում» կետը:

Որպես խորհրդատվությունների և լրացուցիչ պարապմունքների արդյունավետության գնահատման մեխանիզմ ընդունված է սոց. հարցումը, իսկ գործիք՝ հարցման թերթիկը:

Վերափոխված հարցման թերթիկը պլանավորվում է ներդրնել գործածության մեջ 2017 թ.-ի սեպտեմբերից:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 4

Կարիերայի կենտրոնի գործունեության շրջանակի ընդլայնում

Քայլ 4.1. Ուսումնառողների կարիերային նպաստող ծառայությունների կանոնակարգերի մշակում և հաստատում

Համալսարանի կողմից մշակվել, հաստատվել և գործածության մեջ է դրված ուսումնառողների կարիերային նպաստող ծառայությունները կանոնակարգող հետևյալ փաստաթղթերը՝

- Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի կանոնակարգը,
- «Հասարակությանը լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների տրամադրման քաղաքականությունը և ընթացակարգը» (գիտական խորհրդի որոշում 03 06. 2016 թ. (արձ. № 10)), որում ներառված են նաև Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի գործունեության կանոնակարգումը և գործունեության գնահատման գործիքները:

Քայլ 4.2. Շրջանավարտների հետ հետադարձ կապի մեխանիզմների և գործիքների մշակում և հաստատում

Համալսարանը մշակել և հաստատել շրջանավարտների հետ հետադարձ կապի մեխանիզմներ և գործիքներ, որոնց միջոցով կազմակերպում և իրականացնում է հարցումներ շրջանավարտների շրջանում:

Համալսարանի աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժինը Hen-Gear նախագծի շրջանակներում իրականացնում է հարցումներ շրջանավարտների շրջանում, որի արդյունքները ներկայացվում են ամփոփ տեսքով:

Հղում՝ (<https://www.anau.am/hen-gear/>):

ՀԱԱՀ Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի կայք էջում (<http://career.anau.am/>) առկա է հետադարձ կապի ապահովման գործիք, որի միջոցով շրջանավարտը կարող է կապ հաստատել տվյալ կառույցի հետ՝ աշխատանքի տեղավորման և այլ հարցերի շուրջ խորհրդատվություն ստանալու համար:

Քայլ 4.3. Կարիերայի զարգացման գործընթացներ իրականացնող, արդյունավետ գործող ենթակառուցվածքի ստեղծում

Համալսարանում առկա է աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժինը, որն առաջնորդվելով համապատասխան կանոնակարգով (Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի կանոնակարգ) իրականացնում է իր գործառույթները:

Վերջին 2 տարիների ընթացքում բաժնի արդյունավետ աշխատանքի համար ստեղծվել է առանձին կայք էջ (<http://career.anau.am/>), որում գետեղված է կարիերային վերաբերող

բազմաբնույթ տեղեկատվություն, մասնավորապես ուսանողը և շրջանավարտը կարող են կատարել հայտերի լրացում՝ գործատուների կողմից դիտելու համար, առկա են ռեզյումեների գրելու ձևեր, թափուր աշխատատեղերի հայտարարություններ և այլն: Բաժինը վարում է նշված կայք էջը, որում առկա է կարիերայի ուղեցույցը, որը ներառում է ուսանողին և շրջանավարտին անհրաժեշտ տեղեկատվությունը հետևյալ խորագրով՝

- ինքնաճանաչում,
- առաջին քայլեր աշխատանք որոնելիս,
- ինչպես դիմել գործատուին,
- հարցազրույց,
- կարիերայի տեղեկագիր:

Բաժինը պարբերաբար մասնակցում է կրթական ոլորտի EXPO-ներին՝ ներկայացնելով համալսարանի մասնագիտությունները, ուսանողների կարիերային ուղղված գործընթացները:

Բաժինը իրականացնում է online հրացումներ շրջանավարտների շրջանում (<https://www.anau.am/hen-gear/>):

Քայլ 4.4. Ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետության վերլուծության իրականացում
--

Համալսարանի կողմից պարբերաբար իրականացվում են հարցումներ ուղղված ուսանողների կարիքների բացահայտմանը և գնահատմանը, որոնք ներառում են ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետության գնահատումը:

Հղում՝ (https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/harcumneri_anketaner/SQ.pdf):

Հարցումների արդյունքները ներկայացվում են հաշվետվությունների տեսքով:

Ըստ 2016 թ.-ին իրականացված հարցման Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի գործունեությունից տեղյակ են հարցվածների 38.89 %-ը, որոնցից 56.82 %-ը գնահատել են կառույցի գործունեությունը լավ և գերազանց:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 5

Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողներին ներգրավման համակարգված գործընթացի իրականացում

Քայլ 5.1. Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների մասնակցության ապահովման քաղաքականության և ընթացակարգի մշակում և հաստատում

Համալսարանը գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների մասնակցության ապահովման նորատիվային փաստաթուղթը ստեղծելու նպատակով վերանայել և վերամշակել է «ՀԱԱՀ ուսանողական գիտական ընկերության կանոնադրությունը», որը ներառում է ուսանողական գիտական ընկերության (ՈԻԳԸ) նպատակը և խնդիրները, ինչպես նաև գործունեությունը կարգավորող նորմատիվային այլ հիմքերը: ՀԱԱՀ ուսանողական գիտական ընկերության կանոնադրության համաձայն Ուսանողական գիտական ընկերության հիմնական նպատակն է աջակցել, նպաստել ՀԱԱՀ ուսանողների և մագիստրանտների կրթական, գիտական, հետազոտական, ստեղծագործական գործունեությանը, ինչպես նաև կազմակերպել ու համակարգել այդ գործունեությունը:

Համալսարանի ՈԻԳԸ-ի կողմից իրականացվում են հետևյալ գործառնություններ՝

- կրթական, գիտական և հետազոտական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների սատարում, կազմակերպում և իրականացում,
- ուսանողական գիտաժողովների, կոնֆերանսների, սեմինարների, և այլ կրթական ու գիտական ուղղվածություն ունեցող միջոցառումների կազմակերպում,
- ուսանողների գիտական, հետազոտական աշխատանքների հրատարակում,
- ուսանողներին ներգրավում կրթական, գիտական խմբերում և ծրագրերում,
- միջհամալսարանական կրթական և գիտական կապերի հաստատում:

Սույն կանոնադրության հիման վրա համալսարանի ՈԻԳԸ-ը ֆակուլտետային պատասխանատուների հետ միասին ապահովում է ուսանողների մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքներում: Արդյունքները յուրաքանչյուր ուս. տարում ներկայացվում են գիտական կոնֆերանսին:

Հղում՝ <https://www.anau.am/hy/student-life/2011-06-17-11-51-35>

Քայլ 5.2. Ուսումնական և գիտահետազոտական գործունեությունների շաղկապման գործընթացի մշտադիտարկման համար անհրաժեշտ փաստաթղթերի մշակում

Համալսարանի կողմից մշակվել և գիտական խորհրդի կողմից հաստատվել է «Ուսումնական և գիտահետազոտական գործունեության մշտադիտարկման ինֆորմացիոն քարտեզը և ցուցանիշները» (01.07.2013 թ. (արձանագրություն № 14)) ըստ որի իրականացվում է անհրաժեշտ տվյալների հավաքագրում:

Համալսարանի կողմից մշակվել և գիտական խորհրդի կողմից հաստատվել է «Գիտահետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման քաղաքականությունը և ընթացակարգը» (“03”. 06. 2016 թ. (արձ. № 10))

Քայլ 5.3. Ամբիոններին կից ուսանողական գիտական խմբակներում ուսանողների ներգրավվածության ընդլայնում

2010 թ.-ից սկսած համալսարանը որդեգրել է ամբիոններին կից ուսանողական գիտական խմբակների շրջանակները տարեց տարի ընդլայնելու քաղաքականություն:

Համալսարանում բոլոր ամբիոններին կից գործում են ուսանողական գիտական խմբակներ, որոնցում ընդգրկված ուսանողները ակտիվորեն մասնակցում են ամբիոնական, ֆակուլտետային և համալսարանական ուսանողական զեկուցումներին:

2012 թ.-ի հետ համեմատած 2016 թ.-ի դրությամբ ուսանողական գիտական խմբակներում ներգրավված ուսանողների թվաքանակը ավելացել է շուրջ 12%-ով:

Չնայած ուսանողների ակտիվ ներգրավվածությանը տվյալ գործընթացում՝ նրանց կողմից ներկայացված հետազոտական աշխատանքների տպագրության գործընթացը բավարար մակարդակ դեռ չի ապահովում:

Քայլ 5.4. Համալսարանի մագիստրանտների և ասպիրանտների՝ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվածության բարձրացման մեխանիզմների մշակում

Համալսարանի ֆակուլտետների դեկանների և մասնագիտական ամբիոնների կողմից պարբերաբար տարվում են աշխատանքներ՝ գիտահետազոտական աշխատանքներում մագիստրանտների և ասպիրանտների ներգրավվածության բարձրացումը ապահովելու համար:

Ցուցանիշ/Ուս. տարի	2012/13	2013/14	2014/15	2015/16
Տվյալ ուս. տարում գիտական թեմաներում և գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված առկա և հեռակա ուսուցման ասպիրանտուրայի և մագիստրատուրայի ուսանողների թիվը	18	29	44	42

Համալսարանի գիտական խորհրդի կողմից որոշում է կայացվել (05.04.2017 թ. արձ. 12) ավելացնել ֆինանսավորվող և նախաձեռնողական ծրագրերում ընդգրկված ուսանողների, մագիստրանտների և ասպիրանտների թվաքանակը, այն հասցնելով կատարողների 25%:

Քայլ 5.5. Համալսարանի գիտահետազոտական գործընթացներում ուսումնառողների ակտիվ մասնակցությունն ապահովող արդյունավետ համակարգի ստեղծում

Սույն կետի ավարտը 2017 թ.-ի սեպտեմբեր ամիսն է:

Քայլ 5.6. Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության արդյունավետության վերլուծության իրականացում

Համալսարանը պարբերաբար կազմակերպում է ուսանողների կարիքների բացահայտում և գնահատում, մասնավորապես գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության արդյունավետության վերլուծության իրականացում: Արդյունքները ներկայացվել են հաշվետվության տեսքով:

Հղում՝ https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/harcumneri_anketaner/SQ.pdf

Ըստ 2016 թ.-ի կատարված հարցումների արդյունքների ուսանողների 41.23%-ը տեղյակ է Ուսանողական գիտական ընկերության գործունեությունից, որոնցից 61.1%-ը գործունեությունը գնահատել են լավ և գերազանց:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 6

Ուսանողների իրավունքների պաշտպանությունը միտված պատասխանատու մարմինների աշխատանքների բարելավում

Քայլ 6.1. Ուսումնառողների իրավունքներն արտացոլող փաստաթղթի մշակում և հաստատում

Ուսումնառողների իրավունքները նորմատիվորեն կանոնակագրելու նպատակով Համալսարանի կողմից 2016 թ.-ին վերամշակվել, հաստատվել և գործածության մեջ է դրվել «Ուղեցույց առաջին կուրսի ուսանողների համար», որում ամրագրված են ուսանողների հիմնական իրավունքներն և պարտականությունները, գնահատման համակարգը և տեղեկատվություն համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության մասին:

Հղում՝ https://www.anau.am/images/stories/contentpic/artaqinkaper/uxecuyc_usanogh.pdf

«Ուսանողների իրավունքները և պարտականությունները» նաև ամրագրված են յուրաքանչյուր ուսանողի ստուգման գրքույկում:

Քայլ 6.2. Ուսանողական խորհրդի կանոնադրության մշակում և հաստատում

Համալսարանի կողմից մշակվել, հաստատվել և գործածության մեջ է դրվել «ՀԱԱՀ ուսանողական խորհրդի կանոնադրությունը», որում ամրագրված են ուսանողական խորհրդի կառուցվածքը, պարտականությունները և իրավունքները:

Հղում՝ https://www.anau.am/images/stories/Kanonakarger/us.xorhrdi_kanonakarg2012.pdf

Քայլ 6.3. Վարչական կազմի կողմից ուսանողների հավելյալ օժանդակման և ուղղորդման կարգի մշակում և հաստատում

Համալսարանի կողմից մշակվել, հաստատվել և գործածության մեջ է դրվել «Վարչական կազմի կողմից ուսանողների հավելյալ օժանդակման և ուղղորդման կարգ» (գիտական խորհրդի որոշում 01. 07. 2013 թ. (արձ. № 14):

Նորմատիվային փաստաթղթում ամրագրված են ՀԱԱՀ վարչական կազմի կողմից ուսանողների հավելյալ օժանդակման և ուղղորդման նպատակը և կատարվող աշխատանքների ուղղվածությունները:

Հղում՝

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/usanoxneri_ajakcutyun_yndunelutyun.pdf

Քայլ 6.4. Ուսանողների իրավունքներով և բողոքներով զբաղվող մարմինների գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերի մշակում և հաստատում

Համալսարանի կողմից մշակվել, հաստատվել և գործածության մեջ է դրվել ուսանողների իրավունքներով և բողոքներով զբաղվող մարմինների գործունեությունը կանոնակարգող նորմատիվային փաստաթուղթ՝ ՀԱԱՀ ուսանողական խորհրդի կանոնադրությունը, որը հաստատվել և ներդրվել է գործածության մեջ:

Համալսարանում առկա է «ՀԱԱՀ ուսանողների գիտելիքների գնահատման բողոքարկման կարգը», որում որոշակիորեն ամրագրված են ուսանողների կողմից գնահատականի բողոքարկման դեպքում իրավասու մասմիներին գործողությունները (փաստաթղթի 6-10 կետեր):

Քայլ 6.5. Ուսանողների գիտելիքների գնահատման բողոքարկման ընթացակարգի մշակում և հաստատում

Համալսարանի կողմից մշակվել է «ՀԱԱՀ ուսանողների գիտելիքների գնահատման բողոքարկման կարգ», որում սահմանվում են, թե որ դեպքերում ուսանողը իրավունք ունի բողոքարկելու իր գնահատականը:

Նորմատիվային փաստաթուղթը հաստատվել է գիտական խորհրդի կողմից և ներդրվել գործածության մեջ:

Ուսանողներին հասանելի լինելու նպատակով «ՀԱԱՀ ուսանողների գիտելիքների գնահատման բողոքարկման կարգ»-ը տեղադրվել է համալսարանի կայք էջում:

Հղում՝

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/usanoxneri_ajakcutyun_yndunelutyun.pdf

Քայլ 6.6. Ուսումնառողների իրավունքների պաշտպանության համար համալսարանում գործող պատասխանատու մարմինների աշխատանքների արդյունավետության վերլուծության իրականացում

Համալսարանում պարբերաբար իրականացվում են ուսանողների շրջանում հարցումներ, որոնք ներառում են Ուսումնառողների իրավունքների պաշտպանության համար համալսարանում գործող պատասխանատու մարմնի (ուսանողական խորհրդի) աշխատանքների արդյունավետության գնահատումը: Իրականացված հարցումները ներկայացվում են հաշվետվության տեսքով և ներկայացվում Ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտորին:

Ըստ վերջին հարցումների արդյունքների (2016 թ.) հարցված 810 ուսանողներից 507-ը (62.6 %) պատասխանել են, որ համալսարանի ուսանողական խորհուրդը հասանելի է ուսանողներին:

«Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ» չափանիշի սահմաններում Համալսարանն իր առջև դրված առաջնահերթ խնդիրներ է դիտում հետևյալ հարցերի լուծումը.

- Մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացումն ապահովող՝ երիտասարդ կադրերով համալրված պրոֆեսորադասախոսական կազմի ապահովում,
- Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողությունների շարունակական կատարելագործման, որա-կավորման բարձրացման և մասնագիտական առաջընթացի ապահովում,
- Որակի մշակույթի ձևավորմանը միտված վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի ապահովում:

1. Գործողության նկարագիր՝ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի երիտասարդացման իրականացում:

Քայլեր՝

1.1. Համալսարանի ՊԴԿ-ի երիտասարդացման ծրագրի մշակում և հաստատում

1.2. Ստաժոր- դասախոսների համակարգի զարգացում:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության հաջողության գրավականներից է դասախոսների կայունության և երիտասարդացման գործընթացի երաշխավորումը, ինչն էլ ՄՈՒՀ-ի կողմից ամրագրվել է որպես բարելավմանը միտված վերջնարդյունքի ցուցիչ: Այս առումով համալսարանը սահմանել և գիտական խորհրդում հաստատել է «Ակադեմիական աշխատակազմի ներգրավման և կայունության ապահովման» քաղաքականությունն ու ընթացակարգը (03. 06. 2016 թ., արձ. № 10) , որի նպատակն է առավել հստակեցնել առանցքային սկզբունքները և հիմնախնդիրները: Քաղաքականությամբ ամրագրված են նաև կայունության ապահովման հիմնական գործընթացները, պատասխանատուները, ՊԴԿ-ի դերակատարումը համալսարանի գիտակրթական ոլորտներում բարեփոխումներ իրականացնելու, որոշումներ կայացնելու գործընթացում: Ընթացակարգում սահմանված են աշխատակիցների շրջանում մոտիվացման բարձրացման, կադրային հոսունության կանխման դրույթները: Ակնկալվում է, որ սույն քաղաքականության և ընթացակարգի գործածությունը կնպաստի համալսարանի գիտակրթական գործունեության արդյունավետության բարձրացմանը, ակադեմիական աշխատակազմի արտահոսքի կանխմանը և կօժանդակի ռազմավարական նպատակների իրականացմանը:

Թեև համալսարանը երաշխավորում է սահմանած վերջնարդյունքի՝ ՊԴԿ-ի կայունության ապահովվածությունը, որի գրավականն այն է, որ 2014-2017 ուս. տարիներին գործող կադրային ներուժը 624-636 է, որոնցից 92-93%՝ հիմնական հիմունքներով, այնուամենայնիվ, առ 27.04.2017թ.-ը դասախոսական ներուժի արտահոսքի հետևանքով դիտարկվում է անկում՝ 613: Առավելագույն ապահովվածություն է արձանագրվում «Ագրոնոմիական»՝ 122, իսկ նվազագույնը՝ 58 «Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուժական» ֆակուլտետներում: ՀԱԱՀ-ի ՊԴ կազմը ունի մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան որակավորումներ, իսկ դասախոս/ուսանող հարաբերակցությունը նշված ժամանակահատվածում 1/13-1/14 է:

Ուշագրավ է, որ համալսարանը բարելավմանը միտված պլան-ժամանակացույցում ՊԴԿ-ի երիտասարդացման իրականացման նպատակով վերջնարդյունքի ցուցիչ է սահմանել տարեկան 15-20 երիտասարդ կադրերով համալրումը: Այս առումով հարկ է մատնանշել, որ թեև 2014-2017 թ. ժամանակահատվածում ՀԱԱՀ-ն համալրվել է 61 երիտասարդ կադրային ներուժով, առավելագույն ցուցանիշ է արձանագրվել 2015-2016 ուսումնական տարում՝ 26 դասախոս, այդուհանդերձ, ակնհայտ է, որ ներհոսքին

գուզընթաց համալսարանում դիտարկվում է նաև արտահոսք, որի պատճառները, հավանաբար, սոցիալական հիմքեր ունեն: Վերոնշյալ ժամանակահատվածում ՀԱԱՀ-ից ազատված երիտասարդ դասախոսների թվաքանակը՝ 45 է, ընդ որում առավելագույն ցուցանիշ է գրանցվել 2014թ.-ին: Ուշագրավ է, որ առ 27.04.2017թ.-ը ՀԱԱՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմը 613 է, որից 99՝ երիտասարդ դասախոսներն են (16%), ընդ որում, երիտասարդ կադրային ներուժով (մինչև 35 տարեկան) առավել ապահովված է «Տնտեսագիտական» ֆակուլտետը (28), իսկ «Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուժական» ֆակուլտետը երիտասարդ կադրերով առհասարակ ապահովված չէ (0): Թեև ՀԱԱՀ-ն որդեգրել է կադրային ներուժի երիտասարդացման քաղաքականություն, այդուհանդերձ, համադրելով ներհոսքի և արտահոսքի տվյալները, կարելի է փաստել, որ ՄՈՒՀ-ում երիտասարդ մասնագետներով համալրումը դեռևս փաստացի ունի դանդաղ առաջընթաց:

Համալսարանը սահմանել և 2016թ.-ին գիտական խորհրդում հաստատել է (18.07.2016թ, արձ. 13) «Ստաժոր-դասախոսի» կանոնակարգը, որի ներդրման նպատակը՝ ամբիոնները երիտասարդ գիտամանկավարժական կադրերով համալրումն է և սերնդափոխությունը բնականոն կարգով իրականացնելը: Ստաժոր-դասախոսի գործունեության ընդհանուր դրույթները, իրավունքներն ու պարտականությունները ամրագրված են սույն կանոնակարգով: Սույն կանոնակարգի նորաստեղծ լինելը դեռևս հնարավորություն չի ընձեռում վերլուծելու համակարգի զարգացումը: Համալսարանը ակնկալում է, որ կանոնակարգի գործածությունը կնպաստի ՄՈՒՀ-ի երիտասարդացմանը, առ այն, որ, համատեղելով փորձառու մասնագետների կարողությունները և սկսնակ երիտասարդների մտավոր ճկունությունը, կձևավորվի մի համակարգ, որը կնպաստի մատուցվող կրթական ծառայությունների որակի բարելավմանը, մեթոդաբանության առավել արդիականացմանը:

Վերջնարդյունքներ և գնահատման ցուցիչներ՝

- համալսարանի ՊԴԿ-ի կայունության և երիտասարդացման ապահովում,
- համալսարանի դասախոսական կազմի երիտասարդացման կայուն գործող համակարգ,
- համալսարանի դասախոսական կազմի երիտասարդացմանն ուղղված մշակված, հաստատված և արդյունավետ գործող ծրագրի առկայություն,
- համալսարանի դասախոսական կազմի տարեկան 15-20 երիտասարդ դասախոսներով համալրում:

2. *Գործողության նկարագիր՝ անհրաժեշտ որակավորումներ ունեցող ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում:*

Քայլեր՝

2.1. ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և ազատման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում

Բարելավմանը միտված սույն քայլի համար պատասխանատու մարդկային ռեսուրսների կողմից մշակվել և 03.06. 2016 թ-ին (գիտական խորհրդի արձանագրություն թիվ 10) ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատվել են ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և ազատման քաղաքականությունն ու ընթացակարգը: Նորմատիվային փաստաթղթում սահմանված է քաղաքականության գերակա նպատակը, խնդիրները, իրականացվող միջոցառումները, իրավասություններն ու պատասխանատվությունը: Քաղաքականության իրականացումը պետք է երաշխավորի պրոֆեսիոնալ աշխատակիցներով համալրումը և աշխատանքային պարտականությունները չկատարող անձնակազմի ազատումը աշխատանքից: Ընթացակարգում ամրագրված են աշխատանքի ընդունման (ՊԴԿ-ի դեպքում՝ մրցութային, ուսումնաօժանդակ անձնակազմի՝ նշանակման) և ազատման կանոնները և կարգը, հիմնական գործողությունները, պատասխանատվություններն ու իրավասությունները:

ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և ազատման կարգը սահմանված է նաև ՀԱԱՀ-ի ներքին կարգապահական կանոններում (18.07.2016թ., արձ. 13):

Սույն քաղաքականության և ընթացակարգերի առկայությունը և հստակ սահմանումները կնպաստեն համալսարանում արդեն իսկ գործող ՀՀ աշխատանքային օրենսդրության և ՀԱԱՀ-ի կանոնադրության համապատասխան կադրերի ընդունման և ազատման գործընթացի կատարելագործմանն ու առավել կանոնակարգմանը:

2.2. ՊԴԿ-ը երիտասարդ դասախոսներով համալրման քաղաքականության մշակում և հաստատում

Համալսարանում մշակվել և գիտական խորհրդի կողմից հաստատվել է «Պրոֆեսորադասախոսական կազմի երիտասարդ դասախոսներով համալրման» քաղաքականությունը (03.06.2016թ., արձ. № 10), գերակա նպատակը՝ երիտասարդ դասախոսների և գիտաշխատողների մասնագիտական աճի և ակադեմիական զարգացման աջակցման պայմանների ապահովումը և գիտակրթական մշակույթի ամրապնդումն է: Քաղաքականության մեջ սահմանված են նպատակի հիմնախնդիրները, գործընթացի իրականացման քայլերը, երիտասարդ կադրերին ներկայացվող պահանջները: Թեև պրոֆեսորադասախոսական կազմի երիտասարդ կադրերով համալրումը մշտապես եղել է համալսարանի գերակա խնդիրներից մեկը, այդուհանդերձ, քաղաքականության մշակումը կօժանդակի կադրային քաղաքականության զարգացմանը, կադրային ռեզերվի ընդլայնմանը և երիտասարդ

դասախոսների մասնագիտական առաջընթացի առավել համակարգված և կանոնակարգված իրականացմանը:

ՀԱԱՀ-ի ՊԴԿ-ը երիտասարդ կադրերով համալրման գործընթացն առավել օժանդակելու և համակարգելու միտումով 2017թ.-ին մշակվել է «Սկսնակ դասավանդողների խնամակալության (մենթորության)» քաղաքականության և կարգի նախագիծը, որը դեռևս առաջարկությունների քննարկման և բարելավման փուլում է:

2.3. Կրթական ծրագրերի նպատակներին ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական որակների համապատասխանության վերլուծության իրականացում:

ՀԱԱՀ-ում յուրաքանչյուր կրթական ծրագրի համար գործում և ընտրվում է մասնագիտական որակների պահանջներին համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմ, ինչը թույլ է տալիս փաստել, որ համալսարանում հաշվի են առնվում դասավանդողների մասնագիտական ուղղվածությունը, որակները, կոմպետենցիաները և հմտությունները: Հարկ է արձանագրել, որ առ 27.04.2017թ-ը որ ՄՈՒՀ-ի դասախոսական կազմի շուրջ 55% (613-ից 336-ը) ձևավորված է սեփական կադրային ռեսուրսներից, իսկ մնացածը կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան այլ համալսարանների շրջանավարտներն են՝ ԵՊՀ (20%), պոլիտեխնիկական (5%), լեզվաբանական (4%), մանկավարժական (3,3%), ՖԿՀՊԻ (1,5%) և այլն : Վերոնշյալ տվյալները այն փաստի վկայությունն են, որ համալսարանում կարևորվում և լիարժեք կիրառվում է յուրաքանչյուր կրթական ծրագրի նպատակների իրականացման համար անհրաժեշտ ՊԴԿ-ով ապահովության գործընթացը, իսկ գործող դասախոսական կազմն ունի մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան որակավորում: Սույն եզրակացությունը հիմնված է նաև համալսարանում գործող դասախոսական կազմի մասնագիտական կրթության, որակավորման, գիտական աստիճանի և դասավանդվող առարկաների վերաբերյալ առկա փաստացի տվյալների վրա:

Ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրությունն համալսարանում իրականացվում է ելնելով կրթական ծրագրերի առանձնահատկություններից: Մասնագիտական որակների գնահատման միտումով համալսարանում մշակվել է ուսումնաօժանդակ և ուսումնական գործընթացը սպասարկող կազմի ատեստավորման թերթիկ, գնահատում է կրթության համապատասխանությունը զբաղեցրած հաստիքին, սպասարկվող բնագավառում գիտելիքների մակարդակը, մասնակցությունը ամբիոնի գիտական, հասարակական աշխատանքներին: Ատեստավորման գործընթացն ամփոփվում է հանձնաժողովի եզրակացությամբ և առաջարկությամբ:

Վերջնարդյունքներ և գնահատման ցուցիչներ՝

- Անհրաժեշտ որակավորումներ ունեցող երիտասարդ կադրերով համալրված պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ապահովում,

- կրթական ծրագրերի նպատակներին պրոֆեսորադասախոսական և ուսումնառական կազմի որակների համապատասխանության վերաբերյալ վերլուծություն,
- պրոֆեսորադասախոսական և ուսումնառական կազմի աշխատանքի ընդունման և ազատման մշակված, հաստատված և գործածության մեջ դրված հստակ քաղաքականության և ընթացակարգերի առկայություն,
- պրոֆեսորադասախոսական կազմը երիտասարդ կադրերով համալրման մշակված, հաստատված և գործածության մեջ դրված հստակ քաղաքականության առկայություն,
- կրթական ծրագրերի նպատակներին պրոֆեսորադասախոսական և ուսումնառական կազմի որակների համապատասխանության համապարփակ վերլուծության արդյունքների առկայություն:

3. *Գործողության նկարագիր*՝ մասնագիտական կրթության արդյունավետությանը միտված՝ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հատուկ պահանջների սահմանում:

Քայլեր՝

- 3.1. Ըստ կրթական ծրագրերի ՊԴԿ-ի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների սահմանում
- 3.2. Մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների վերանայման քաղաքականության մշակում և հաստատում:

Համալսարանի կողմից մշակված է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման ձևաթերթ («Նոր կրթական ծրագրի (մասնագիտության) ստեղծման կամ վերանայման հայտի ձևաթերթ»

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/Masnagitakan%20krtakan%20cragrer/krtakan%20cragreri%20artonum.pdf), որում առկա է կրթական ծրագրերում ՊԴԿ-ի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների վերաբերող («Դասախոսական ռեսուրսները») ենթակետը:

Համալսարանի կողմից Tempus Armenia ծրագրի շրջանակներում 2016 թ.-ին մշակվել է «Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա» մասնագիտության կրթական ծրագիրը, որում ներառված են ՊԴԿ-ի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները:

Տվյալ ՄԿԾ-ին համապատասխան համալսարանում մշակվում են այլ մասնագիտություններով կրթական ծրագրեր, որոնցում նույնպես արտացոլվելու են ՊԴԿ-ի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները:

Տվյալ գործընթացը շարունակական է, քանի որ որոշակի շրջափուլից հետո ՊԴԿ-ի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները ենթարկվելու են վերանայման և վերափոխման:

Վերջնարդյունքներ և գնահատման ցուցիչներ՝

- Անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող ՊԴԿ-ով ՄԿԾ-ների ապահովում,
- ՊԴԿ-ի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների ապահովում,
- ըստ կրթական ծրագրերի ՊԴԿ-ի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ սահմանված պահանջների առկայություն,
- մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների վերանայման մշակված, հաստատված և գործածության մեջ դրված հատուկ քաղաքականության առկայություն:

4. *Գործողության նկարագիր՝ դասախոսական կազմի պարբերաբար գնահատման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում:*

Քայլեր՝

4.1. *Դասախոսների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում*

ՀԱԱՀ-ն մշակել և 2015 թ.-ին գիտական խորհրդում հաստատել է «Դասախոսների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման» ընթացակարգը (06.02.2015 թ., արձ. №9), որի գործածությունը նպատակաուղղված է կադրային պոտենցիալի որակի ուսումնասիրմանը և գնահատմանը, միտված դասախոսների հետագա զարգացմանն ու կատարելագործմանը: Ընթացակարգի հիմնական դրույթներ են՝ ՊԴԿ-ի գիտակրթական գործունեության մշտադիտարկման համակարգի ստեղծումը, տեղեկատվության հավաքագրումը, գնահատման միասնական չափանիշների, գործիքակազմի մշակումը, տեղեկատվության վերլուծությունը և ՊԴԿ-ի գործունեությունը արտացոլող բազայի ձևավորումը:

4.2. *Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման մեխանիզմների և գործիքների մշակում և հաստատում*

ՀԱԱՀ-ի դասախոսական կազմի մասնագիտական որակների և աշխատանքային գործունեության պարբերաբար գնահատման մեխանիզմը ենթադրում է ՊԴԿ-ի

գործունեության գնահատում ներքին (ուսանողներ, շրջանավարտներ, ուսումնական գործընթացի վերահսկման, ինքնավերլուծության և որակի կառավարման բաժին) և արտաքին շահակիցների ներգրավվածությամբ (փորձագետներ), դասավանդման որակի գնահատում, անվանակարգի տարեկան («Ոսկե հասկ») մրցույթ:

Համալսարանում դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման մեխանիզմը ներառում է հետևյալ գործընթացները.

- ❖ ՊԴԿ-ի գործունեության գնահատման հանձնաժողովի ստեղծում,
- ❖ ՊԴԿ-ի մասնագիտական որակների և գիտակրթական գործունեության վերաբերյալ տարեկան տեղեկատվության հավաքագրում (հարցումներ, անկետավորում, փաստաթղթերի վերլուծություն),
- ❖ ՊԴԿ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվության վերլուծություն և գնահատում ըստ ամբիոնների (քանակական և որակական),
- ❖ Գնահատման արդյունքների ներկայացում (դիագրամներ, անալիտիկ նյութեր, լրացված հարցման թերթիկներ):
- ❖ Արդյունքների ներկայացում ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը,
- ❖ ՊԴԿ-ի զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում և իրականացում:

Դասավանդողների մասնագիտական որակների գնահատման ցուցիչներից են.

1. Դասախոսի որակավորումը, ձեռքբերումները, գիտական և ուսումնամեթոդական ոլորտներում ցուցաբերած ակտիվությունը,
2. Ուսանողների կողմից ՊԴԿ-ի աշխատանքի որակի գնահատումը,
3. Դասընթացի որակից ուսանողների բավարարվածության գնահատումը,
4. Դասավանդման մշտադիտարկումը և գնահատումը (դասալսումների):

Դասախոսական կազմի գնահատման գործընթացի ելքային վերջնարդյունքի ցուցիչ է դիտարկվում.

- ❖ Մասնագիտական հանձնաժողովի ստեղծման ռեկտորի հրաման,
- ❖ Հավաքագրված տեղեկատվություն,
- ❖ Գնահատման վերաբերյալ հաշվետվություն,
- ❖ Որոշման արձանագրություններ,
- ❖ Միջոցառումների արձանագրված արդյունքներ:

Հիմք՝ դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման ընթացակարգ (06.02.2015թ., արձ.9) և ՀԱԱՀ-ի նորմատիվային փաստաթղթեր (2016թ.

ՊԴԿ-ի մասնագիտական որակների և գործունեության գնահատման մշակված գործիքակազմն է՝ հարցման, դասալսման, դասախոսական կազմի գնահատման ձևաթերթերը.

Սույն տիրույթում բարելավման վերջնական ցուցիչ է սահմանվել դասավանդողների մասնագիտական որակների և աշխատանքի գնահատման մշակված և հաստատված ընթացակարգի, մեխանիզմի, գործիքակազմի և արդյունավետության ցուցանիշների առկայությունը:

4.3. Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման գործընթացի արդյունավետության վերլուծության իրականացում:

Համալսարանում պարբերաբար իրականացվում են դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման գործընթաց՝

- դասավանդման որակի գնահատում ուսանողների կողմից («Դասախոսը ուսանողի աչքերով» հարցում),
- դասավանդման որակի և դասախոսական կազմի մասնագիտական որակների գնահատում շրջանավարտների կողմից (Շրջանավարտների կարիքների գնահատման հարցաթերթ),
- դասավանդման որակի և դասախոսական կազմի մասնագիտական որակների գնահատում Որակի վերահսկման հանձնաժողովի և ֆակուլտետային որակի պատասխանատուների կողմից (դասա:սումների իրականացում):

Տվյալ գործընթացների հիման վրա իրականացվում է դասախոսական կազմի աշխատանքի գնահատման վերլուծություն, հարցը լսվում է համալսարանի ռեկտորատում և գիտական խորհրդի նիստերին, կայացվում են համապատասխան որոշումներ (օրինակ՝ դասախոսի խրախուսում, նկատողություններ, հեռացումներ):

Վերջնարդյունքներ և գնահատման ցուցիչներ՝

- Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման գործընթացի ապահովում և կանոնակարգված գնահատում,
- դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի բարելավման ապահովում,
- դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման մշակված, հաստատված և գործածության մեջ դրված հստակ քաղաքականություն և ընթացակարգի առկայություն,

- դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման մշակված, հաստատված և գործածության մեջ դրված արդյունավետ գործող մեխանիզմների և գործիքների առկայություն,
- դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման գործընթացի պատշաճ գնահատված արդյունավետության ցուցանիշների առկայություն:

5. Գործողության նկարագիր՝ դասախոսների կարիքների ներքին և արտաքին գնահատման համակարգի մշակում և ձևավորում

Քայլեր՝

5.1. Դասախոսների կարիքների ներքին և արտաքին գնահատման մեխանիզմների մշակում և հաստատում

Համալսարանը իրականացնում է շահակիցների կարիքների ուսումնասիրություն, գնահատում և արդյունքների հիման վրա պլանավորում միջոցառումներ, միտված համալսարանի ռազմավարության զարգացմանն ու բարելավմանը:

ՀԱԱՀ-ում մշակվել և հաստատվել է (06.02.2015թ., արձ.№9) «Շահակիցների կարիքների գնահատման» կարգը, որտեղ ամրագրված են ընդհանուր դրույթները, նկարագրությունը, կարիքների գնահատման մեխանիզմները, ընթացակարգի գրաֆիկական նկարագրությունը: Կարիքների գնահատման գերակա նպատակներն են.

- գիտակրթական գործունեության բարելավում և արդյունավետության բարձրացում,
- մատուցած կրթական ծառայությունների որակի բարձրացում,
- բարելավմանը ուղղված հիմնավորված որոշումների կայացում:

Կարգը միտված է գնահատելու ՊԴԿ-ի բավարարվածությունը համալսարանի աշխատանքային միջավայրից և մատուցվող ծառայություններից: Կարիքների ուսումնասիրման մեթոդներն են՝ անկետավորումը, թեստավորումը, փորձագիտական գնահատումը, փաստաթղթերի ուսումնասիրությունը: Կարիքների վերհանման միջոցներն են. քննարկումներ ամբիոնների նիստերում, անհատական/խմբային առաջարկներ, անկետավորում և այլն:

Մեխանիզմը ենթադրում է.

- Կարիքների վերհանման գործիքակազմի մշակում,

- Հարցումների, գնահատման իրականացում և տեղեկատվության հավաքագրում,
- Հավաքագրված տեղեկատվության ամփոփում և վերլուծություն,
- Վերհանված կարիքների բարելավմանը միտված միջոցառումների իրականացում:

Նպատակին համաձայն ՀԱԱՀ-ի Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների բաժինը 2013-2014 և 2015-2016 ուսումնական տարիներին իրականացրել է մշակված մեխանիզմի համաձայն վերոնշյալ գործընթացը:

5.2. Դասախոսական կազմի կրթական կարիքների վերհանման հարցաթերթի մշակում և հարցումների իրականացում:

ՊԴԿ-ի կարիքների վերհանման նպատակով մշակվել են հարցման թերթիկ (https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/harcumneri_anketaner/PQ.pdf) և իրականացվել հարցումներ ներքին շահակիցների հետևյալ թվաքանակի շրջանակում.

- 2013-2014 ուս. տարի. 453, որից 51%` արական, 49%` իգական սեռի,
- 2015-2016 ուս. տարի. 405, որից 43% արական, 57%` իգական սեռի:

Իրականացված հարցումների արդյունքում հավաքագրված տեղեկատվության ամփոփումը թույլ է տալիս արձանագրել ՊԴԿ-ի կողմից մատնանշված գիտակրթական գործունեության բարելավմանը միտված հետևյալ հիմնախնդիրները.

2013-2014 ուս. տարի.

- Լաբորատորիաների ոչ բավարար ռեսուրսներով հագեցվածություն` սարքավորումներ, նյութատեխնիկական բազա,
- Լսարանային ֆոնդի ցածր տեխնիկական հագեցվածություն` համակարգիչ, պրոեկտոր,
- Գիտահետազոտական ծրագրերի ցածր ֆինանսավորում,
- Ոչ բավարար աշխատավարձ (անդրադառնում է մատուցած կրթական ծառայությունների որակի վրա),
- Գիտական աշխատանքով զբաղվելու միջին և ցածր պայմաններ,
- Գրադարանային ֆոնդի համալրման անհրաժեշտություն:

2015-2016 ուս. տարի.

- Լսարանային ֆոնդի ցածր հագեցվածություն՝ լաբորատոր սարքավորումներ, նյութատեխնիկական բազա,
- Ոչ բավարար աշխատավարձ,
- Ուսանողների գիտելիքների գանահատման համակարգի բարելավման անհրաժեշտություն,
- Գործնական դասընթացների կատարելագործում,
- Ուսումնա-արտադրական պրակտիկաների անցկացման պայմանների բարելավման անհրաժեշտություն,
- Առարկայական ծրագրերի վերանայման անհրաժեշտություն:

Հարցումների ընթացքում ՊԴԿ-ը առաջարկել է նաև այն միջոցառումների և գործընթացների անհրաժեշտությունը, որոնք կնպաստեն գիտակրթական գործունեության բարելավմանը և արդյունավետության բարձրացմանը:

2013-2014 ուս. տարի.

1. Աշխատավարձերի բարձրացում,
2. Դասախոսների վերապատրաստման հաճախականության բարձրացում (ՀՀ-ում և հանրապետությունից դուրս),
3. Բարեկեցիկ աշխատանքային պայմաններ,
4. Անհրաժեշտ ռեսուրսներով ապահովվածություն,
5. Խրախուսման քաղաքականության ներդրում,
6. Գիտահետազոտական թեմաների պատշաճ ֆինանսավորում և այլն:

2015-2016 ուս. տարի.

1. Հանրապետությունից դուրս պարբերաբար վերապատրաստումներ,
2. Գիտահետազոտական աշխատանքների համապատասխանեցում ժամանակակից պահանջներին,
3. Համակարգչային տեխնիկայով ապահովվածություն,
4. Գրադարանային մասնագիտական ֆոնդի և դրա էլեկտրոնային տարբերակների լիարժեք ապահովում,
5. Խրախուսման քաղաքականության ներդրում,
6. Դասախոսի հեղինակության բարձրացում և այլն:

5.3. Դասախոսական կազմի վերհանված կրթական կարիքների համապատասխան բարելավմանը միտված որոշումների կայացում

Հատկանշական է, որ ՊԴԿ-ի կրթական կարիքների վերհանման գործընթացը միտված է ՀԱԱՀ-ում մատուցվող կրթական ծառայությունների որակի շարունակական բարելավմանը: Այդ առումով անկետավորման արդյունքների ամփոփումը թույլ տվեց ամրագրել, որ կարիքների վերհանման նպատակով մշակված գործիքակազմը կարող է նաև հետագայում կիրառվել կրթական գործընթացների մշտադիտարկման նպատակով:

2014-2016 թթ.-ին ընկած ժամանակահատվածում ՊԴԿ-ի կողմից վերհանված կարիքներին համապատասխան իրականացված միջոցառումներ.

- աշխատավարձի բարձրացում.

2014թ-ի հունվար – մինչև 15%,

2014թ. սեպտեմբեր - 10%,

2015թ. հունվար - 10%:

- համակարգչային տեխնիկայով համալրում.

2014-2015թթ. - 86 միավոր

2015-2016թթ. - 115 միավոր:

- գրադարանային մասնագիտական գրականության համալրում.

2014-2015 ուս. տարի - 4161 միավոր գրականություն

2015-2016 ուս. տարվի - 3200 միավոր գրականություն

Մասնագիտական գրականությունը ՀԱԱՀ-ում առ 01.01.2017թ. կազմում է 473.772 միավոր:

- ՊԴԿ-ի մասնագիտական վերապատրաստմանը և կատարելագործմանը ուղղված մշակված և հաստատված քաղաքականություն, կանոնակարգ (հիմք՝ հավելված 9, 10 կետ),
- 2014-2016թթ.՝ 157 մասնագիտական և 122՝ միջազգային ծրագրերով վերապատրասված դասախոս,
- դասախոսների խրախուսման քաղաքականություն՝ «Պատվավոր կոչումների շնորհման կարգ» (18.07.2016թ., արձ.№ 13), ՀԱԱՀ-ի ներքին կարգապահական կանոններ (18.07.2016թ., արձ.№ 13),

- գնահատման համակարգի լրամշակում (18.07.2016թ., արձ.№13) «Գիտելիքների ստուգման, ստուգարքների և քննությունների անցկացման և գնահատման» կանոնակարգ: 2016-2017ու. տարվա սեպտեմբերի 1-ից ուժը կորցրած է ճանաչվել 2011 թվականի դեկտեմբերի 20-ի №5 նիստում հաստատված կանոնակարգը:

5.4. Դասավանդողների կատարելագործման միջոցառումների պլանների մշակում և իրականացում:

Սույն քայլի իրականացված գործընթացները տես 6.4 կետում:

Վերջնարդյունքներ և գնահատման ցուցիչներ`

- Դասախոսական կարիքների բացահայտման ապահովում և վերհանված կրթական կարիքներ,
- դասախոսների կարիքների ներքին և արտաքին գնահատման մշակված, հաստատված և գործածության մեջ դրված արդյունավետ մեխանիզմների առկայություն,
- դասախոսական կազմի վերհանված կրթական կարիքների փաթեթի առկայություն,
- դասախոսական կազմի նկատելի բարելավված կրթական կարիքներ,
- Պահանջվող որակավորումներին համապատասխան անհրաժեշտ կոմպլետենցիաներով օժտված դասախոսական կազմի առկայություն:

6. Գործողության նկարագիր` ՊԴԿ-ի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում:

Քայլեր`

6.1. ՊԴԿ-ի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում

Համալսարանը կարևորում է ՊԴԿ-ի մասնագիտական ունակությունների զարգացումն, ինչը կնպաստի մասնագիտական առաջընթացի ապահովմանը, հետևաբար, ՄՈՒՀ-ի գիտակրթական գործունեության զարգացմանը: Այդ առումով քայլեր են իրականացվում նպատակը առավել համակարգելու և կանոնակարգելու: ՀԱԱՀ-ը սահմանել և 2015թ.-ին գիտական խորհրդում հաստատել է «Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման» քաղաքականությունը և ընթացակարգը (06.02.2015թ., արձ.№9), ինչը համալսարանի անձնակազմի զարգացման երկարաժամկետ ռազմավարություն է, միտված բարձր

որակավորում ունեցող անձնակազմի ձևավորմանը և զարգացմանը: Քաղաքականության նպատակն է՝ առավել կանոնակարգել համալսարանի մարդկային կապիտալի, մասնագիտական որակների բարձրացումը, ակնկալվում է, որ այն ուղղակիորեն կնպաստի մատուցված կրթական ծառայությունների որակի բարելավմանը: Քաղաքականությամբ ամրագրված են նպատակից բխող առանցքային խնդիրները, սկզբունքները, գործընթացների և միջոցառումների իրականացումը: Մշակված ընթացակարգի նպատակն է՝ անձնակազմի կոմպետենցիաների զարգացումը և կատարելագործումը, ինչը կնպաստի համալսարանի կողմից առաջ բերված գիտակրթական խնդիրների լուծման արդի մեթոդների կիրառմանը:

6.2. Դասախոսական կազմի խրախուսման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում

ՀԱԱՀ-ում դասախոսական կազմի խրախուսման և խթանիչ միջոց ներդնելու միտումով մշակվել և հաստատվել է «Պատվավոր կոչումների շնորհման» կարգը (18.07.2016թ., արձ. №13), ուր ամրագրված են կոչումների շնորհման ընթացակարգը և չափանիշները:

Համալսարանի ՊԴԿ-ի աշխատանքային պարտականությունների խրախուսման տեսակները ամրագրված են նաև ՀԱԱՀ-ի ներքին կարգապահական կանոններում (18.07.2016թ., արձ. 13)

6.3. Սկսնակ դասախոսների խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում

Համալսարանը կարևորում է դասավանդողների բնականոն աստիճանական սերնդափոխության գործընթացի ապահովումը և այդ միտումով սահմանել և գիտական խորհրդում հաստատել է «Սկսնակ դասախոսների խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման» քաղաքականությունը և ընթացակարգերը: Քաղաքականությամբ ամրագրված է գործընթացի հիմնական նպատակը՝ երիտասարդ, առաջադեմ մոտեցումներով, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին և օտար լեզվին տիրապետող կադրերով ՄՈՒՀ-ի համալրումը, ինչն էլ կնպաստի առաջընթացին, գիտակրթական պրոցեսների որակի բարելավմանը, միջազգայնացմանը: Այդ առումով, համալսարանում ստեղծվել և գործում է ստաժորի ինստիտուտը, որը հնարավորություն է ընձեռում ստաժավորման ժամկետի ավարտից հետո արժանի երիտասարդ դասավանդողներին լիարժեք ներգրավել գիտական և կրթական գործընթացում, խթանել նրանց մասնակցությունը վերապատրաստման և կատարելագործման ծրագրերում:

6.4 ՊԴԿ-ի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության վերլուծության իրականացում:

Հատկանշական է, որ համալսարանում արձանագրվել է ՊԴԿ-ի մասնագիտական առաջընթաց համալսարանի գործունեության հետևյալ մակարդակներում.

- 2014-2017թ.-ին թեկնածուի գիտական աստիճան է շնորհվել 92 հետազոտողի (այդ թվում 55՝ ՀՀ քաղաքացի, 37՝ սփյուռքահայ. Սիրիայի Արաբական Հանրապետություն, Իրանի Իսլամական Հանրապետություն), ընդ որում, առավելագույն ցուցանիշ է գրանցվել է 2014թ.-ին՝ 37 հետազոտող,
- 2014-2017թ.-ին դոցենտի կոչում են ստացել ՊԴ կազմի 37 ներկայացուցիչ (առավելագույն ցուցանիշ է արձանագրվել 2016-2017 ուս. տարում), պրոֆեսորի՝ 6 (նվազագույն ցուցանիշ՝ 2016-2017 ուս. տարում),
- Էլեկտրոնային ուսուցման ներդրման միտումով *Moodle* հարթակում ծրագրային հմտություններ ձեռք բերելու նպատակով 2015-2017 թ.-ին վերապատրաստում են անցել 45 դասախոս, գործընթացի վերջնարդյունքի ցուցիչ՝ 23 (51%) դասընթացի էլեկտրոնային տարբերակները մշակված և արդեն իսկ ներբեռնված են համալսարանի պաշտոնական կայքում,
- մասնագիտական որակների կատարելագործման միտումով 2014-2016թ.-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ տարբեր բարձրագույն հաստատություններում վերապատրաստում են անցել ՊԴԿ-ի 157 ներկայացուցիչ,
- միջազգային համագործակցության արդյունքում եվրոպական և ԱՊՀ-երկրներում 2014-2016թ.-ին վերապատրաստում են անցել կադրային բազայի 122 ներկայացուցիչ, առավելագույն ցուցանիշն արձանագրվել է 2014-2015 ուսումնական տարում՝ 43:

Վերոնշյալ փաստերը ՀԱԱՀ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական առաջընթացն ապահովելու քաղաքականության գործածության հաջողության գրավականներից են. այն կնպաստի կադրային ռեսուրսի շարունակական զարգացմանը, շարժունությանը և ՄԿԾ-ների նպատակների իրագործմանը:

Վերջնարդյունքներ և գնահատման ցուցիչներ՝

- ՊԴԿ-ի մասնագիտական առաջընթացի ապահովման կանոնակարգում,
- ՊԴԿ-ի մասնագիտական առաջընթացի ապահովման գնահատում,
- ՊԴԿ-ի մասնագիտական առաջընթացի ապահովման մշակված, հաստատված և գործածության մեջ դրված հստակ քաղաքականության և ընթացակարգի առկայություն,

- ՊԴԿ-ի խրախուսման մշակված, հաստատված և գործածության մեջ դրված հստակ քաղաքականության և ընթացակարգի առկայություն,
- սկսնակ դասախոսների խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման մշակված, հաստատված և գործածության մեջ դրված հստակ քաղաքականության և ընթացակարգի առկայություն,
- ՊԴԿ-ի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի համակողմանի գնահատված արդյունավետության ցուցանիշների առկայություն:

7. Գործողության նկարագիր՝ համալսարանի ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի ապահովում:

Քայլեր՝

7.1. Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի կայունության ապահովման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում

ՀԱԱՀ-ն ռազմավարական նպատակների իրականացման համար ձևավորել է անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմ: 2014-2017թթ. ընկած ժամանակահատվածում վարչական անձնակազմը ընդգրկում է 43-46 աշխատակից, իսկ ուսումնաօժանդակը՝ (ամբիոնների, լաբորատորիաների, դեկանատների անձնակազմ) 202-210, ինչը վկայում է համալսարանում համապատասխան աշխատակիցներով ապահովվածության կայունության մասին:

Համալսարանը մշակել և 2016թ.-ին հաստատել է (գիտական խորհրդի որոշում 03. 06. 2016 թ. (արձ. № 10)) «ՀԱԱՀ-ի կադրային քաղաքականությունը»՝ միտված կադրային կազմի ձևավորմանը, զարգացմանը և կառավարման համակարգի ստեղծմանը՝ համալսարանի ռազմավարական նպատակների իրականացման համար: Նորմատիվային փաստաթղթում ամրագրված են քաղաքականության խնդիրները, սկզբունքները, իրավասություններն ու պատասխանատվությունը: 2016թ.-ին սահմանվել և գիտական խորհրդում հաստատվել է (03.06.2016թ., արձ №10) «Ակադեմիական աշխատակազմի ներգրավման և կայունության ապահովման» քաղաքականությունը և ընթացակարգը:

ՀԱԱՀ-ի վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի իրավունքներն ու պարտականությունները սահմանված են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ և համալսարանի ներքին կարգապահական կանոններում (18.07.2016թ. արձ. №13):

7.2. Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում

Վարչական անձնակազմի գործունեության որակի ապահովման քաղաքականության բաղադրիչներից մեկը՝ ուսանողներին վարչական կազմի կողմից հավելյալ օժանդակման և ուղղորդման կարգի մշակումը և համալսարանի գիտական խորհրդում դրա հաստատումը (18.07.2016, արձ.13): Կարգում ամրագրված են ընդհանուր դրույթները, նպատակներն ու խնդիրները և իրականացվող աշխատանքների ուղղվածությունները: Կարգը միտված է վարչական անձնակազմի կողմից ուսանողներին օժանդակմանը և ուղղորդմանը ինչպես կրթական գործընթացներում, այնպես էլ սոցիալական հարցերում:

7.3. Համալսարանի աշխատակազմի գործունեության որակն ապահովող մեխանիզմների և գործիքների մշակում և հաստատում

Համալսարանի աշխատակազմի գործունեության որակն ապահովող մեխանիզմների ձևավորման միտումով մշակվել և համալսարանի գիտական խորհրդում հաստատվել է «Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման ընթացակարգը (06. 02. 2015 թ. ,արձ. № 9), որը ներառում է պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության որակն ապահովող մեխանիզմները և գործիքները:

Համապատասխան տվյալ մեխանիզմների և գործիքների պարբերաբար իրականացվում է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության որակի գնահատում և վերլուծություն:

7.4. Համալսարանի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի արդյունավետության պարբերական վերլուծության իրականացում:

Համալսարանի ուսումնաօժանդակ աշխատակազմը 5 տարին մեկ անցնում է ատեստավորում:

Ատեստավորման արդյունքները Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը ներկայացնում է ռեկտորատ, կայացվում են համապատասխան որոշումներ:

Վարչական կազմի արդյունավետության գնահատումը իրականացվում է ռեկտորատի կողմից, կայացվում են համապատասխան որոշումներ:

Վերջնարդյունքներ և գնահատման ցուցիչներ՝

- Համալսարանի ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի և նրանց կայունության ապահովում,

- վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության որակի ապահովում,
- համալսարանի աշխատակազմի գործունեության որակի ապահովում,
- վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի կայունության ապահովման մշակված, հաստատված և գործածության մեջ դրված հստակ քաղաքականության և ընթացակարգի առկայություն,
- վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության որակի ապահովման մշակված, հաստատված և գործածության մեջ դրված հստակ քաղաքականության և ընթացակարգի առկայություն,
- համալսարանի աշխատակազմի գործունեության պատշաճ որակ ապահովող հաստատված և գործածության մեջ դրված արդյունավետ մեխանիզմների և գործիքների առկայություն:

Համալսարանը կարևորելով և համալսարանի ինստիտուցիոնալ ինքնավերլուծության ժամանակ բացահայտված կարիքները: Հետազոտություն և զարգացում չափանիշի սահմաններում համալսարանն իր առջև դրված առաջնահերթ խնդիրների լուծման համար կարևորում է հետևյալ գործողությունները.

- Հետազոտական ոլորտում համալսարանի հետաքրքրությունների և հավանականությունների բացահայտում,

- Հետազոտությունների իրականացման ու զարգացման և հետազոտական գործունեության միջազգայնացման ընդլայնման ապահովում,

- Հետազոտական գործունեությունն ուսումնական գործընթացի հետ փոխկապակցման ապահովում:

Այս խնդիրների լուծման արդյունքում, տեսանելի ապագայում համալսարանը ձգտում է հասնել հետևյալ գլխավոր վերջնարդյունքին:

Գիտակրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով համալսարանի կողմից ագրարային գիտությունը և արտադրությունը տրամադրվող համապատասխան պատշաճ աջակցություն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 1.

Հետազոտությունների ոլորտում համալսարանի հետաքրքրությունների և հավանականությունների բացահայտման մեխանիզմների մշակում և հաստատում

Քայլ 1.1. Հետազոտությունների ռազմավարության մշակում և հաստատում

Մշակվել է և համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատվել է (03.06.2016 թ. արձ. №10) համալսարանի հետազոտությունների ռազմավարությունը (կցվում է);:

Քայլ 1.2. Ագրարային ոլորտի զարգացումն ապահովող նոր հետազոտությունների կարիքների բացահայտում

Մշակվել է ագրարային համալսարանի գիտական խորհրդի կողմից (03.06.2016 թ. արձ. №10) հաստատվել է ագրարային հետազոտության ոլորտում նոր կարիքների ցանկը (Կից ներկայացվում է):

Քայլ 1.3. Երկրագնդի գլոբալ տաքացումների նոր մարտահրավերների հետ կապված հետազոտական կարիքների բացահայտում

Մշակվել է ագրարային համալսարանի գիտական խորհրդի կողմից (03.06.2016 թ. արձ. №10) հաստատվել է երկրագնդի գլոբալ տաքացումների հետ կապված հետազոտությունների ցանկը (կցվում է):

Քայլ 1.4. Հետազոտական նմանատիպ ծրագրերի և կառույցների միավորում գիտական ներուժի միավորում

Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն մասնաճյուղի կազմում 2014 թ. միավորվել են մելիորացիայի և երկրագործության պրոբլեմային լաբորատորիաները և համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ (03.06.2016 թ. արձ. №10) մշակվում են բույսերի գենոֆոնդի և «Ագրոկենսատեխնոլոգիա» գիտական կենտրոն մասնաճյուղի բուսական ռեսուրսների գենոֆոնդերի միավորման և միջազգային ճանաչում ստանալու գործուն քայլեր:

Քայլ 1.5. Եզակի հետազոտական սարքավորումներով գիտական լաբորատորի ստեղծման ծրագրի մշակում

Եզակի սարքավորումներով հագեցած կենսաբանական հետազոտությունների համար համապիտանի լաբորատորիայի հարցը բազմիցս քննարկվել է ագրարային համալսարանի գիտական խորհրդի նիստում (արձանագրություն թիվ 1 07.05.2013 թ., (արձանագրություն թիվ 3 01.10.2013թ., (արձանագրություն թիվ 10 25.03.2015թ.):

Լաբորատորիայի համար ֆինանսական տարբեր աղբյուրներից ձեռք են բերվել համապատասխան սարքավորումներ, IV մասնաշենքի 102 լսարանում կատարվել է նորոգում, վեց առանձին բաժիններով: Համալսարանի ռեկտորի 25.12.15թ. թիվ 530/Ս

հրամանով նշանակվել «Կենսաբանական հետազոտությունների լաբորատորիայի» պատասխանատու:

Քայլ 1.6. Գիտական արդյունքների ներդրման և ապրանքայնացման մեխանիզմների մշակում և հաստատում

Գիտական հետազոտությունների արդյունքների ներդրումն ու ապրանքայնացումը գիտական ծրագրերի արդյունավետության բարձրացման կարևոր նախապայման է, որը հնարավորություն կտա հետազոտողին ոչ միայն բարելավել իր սոցիալական վիճակը, այլ նոր նախաձեռնությունների հիմք կարող է դառնալ: Գիտության արդյունքի ներդրումն ու ապրանքայնացումը գիտության զարգացման լուրջ խթան կարող է դառնալ:

Գիտական արդյունքների ներդրման և ապրանքայնացման գործոն մեխանիզմները իր մեջ ներառում է.

1. Գիտական արդյունքի վերաբերյալ հեղինակային խմբի հաշվետվության ձևակերպումը,
2. Գիտական արդյունքի արդյունավետության վերաբերյալ գրախոսություն - կարծիքների կազմակերպում:
3. Գիտական արդյունքի քննարկումը գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի ղեկավարությամբ ձևավորված մասնագիտական փորձաքննության խմբում:
4. Մասնագիտական փորձաքննական հանձնաժողովի դրական կարծիքի քննարկում համալսարանի գիտական խորհրդում:

Գիտական խորհրդում ներկայացվում է.

- 4.1. Գիտական արդյունքի ներդրման տեխնիկական և ֆինանսական միջոցների աղբյուրների վերաբերյալ առաջարկ - ծրագիր:
- 4.2. Գիտական արդյունքի փորձանմուշի պատրաստում:
- 4.3. Գիտական փորձանմուշների տարաբնույթ փորձարկումների կազմակերպում:
- 4.4. Գիտական արդյունքի վերաբերյալ տեղեկատվության տարածում:
- 4.5. Գիտական արդյունքի ցուցադրման կազմակերպում արտադրությունում և ցուցահանդեսներում:
5. Լրատվամիջոցներով ներդրմանը պատրաստ գիտական արդյունքի գովազդի կազմակերպում:
6. Գիտական արդյունքի ներդրման բիզնես-պլանի կազմում:
- 6.1. Արտադրող կազմակերպության հետ համապատասխան պայմանագրի կնքում:
- 6.2. Ներդրման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթում:
- 6.3. Գիտական արդյունքի ապրանքայնացման համար անհրաժեշտ այլ միջոցառումների մշակում:

Ագրարային հետազոտությունների ոլորտում համալսարանի հետաքրքրությունների և հավակնությունների բացահայտման մեխանիզմների մշակումն ու իրականացումը հնարավորություն է տվել բացահայտել ագրարային ոլորտի զարգացումն ապահովող նոր հետազոտությունների, երկրագնդի գլոբալ տաքացումների նոր մարտահրավերների հետ կապված հետազոտությունների ցանկերը, որը հնարավորություն է տալիս ագրարային համալսարանում իրականացվող դրամաշնորհային, բազային կամ նախաձեռնությամբ իրականացվող գիտական ծրագրերն ու թեմաները ընտրել հաստատված ցանկից:

Ուսումնասիրությունների արդյունքում հետազոտական նմանատիպ ծրագրերի և կառույցների միավորման արդյունքում առավել նպաստակային է օգտագործվում գիտական ներուժն ու տրամադրված ֆինանսական միջոցները:

Հետազոտական եզակի սարքավորումներով կահավորված կենսաբանական հետազոտությունների լաբորատորիան ծառայում է ոչ միայն ժամանակակից պահանջներին համապատասխան գիտական հետազոտություններ իրականացմանը այլև լաբորատորիայում կազմակերպվում են համապատասխան առարկաների դասաժամը:

Գիտական արդյունքների ներդրման և ապրանքային ցման մեխանիզմների մշակումը հնարավորություն է տվել արագ և հստակ մեխանիզմներով կազմակերպել արտադրությունում գիտական արդյունքների ներդրման և ապրանքային ցման խնդիրները:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 2.

Հետազոտությունների իրականացումն ու զարգացումն ապահովող քաղաքականության մշակում և հաստատում

Քայլ 2.1. Որակյալ հետազոտությունների իրականացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու մեխանիզմների մշակում և հաստատում

Մշակվել և համալսարանի գիտական խորհրդում հաստատվել է (03.06.2016 թ. արձ. №10) որակյալ հետազոտությունների իրականացման բարենպաստ ստեղծման մեխանիզմները

Քայլ 2.2. Գիտական հետազոտությունների բյուջեի բաշխման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում

Մշակվել և համալսարանի գիտական խորհրդում հաստատվել է (03.06.2016 թ. արձ. №10) գիտական հետազոտությունների բյուջեի բաշխման քաղաքականությունը:

Քայլ 2.3. Գիտական հետազոտությունների համար հատկացված բյուջեի հաստատում

Մշակվել և համալսարանի գիտական խորհրդում հաստատվել է (03.06.2016 թ. արձ. №10) գիտական հետազոտությունների համար հատկացված բյուջեի կարգը

Քայլ 2.4. Գիտահետազոտական հաշվետվությունների քննարկման կազմակերպում

Մշակվել և համալսարանի գիտական խորհրդում հաստատվել է (03.06.2016 թ. արձ. №10) գիտական հաշվետվությունների քննարկման կազմակերպման կարգը:

Քայլ 2.5. Երիտասարդ աշխատակիցների հետազոտական գործունեության քաղաքականության մշակում

Երիտասարդ աշխատակիցների հետազոտական գործունեությունը ակտիվության բարձրացման համար մեծ թվով երիտասարդներ ընդգրկվել են գիտական տարբեր թեմաներում և ծրագրերում, որը կազմում է հետազոտողների մոտ 30%-ը: Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ (05.04.2017 թ. արձ. №12) Ոսկե Հասկ մրցանակաբաշխությունում սահմանվել է <Լավագույն երիտասարդ հետազոտող> անվանակարգը:

Քայլ 2.6. Գիտական և կրթական ոլորտների բնականոն սերնդափոխություն ապահովող քաղաքականության մշակում և հաստատում

Համալսարանի գիտական խորհրդում ընդունվել է որոշում (03.06.2016 թ. արձ. №10) գիտակրթական ոլորտների բնական սերնդափոխությունը ապահովող գործունեության ակտիվացման համար:

Քայլ 2.7. Ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագոյությունը կանխարգելող միջոցների քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում

Համալսարանի խմբագրական խմբում ներդրվել է գիտական հրապարակումները համակարգչային ստուգման ծրագիր և <Հայաստանի ազգային ագրարային համալսարանի տեղեկագիր> միջազգային գիտական պարբերականին ներկայացվող հոդվածների մոտ 30%-ը մերժվում է:

Քայլ 2.8. Հետազոտական սարքավորումների արդիականացման ծրագրի մշակում և հաստատում

Համալսարանի գիտական խորհրդում ընդունվել է որոշում (05.04.2017 թ. արձ. №12) հետազոտական սարքավորումների արդիականացման աշխատակիցների ակտիվացման համար:

Քայլ 2.9. Գիտության արտադրության կապի ամրապնդման մեխանիզմների մշակում և հաստատում

Մշակվել է և համալսարանի գիտության և արտադրության կապի ամրապնդման մեխանիզմներ և հաստատվել է համալսարանի գիտական խորհրդում (03.06.2016 թ. արձ. №10):

Հետազոտությունների իրականացումն ու զարգացումն ապահովող քաղաքականության մշակումը հնարավորություն է տվել ստեղծել որակյալ հետազոտությունների իրականացման համար բարենպաստ պայմաններ, որը հնարավորություն է տալիս կատարելու արտադրական հետազոտություններ:

Գիտական հետազոտությունների բյուջեի բաշխման քաղաքականության և ընթացակարգերի մշակումը հնարավորություն է տվել առավել նպատակային բաշխել գիտական հետազոտություններին տրամադրվող ՀՀ պետական բյուջեից, միջազգային դրամաշնորհային ֆինանսավորմամբ և համալսարանի արտաբյուջետային միջոցները:

Տարբեր աղբյուրներից ֆինանսավորվող գիտահետազոտական հաշվետվությունների քննարկման կազմակերպումը հնարավորություն է տալիս առավել թափանցիկ դարձնել գիտական հաշվետվություններն ու արդյունքները:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 3

Հետազոտական գործունեության միջազգայնացմանը նպաստող գործողությունների կանոնակարգում

Քայլ 3.1. Հետազոտական գործունեության միջազգայնացման գործողությունների քաղաքականության մշակում և հաստատում

Ընթացքի մեջ է

Քայլ 3.2. Ագրարային ոլորտի առաջատար գրախոսվող օտարերկրյա և հանրապետական պարբերականներում գիտական հրապարակումների կարգավորման մեխանիզմների մշակում և հաստատում

Ագրարային համալսարանը արտերկրյա տարբեր գիտակրթական կառույցների հետ համատեղ 2003 թ.-ից Վրաստանում (Թբիլիսի) հրատարակում է <Ագրարային գիտության տեղեկագիր> գիտական միջազգային պարբերական, որը 2016 թ. ընդգրկվել է Scopus բարձր վարկանիշ ունեցող պարբերականների ցանկում:

Քայլ 3.3. Օտարերկրյա և հանրապետական գրախոսվող պարբերականներում գործընթացի կարգավորում

Ընթացքի մեջ է:

Քայլ 4.4. Միջազգային գիտաժողովների սիմպոզիումների մասնակցության աջակցության և խրախուսման մեխանիզմների մշակում և հաստատում

Ընթացքի մեջ է

Քայլ 5.5. Միջազգային հետազոտական ծրագրերում ուսանողների և դասավանդողների ներգրավումն ապահովող կանոնակարգերի մշակում և հաստատում

Ընթացքի մեջ է:

Քայլ 6. Հետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականության արդյունավետության վերլուծության իրականացում

Ընթացքի մեջ է

Հետազոտական գործունեության միջազգայնացմանը նպաստող գործողությունների կանոնակարգը հնարավորություն է տվել օտարերկրյա և հանրապետական տարբեր պարբերականներում տպագրության միջոցով առավել ճանաչելի դարձնել իրականացվող հետազոտությունները իրականացված գործողության արդյունքում Թբիլիսիում Հայաստանի ազգային ազրարային համալսարանի հետ համատեղ տպագրվող գիտական միջազգային <Ազրարային գիտության տեղեկագիր> գիտական միջազգային պարբերականը ընդգրկվել է միջազգային բարձր վարկանիշ ունեցող պարբերականների ցուցակում: Աշխատանքներ են տարվում <Ազրարային համալսարանի տեղեկագիր> գիտական միջազգային պարբերականը նույն ցուցակում ընդգրկելու համար:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 4.

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման քաղաքականության ընթացակարգերի ու մեխանիզմների մշակում և հաստատում

Ընթացքի մեջ է

ՉԱՓԱՆԻՇ VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

«Ենթակառուցվածք և ռեսուրսներ» չափանիշի սահմաններում Համալսարանն իր առջև դրված առաջնահերթ խնդիրներ է դիտում հետևյալ հարցերի լուծումը.

-Համալսարանի ռազմավարական նպատակների և մասնագիտությունների կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ, միջազգային չափանիշներին համապատասխանող, ուսումնառողների և դասավանդողների կրթական ու սոցիալական կարիքները բավարարող ուսումնականության բազայի ստեղծում և շարունակական բարելավման ապահովում,

-Համալսարանում տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացների պատշաճ իրականացում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 1

Մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրը կատարելագործելու և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով՝ համալսարանի ուսումնանյութական բազայի և լաբորատորիաների հագեցվածության շարունակական բարելավում

Քայլ 1.1. Համալսարանի մասնաշենքերի, ուսումնափորձնական տնտեսությունների, ուսումնագիտական լաբորատորիաների, համալսարանի կազմում ընդգրկված գիտական կենտրոնների տարածքների հաշվառման և գույքագրման աշխատանքների իրականացում

Քայլ 1.2. Համալսարանի մասնաշենքերի, ուսումնափորձնական տնտեսությունների, ուսումնագիտական լաբորատորիաների, համալսարանի կազմում ընդգրկված գիտական կենտրոնների տարածքների և գույքի օգտագործման նպատակների ճշգրտում

Համալսարանում իրականացվում է մասնաշենքերի, ուսումնափորձնական տնտեսությունների, ուսումնագիտական լաբորատորիաների, համալսարանի կազմում ընդգրկված գիտական կենտրոնների տարածքների ճշգրտորեն հաշվառում և հստակ գույքագրում:

Համալսարանը ուսումնական գիտահետազոտական, փորձարարական աշխատանքներ իրականացնելու համար սեփականության իրավունքով (սեփականաշնորհման վկայականներ) ունի 7 մասնաշենք, 2 ուսումնափորձնական տնտեսություն: Մասնաշենքերի ընդհանուր մակերեսը կազմում է 51947 մ²: Շենքային պայմանները բավարարում են առկա ուսանողների մասնագիտական կրթությունն իրականացնելու համար:

Մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման, մասնագետների գործնական հմտությունների զարգացման, պրակտիկաների անցկացման, գիտահետազոտական աշխատանքների կատարման համար մեծ նշանակություն ունեն համալսարանի երկու ուսումնափորձնական տնտեսությունները («Բալախովիտ», «Ոսկեհատ»): Այդ տնտեսությունները պետք է լինեն օրինակելի գյուղատնտեսական ձեռնարկություններ, հագեցած արդի պահանջներին համապատասխան գյուղատնտեսական մեքենաներով, գործիքներով, սարքավորումներով:

«Բալախովիտ» ուսումնափորձնական տնտեսությունն (հասցեն. Աբովյանի տարածաշրջան, գյուղ Բալախովիտ) ունի 1077 հա հողատարածություն (որից վարելահող 260 հա, խոտհարքեր 407 հա, արոտավայր 410 հա), կաթի արտադրամաս 1663 մ² մակերեսով, մեքենատրակտորային պարկ, անասնագոմեր և կից լսարաններ, 4230 մ² մակերեսով, պահում է մանր և խոշոր եղջերավոր անասուններ:

«Ոսկեհատ» ուսումնափորձնական տնտեսությունն (հասցեն. Արմավիրի մարզ, գյուղ Ոսկեհատ) ունի 62,5 հա հողատարածություն (որից խաղողի այգի 18 հա, պտղատու այգի 6,3 հա, առվույտի ցանքատարածք 11 հա) և 400 մ² մակերեսով լաբորատորիա:

Տարածքների և գույքի ճշգրտորեն հաշվառված և հստակ ձևակերպված, ճշգրտված օգտագործման նպատակները ներառող փաթեթներն առկա են և գտնվում են համալսարանի Վարչատնտեսական դեպարտամենտում:

Հաշվառման, գույքագրման, նպատակների օգտագործման գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Քայլ 1.3. Համալսարանի լսարանների, լաբորատորիաների, անասնաբուժական կլինիկաների, ծննդօգնության ուսուցման կենտրոնի, դիախերձարանի, վիրահատարանի, ռենտգեն կաբինետի տարածքների ճշգրտում և գույքագրում

Քայլ 1.4. Համալսարանի լսարանների, լաբորատորիաների, անասնաբուժական կլինիկաների, ծննդօգնության ուսուցման կենտրոնի, դիախերձարանի, վիրահատարանի, ռենտգեն կաբինետի տարածքների և գույքի օգտագործման նպատակների ճշգրտում

Համալսարանում իրականացվում է լսարանների, լաբորատորիաների, անասնաբուժական կլինիկաների, ծննդօգնության ուսուցման կենտրոնի, դիախերձարանի, վիրահատարանի, ռենտգեն կաբինետի տարածքների ճշգրտում և գույքագրում, տարածքների և գույքի օգտագործման նպատակների ճշգրտում:

Ըստ սահմանված նորմերի 1 ուսանողին պահանջվում է 2,2 մ² լսարանային մակերես, 3մ² լաբորատորիայի մակերես:

Բուհի լսարանների և լաբորատորիաների մակերեսները, կահավորանքը բավարարում են առկա ուսանողների մասնագիտական կրթությունն իրականացնելու համար:

Անասնաբուժական բժշկագիտության ֆակուլտետի ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկաների և գործնական պարապմունքների անցկացման համար գործում է.

1. Նոր-Արեշի միջամբիոնային անասնաբուժական կլինիկա, որը գտնվում է Էրեբունի փողոցում:

2. Համալսարանի անասնաբուժական կլինիկական լաբորատորիա, որը գտնվում է Կորյունի փողոցում, համալսարանի 3-րդ մասնաշենքում: Եվ կլինիկան, և լաբորատորիան ունեն հիվանդ կենդանիների ընդունման, կլինիկական հետազոտման, բուժման համար անհրաժեշտ տարածքներ, սարքավորումներ և այլ միջոցներ:

Տարածքների և գույքի ճշգրտորեն հաշվառված և հստակ ձևակերպված, ճշգրտված օգտագործման նպատակները ներառող փաթեթներն առկա են և գտնվում են համալսարանի Վարչատնտեսական դեպարտամենտում:

Հաշվառման, գույքագրման, նպատակների օգտագործման գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Քայլ 1.6. Գրադարանների, ընթերցասրահների, SS կենտրոնի, պաշտոնական կայքի նպատակային օգտագործման ճշգրտում

Համալսարանը գրադարանային ծառայությունն իրականացնելու համար իր տարածքում ներառում է նաև 2 գրապահոց և 5 ընթերցասրահ:

Պաշտոնական ինտերնետային կայքերն են՝

www.anau.am

library.anau.am

elearning.anau.am

persons.anau.am

Գրադարանային ֆոնդի համալարումը կատարվում է

Համալսարանի դասախոսների կազմած դասագրքերի ու ձեռնարկների տպագրելով՝

Պայմանագրային ձևով ձեռք բերված գրականություն

Գրախանութներից գնումների ձևով

Նվիրատվությունների ձևով

Համալսարանում տեղեկատվության արդյունավետ կառավարման, տեղեկատվական գիտելիքը արդի տեխնոլոգիաներով մատուցման նպատակով 2010թ. սեպտեմբերին ստեղծվեց տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն, որը համակարգում է տեղեկատվական համակարգերի, նորագույն տեխնոլոգիաների, համակարգչային և ցանցային սպասարկումների, տեղեկատվության և տեղեկատվական գիտելիքների ստացման, ուսումնասիրության, վերլուծության, մշակման և տարածման աշխատանքները:

Կենտրոնը մշակում և իրականացնում է ուսումնական գործընթացում, գիտահետազոտական աշխատանքներում, Համալսարանի կառավարման համակարգում տեղեկատվական քաղաքականություն, ինչպես նաև նոր տեղեկատվական, հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ կենտրոնի կազմի մեջ գործում են հետևյալ ստորաբաժանումները՝

- 1) Գիտական գրադարանը
- 2) Տեղեկատվական համակարգերի կառավարման բաժինը. իրականացնում է էլեկտրոնային դեկանատների ստեղծման, դրանց հետագա սպասարկման աշխատանքները, կառավարում է համալսարանի ինտերնետային կայքը, զբաղվում է համալսարանի ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացնելու համար անհրաժեշտ ծրագրային և տեխնիկական համակարգերի ներդրմամբ

3) Տեղեկատվական տեխնոլոգիական համակարգերի սպասարկման բաժինը իրականացնում է համակարգչային սարքավորումների տեխնիկական սպասարկումը և ծրագրային ապահովումը, տեղեկատվական ցանցի անվտանգ շահագործումը

4) Տեղեկատվական տեխնոլոգիաների գիտելիքի բաժինը կազմակերպում է էլեկտրոնային ուսուցում (համակարգչային ծրագրերի ուսուցում, սերտիֆիկացում, կադրերի վերապատրաստում), ինչպես նաև անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, մշակում և տարածում:

2016 թվականին բուհի պաշտոնական կայքէջի այցելուների քանակը կազմել է 227 580 մարդ, իսկ էջերի դիտումների քանակը կազմում է ավելի քան 600 000:

Համալսարանի կայքէջում իրականացված մի շարք փոփոխությունների արդյունքում 2016 թվականին կայքէջի տեղեկատվությունից օգտվող նոր այցելուների քանակը կազմել է 42.8%:

Շեշտենք, որ համալսարանի գրադարանի կայքէջն ունի աննախադեպ այցելությունների քանակ: 2016 թվականի մարտի 10-ից մինչ տարեվերջ կայքն ունեցել է 277 250 այցելու, իսկ էջերի դիտումների քանակը նշված ժամանակաշրջանի համար անցնում է 900 000-ը:

Առկա է համալսարանի գրադարանների, ընթերցասրահների, ՏՏ կենտրոնի, պաշտոնական կայքի նպատակային օգտագործման և ձևակերպված փաթեթը:

Այս գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Հղում՝ https://anau.am/images/stories/pastatxter/hashvetvutyun/tt_kentron.pdf

Քայլ 1.7. Համալսարանի ռեսուրսային ապահովվածությունից ուսումնառողների բավարարվածության ուսումնասիրման հարցաթերթի մշակում և հաստատում

Համալսարանի կողմից մշակվել և հաստատվել է շահակիցների կարիքների գնահատման կարգը (հաստատված է ՀԱԱՀ գիտ.խորհրդի կողմից 06.02.2015թ., արձ. № 9), որը ներառում է ուսումնառողների կարիքների գնահատման մեխանիզմները և գործիքները (հարցման թերթիկ):

Քայլ 1.8. Համալսարանի ռեսուրսային ապահովվածությունից ուսումնառողների բավարարվածության բացահայտման հարցումների անցկացում

2016թ-ին իրականացվել է ուսումնառողների կարիքների գնահատում, որը ներկայացվել է հաշվետվության տեսքով: Հարցմանը մասնակցել են 2-ից 4-րդ կուրսի շուրջ 810 ուսանողները: Հարցման 28 հարցաթերթ համարվել են անվավեր, 782-ը՝ վավեր:

Ուսանողները ավելի շուտ բավարարված չեն՝

Սանհանգույցների վիճակից,

Լսարանային տեխնիկական ապահովումից,

Ինտերնետից օգտվելու հնարավորություններից (դասին և դասից դուրս),

Մարզադահլիճների վիճակից և այլն:

Հարցումների արդյունքները ցույց են տվել, որ համալսարանում ցածր է տեղեկատվության ապահովման մակարդակը բուհի կրթական և այլ ծառայությունների վերաբերյալ:

Տվյալ գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Քայլ 1.9. Համալսարանի ռեսուրսային ապահովվածությունից դասախոսական կազմի բավարարվածության ուսումնասիրման հարցաթերթի մշակում և հաստատում

Համալսարանի կողմից մշակվել և հաստատվել է շահակիցների կարիքների գնահատման կարգը (հաստատված է ՀԱԱՀ գիտ.խորհրդի կողմից 06.02.2015թ., արձ. № 9), որը ներառում է պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների գնահատման մեխանիզմները և գործիքները (հարցման թերթիկ):

Քայլ 1.10. Համալսարանի ռեսուրսային ապահովվածությունից դասախոսական կազմի բավարարվածության բացահայտման հարցումների անցկացում

2016թ-ին իրականացվել է ուսումնառողների կարիքների գնահատում, որը ներկայացվել է հաշվետվության տեսքով:

Հարցման նպատակն է եղել՝

-գնահատել համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կարիքները, չափել դասախոսի վերաբերմունքը համալսարանում կատարվող փոփոխությունների նկատմամբ, բացահայտել այն գործոնները, որոնք կնպաստեն դասախոսներին ավելի արդյունավետ աշխատելուն:

Հարցման անցկացման համար մշակվել է հարցման թերթիկներ, որոնք ենթարկվել են վալիդացիայի:

Հարցումը բաժանված է հետևյալ ենթաբաժինների՝

Աշխատանքային միջավայր,

տեղեկատվության և խոսքի ազատության մակարդակ,

փոփոխություններ,

առաջնորդություն և կառավարում,

արդյունավետություն և զարգացում,

դասավանդման գործընթաց,

գիտական գործունեություն:

Հարցմանը մասնակցել են համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի 405 ներկայացուցիչներ, որից 175-ը՝ արական, իսկ 203-ը՝ իգական սեռի ներկայացուցիչներ: Տարիքը՝ մինչև 35 տարեկան՝ 53, մինչև 50՝ 114, մինչև 70՝ 181, 70-ի բարձր՝ 57:

Պրոֆեսորադասախոսական կազմի անկետավորման արդյունքում պարզվել է, որ ավելի շատ բավարարված են աշխատանքային միջավայրից, տեղեկացվածության և խոսքի ազատության մակարդակից, կառավարումից (մեծ մասը գնահատել են «լավ»):

Սակայն ոչ դրական են գնահատել դասավանդման գործընթացում լսարանների ապահովվածությունը համակարգչային միջոցներով:
Տվյալ գործընթացը նույնպես կրում է շարունակական բնույթ:

Քայլ 1.11. Համալսարանում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային ապահովվածության վերլուծության իրականացում

Կրթական գործընթացների իրականացման ռեսուրսներից են՝ լսարաններ, լաբորատորիաներ (այդ թվում նաև ուսումնական կաբինետ, համակարգչային լսարան, կլինիկա), գրադարան, համակարգչային ծառայություն, ուսումնափորձնա-կան տնտեսություններ:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին ուսումնամեթոդական կենտրոնի (պրոռեկտորի մասնակցությամբ) և տնտեսական մասի հանձնաժողովը ստուգում է ամբիոնների լսարանների և լաբորատորիաների վիճակը (սեղանների, նստարանների առկայությունը), լաբորատորիաների հագեցվածությունը, որոշում նրանց պատրաստ լինելու աստիճանը նոր ուսումնական տարին սկսելուն: Հայտնաբերված թերությունները հնարավորությունների սահմաններում վերացվում են, կատարվում է գույքի և սարքավորումների լրացում:

Կրթական գործընթացների կառավարման, կրթական ծրագրերի իրականացման համար յուրաքանչյուր տարի համալսարանի բյուջեի ծախսային մասում ֆինանսական հատկացումներ է կատարվում լաբորատոր սարքավորումների, համակարգչային տեխնիկայի, գրականության, լսարանային գույքի ձեռք բերման, ուսումնափորձնական տնտեսությունների ֆինանսավորման համար:

Այս գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Քայլ 1.12. Համալսարանում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային կազմ ապահովելու մեխանիզմների մշակում և հաստատում

Համալսարանի կողմից մշակվել և հաստատվել է առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային բազայի ապահովման կարգը (հաստատված է ՀԱԱՀ գիտ.խորհրդի կողմից 06.02.2015թ., արձ. № 9), որը ներառում է հստակ գործող, մշակված, հաստատված և գործածության մեջ դրված մեխանիզմներ:

Ռեսուրսային ապահովման մեխանիզմը Համալսարանի ենթակառուցվածքային տարրերի համակարգ է, որը անհրաժեշտ է ռեսուրսների բաշխման համար ստորաբաժանումների միջև:

Ռեսուրսների ապահովման մեխանիզմները պետք է երաշխավորեն մասնագիտության կրթական ծրագրերի իրականացումը, ուսանողների և դասախոսների նորմալ գործառնման և օպտիմալ փոխգործունեության համար անհրաժեշտ ռեսուրսային ապահովումը:

Քայլ 1.13. Համալսարանում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովման գործընթացի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում

Ռեսուրսային ապահովումը Համալսարանի կարևորագույն ֆունկցիաներից մեկն է, որի իրականացումը որոշում է Համալսարանի զարգացումը և գործառնումը:

Ռեսուրսային ապահովման պլանավորման քայլեր՝

-ՄԿԾ-ի պլանավորում:

-ՄԿԾ-ի կառուցվածքի շահակիցների պահանջներին համապատասխանության ուսումնասիրում և վերլուծություն:

-ՄԿԾ-ով նախատեսված դասընթացների անցկացման համար ռեսուրսային բազայի պլանավորում:

-Ռեսուրսային բազայի բաշխման մեխանիզմների մշակում ըստ իրականացվող ՄԿԾ-ների:

-Մեթոդական, նյութատեխնիկական և տեղեկատվական ապահովման պլանավորում

-Մեթոդական աշխատանքների իրականացման պլանների մշակում:

-Նյութատեխնիկական բազայի պլանավորում:

-Տեղեկատվական բազայի պլանավորում:

Պլանավորումը իրականացվում է հաշվի առնելով ՄԿԾ-ի իրականացման և կոմպետենցիաների ձևավորման համար ռեսուրսային ապահովվածության մակարդակի գնահատականը՝ յուրաքանչյուր դասընթացի համար:

Ռեսուրսների նկատմամբ պահանջը որոշվում է վերլուծության ճանապարհով՝

Առկա ռեսուրսների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրում:

Տվյալների ներկայացում ընդհանուր տեսքով:

Տվյալների վերլուծություն տարբեր մեթոդներով և ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ:

Հաշվետվողականության պատրաստում և ներկայացում քննարկման:

Ռեսուրսներով ապահովման պլանները ձևավորվում են համալսարանի ղեկավարության կողմից տարին մեկ անգամ:

Ռեսուրսներով ապահովման գործընթացները ներառում են պլանային ֆինանսական գործունեությունը՝

-Ֆինանսական պլաններում ռեսուրսների ձեռքբերման համար միջոցների առանձնացում:

-Բյուջետային և արտաբյուջետային ֆինանսների բաշխում ռեսուրսների պլանավորման կտրվածքով:

-Համալսարանի բյուջեի և ծախսերի պլանների կազմում և բաշխում:

Այս գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Քայլ 1.14. Համալսարանի ուսումնական լաբորատորիաների և ամբիոնների տեխնիկական հագեցվածության ապահովում
--

Որակյալ կադրեր պատրաստելու համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան պայմաններ ու նյութատեխնիկական բազա, կահավորված լաբորատորիաներ ու կաբինետներ, տեղեկատվական տեխնոլոգիաների լայնածավալ ու համակողմանի օգտագործման հնարավորություն, ուսումնափորձական տնտեսություններ, որտեղ հիմնականում ձևավորվում են ապագա մասնագետների կիրառական ու գործնական հմտությունները:

2016թ. ՏՏ և ԻԾ կենտրոնի կողմից ստեղծվել է ժամանակակից համակարգչային տեխնիկայով հագեցած 4 մուլտիմեդիոն լսարան: Ձեռք է բերվել 23 նոր համակարգիչ, 9 տպիչ, որից 3-ը բազմաֆունկցիոնալ, 2 պրոյեկտոր, 2 սկաներ, մոնիտորներ, անխափան սնուցման սարքեր և այլ անհրաժեշտ համակարգչային տեխնիկա: Իսկ Տեմպուս GOVERN ծրագրի շրջանակներում ՀԱԱՀ-ը համալրվել է ևս 1 ժամանակակից սերվերով և 1 համակարգչով:

Ծրագրային փաթեթներով հագեցած հինգ նոր համակարգիչ է տրամադրվել նաև 1-ին մասնաշենքի ընթերցասրահին:

2016 թվականին անցկացված համակարգչային տեխնիկայի հաշվառման արդյունքում արձանագրվեց, որ ՀԱԱՀ-ում՝ բոլոր մասնաճյուղերում և գիտական կենտրոններում առկա է 650 համակարգիչ, որոնցից 412-ը միացված են ինտերնետ ցանցին. 197 տպիչ, 29 պրոյեկտոր, 17 սկաներ և 13 էլեկտրոնային գրատախտակ:

Ագրարային կրթությունն ունի կարևոր առանձնահատկություն այն առումով, որ համալսարանի բոլոր մասնագիտությունները կիրառական բնույթի են և լավ մասնագետի պատրաստման կարևոր գրավականը տեսական գիտելիքների ամրապնդումն է պրակտիկ կարողություններով:

Դա է պատճառը, որ Ագրարային համալսարանը հետևողականորեն նորացնում ու ամրապնդում է իր նյութատեխնիկական բազան:

Մասնավորապես, Համալսարանի Ոսկեհատի ուսումնափորձական տնտեսության բնականոն գործունեության ապահովման և հետագա զարգացման համար չափազանց կարևոր նշանակություն ունեցավ խորքային ջրհորի գործարկումը, որը տնտեսության համար ապահովեց բավարար ջրամատակարարում և հնարավորություն ստեղծեց Ոսկեհատի տնտեսությունը դարձնելու օրինակելի բազա

ուսումնական և արտադրական պրակտիկաներն արդյունավետ կազմակերպելու համար:

Երիտասարդ հետազոտողների գիտահետազոտական աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու առումով կարևոր նշանակություն ունեցավ համալսարանում ժամանակակից սարքավորումներով հագեցած Կենսաբանական հետազոտությունների լաբորատորիայի ստեղծումը, որտեղ ուսումնասիրություններ են կատարվում Հայաստանում բուժվող գյուղատնտեսական կենդանիների արժեքավոր ցեղերի և մշակաբույսերի տարբեր սորտերի, ինչպես նաև անհետացման եզրին գտնվող էնդեմիկ տեսակների գենոտիպերի ու ալելոֆոնդերի վերաբերյալ:

Այս գործընթացը կրում է շարունակական բնույթ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 2

Ներդրումային միջավայրի ստեղծմանը և համալսարանն անհրաժեշտ միջոցներով ու սարքավորումներով ապահովելուն ուղղված ֆինանսական քաղաքականության մշակում և հաստատում

Քայլ 2.1. Համալսարանում մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության մշակում և հաստատում

Համալսարանի կողմից մշակվել և հաստատվել է ֆինանսական ռեսուրսների կառավարման և բաշխման քաղաքականությունը և ընթացակարգը (հաստատված է ՀԱԱՀ գիտ.խորհրդի կողմից 06.02.2015թ., արձ. № 9), որի նպատակն է համալսարանի ֆինանսական ռեսուրսների կառավարումը և բաշխումը՝ ռազմավարությամբ սահմանված համալսարանի գիտակրթական նպատակների իրականացման համար:

Սույն քաղաքականությունը որոշում է համալսարանի ֆինանսների կառավարման սկզբունքները, որոնք ընկած են բոլոր ֆինանսական միջոցառումների հիմքում:

Դրանք են՝

-Համապատասխանությունը համալսարանի զարգացման նպատակներին:

Ճկունությունը

-Ֆինանսական պլանի ձևակերպումների հստակությունը, պարզությունը

-Պլանի համախմբվածությունը և ամբողջականությունը

-Պլանի մշակման փուլում կատարողների մասնակցությունը

-Վերահսկողություն

Համալսարանի առաքելությունն է իրականացնել գիտակրթական գործունեություն, օգտագործելով առկա ֆինանսական ռեսուրսները: Իր առաքելությանը համապատասխան միջոցառումներ կազմակերպելիս համալսարանը առաջնորդվում է հստակ ֆինանսական ռազմավարությամբ: Դրա համար այն կազմակերպում և իրականացնում է ֆինանսական ռեսուրսների պլանավորում, բաշխում,

հաշվապահական հաշվառում, ֆինանսական միջոցների և հոսքերի վերահսկում և աուդիտ:

Համալսարանի ֆինանսների կառավարումը և բաշխումը ուղղված է համալսարանի ֆինանսների ռազմավարական նպատակների իրականացմանը:

Քայլ 2.2. Համալսարանում կրթական նպատակների իրականացման համար ֆինանսական միջոցները կառավարելու և բաշխելու մեխանիզմների մշակում և հաստատում

Համալսարանի կողմից մշակվել և հաստատվել է Ֆինանսական ռեսուրսների կառավարման և բաշխման ընթացակարգը (հաստատված է ՀԱԱՀ գիտ.խորհրդի կողմից 06.02.2015թ., արձ. № 9), որը որոշում և նկարագրում է համալսարանի կողմից օգտագործվող ռեսուրսների բաշխման կարգը, բյուջետային ցիկլի գործընթացները և ժամկետները:

Ընթացակարգի խնդիրներն են՝

-Ֆինանսների բաշխման համակարգի կատարելագործումը և զարգացումը, ֆինանսական ռեսուրսների և միջոցների արդյունավետ օգտագործման ապահովումը,

-Ֆինանսատնտեսական մեխանիզմի ստեղծումը և կատարելագործումը, որը կապահովի համալսարանի ֆինանսական ռեսուրսների հստակ և ճիշտ բաշխումը ըստ ռազմավարական գերակա ուղղությունների, Ֆինանսական միջոցների օգտագործման և բաշխման արդյունավետության բարձրացումը,

-Ներդրումային համակարգի զարգացումը՝ համալսարանի ռեսուրսային բազայի զարգացման համար:

Համալսարանի ֆինանսական ռեսուրսների պլանավորման և բաշխման ընթացակարգը ներառում է համալսարանի զարգացման հետևյալ հիմնական սկզբունքները՝

Ֆինանսական ռեսուրսները պետք է կառավարվեն ամբողջությամբ:

Բյուջետային գործընթացը պետք է լինի բաց:

Ռեսուրսների պլանավորումը պետք է ուղեկցվի նրանց բաշխումով:

Բոլոր ֆինանսական գործընթացները պետք է իրականացվել ելնելով համալսարանի ռազմավարությունից:

Ֆինանսների կառավարումը պետք է բաշխված լինի գործընթացի մենեջերների միջև, որոնք պատասխանատու են իրականացված աշխատաքների արդյունքների համար:

Հիմնական բյուջեն կարող է փոփոխվել գործունեության արդյունքների հիման վրա:

Քայլ 2.3. Ֆինանսական միջոցներին համապատասխան՝ համալսարանի

գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականության մշակում և հաստատում

Համալսարանի կողմից մշակվել և հաստատվել է (հաստատված է ՀԱԱՀ գիտ.խորհրդի կողմից 06.02.2015թ., արձ. № 9) Ֆինանսական միջոցների համապատասխան՝ համալսարանի գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականությունը:

Ֆինանսական ռեսուրսների բաշխումը սկսվում է ռազմավարական պլանավորումից, երբ համալսարանը որոշում է իր տեսլականը և զարգացման նպատակները:

Համալսարանի նպատակները սահմանելուց հետո անհրաժեշտ է առանձնացնել համապատասխան ռեսուրսներ՝ նրանք իրականացնելու համար:

Համալսարանի ֆինանսական ռեսուրսների ապահովումը իրականացվում է ըստ հետևյալ քայլերի՝

Նախնական բյուջեի պլանի կազմում պատասխանատու անձանց կողմից,

Ռեսուրսների օգտագործման առաջնային ուղղությունների որոշում՝ համալսարանի խորհրդի կողմից,

Բյուջեի հաստատում և իրականացում:

Իրականացման վերահսկում, թերությունների վերացում:

Բյուջեի կազմումը կարևոր գործընթաց է: Ֆինանսների պլանավորման համար պատասխանատու կառույցը կազմում է նախնական բյուջեն և ներկայացնում քննարկման:

Համալսարանի բյուջեն կազմվում է տարեկան կտրվածքով, պլանավորվում և ներկայացվում է համալսարանի խորհուրդ՝ քննարկման և հաստատման համար:

Բյուջեյի փաթեթը պատրաստվում է գլխավոր հաշվապահի կողմից և բաշխվում ըստ համալսարանի կողմից իրականացվող հիմնական ֆինանսական ապահովման գործառույթների:

Բյուջեն կազմվում է ըստ համապատասխան բյուջեյի կազման ձևանմուշի:

Քայլ 2.4. Պետական, մասնավոր և միջազգային կազմակերպություններից ստացվող ֆինանսական և նյութական միջոցների օգտագործման ընթացակարգի մշակում
--

Համալսարանը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ պետական ֆինանսավորում, ֆինանսական աջակցություն հատուկ գիտական հետազոտությունների իրականացման համար, ֆինանսական միջոցներ ուսանողների վարձավճարներից, համալսարանի զարգացման գրանտային ծրագրեր և այլն:

Ներքին ֆինանսական միջոցների բաշխումը իրականացվում է ըստ գիտակրթական սահմանված ուղղությունների՝ համալսարանի տարեկան բյուջեի տեսքով:

Տարեկան բյուջեյի կազմումը սերտորեն կապված է համալսարանի պլանավորման գործընթացի հետ, և հաստատվում է Համալսարանի հոգաբարձուների խորհրդի կողմից:

Ֆինանսական ռեսուրսների բաշխումը իրականացվում է հետևյալ ուղղություններով ծախսերը իրականացնելու նպատակով՝

-աշխատավարձ,

-ուսումնական գործընթաց,

-կրթական ծառայություններ,

-գիտություն,

-հարկերի վճարումներ,

-ընթացիկ ծախսեր՝ կրթական և նյութատեխնիկական ռեսուրսների ձեռքբերման համար:

Քայլ 2.5. Ֆինանսական միջոցների օգտագործման նպատակայնությունը երաշխավորող աուդիտի իրականացում

Համալսարանում իրականացվում է ֆինանսատնտեսական վիճակի ներքին և արտաքին աուդիտներ (Ֆինանսների տնօրինման քաղաքականություն և ընթացակարգ, հաստատված է ՀԱԱՀ գիտ.խորհրդի կողմից 31.08.2015թ.):

Համալսարանում ըստ սահմանված ժամկետների իրականացվում է ֆինանսատնտեսական վիճակի վերահսկում:

Վերահսկման արդյունքների հիման վրա իրականացվում է ֆինանսատնտեսական ընթացիկ վիճակի վերլուծություն և գնահատում:

Ֆինանսական հաշվետվությունը պետք է պատրաստ լինի առնվազն հաշվետու տարվա ավարտին, և ապահովի հետևյալ կետերը՝

Համեմատել բյուջեն փաստացի ֆինանսական ցուցանիշների հետ:

Ներառել բոլոր եկամուտների և ծախսերի աղբյուրները:

Ապահովել տարեվերջյան մնացորդների կանխատեսում:

Բացահայտել այլ տիպի խնդիրները և բացառությունները:

Վերլուծությունը պետք է իրականացնել հետևյալ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է՝ համոզվել, որ ծախսերը խելամիտ են և անհրաժեշտ նպատակներին հասնելու համար, համոզվել, որ ռեսուրսները օգտագործվում են արդյունավետ, գնահատել և հասկանալ ֆինանսական ցուցանիշները, որոշել առկա են արդյոք բավական ռեսուրսներ աշխատանքները շարունակելու համար, հստակ որոշել խնդիրներ առաջացնող տենդենցները, իրականացնել կրթական միջավայրի փոփոխությունների բացահայտում:

Վերլուծության և գնահատման արդյունքների հիման վրա կազմակերպվում և իրականացվում են ֆինանսական գործունեության բարելավմանը ուղղված միջոցառումներ:

Առողիտների արդյունքը արտացոլող հիմնական փաստաթղթերն են համալսարանի հաշվապահական և ֆինանսական գործունեության վիճակի ստուգման ակտերը և տեղեկանքները:

Տվյալ փուլի իրականացման որակի և արդյունավետության գնահատման ցուցանիշներն են՝

Համալսարանում հաշվապահական, ֆինանսական և օպերատիվ հաշվառման ընդհանուր մակարդակը:

Համալսարանի գույքային վիճակի (նրա ձևավորման միջոցների և աղբյուրների վերաբերյալ) ընդհանուր վերլուծության առկայությունը:

Ֆինանսատնտեսական ինֆորմացիայի հավաքման համակարգի կատարելագործման և տնտեսագիտական չափանիշների կիրառման աստիճանը ֆինանսական պլանավորման և կառավարման ընթացակարգերում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ֆինանսական կառավարման գործընթացում օգտագործման մակարդակը:

Համալսարանի բյուջետային և արտաբյուջետային գործունեության ֆինանսական միջոցներով ապահովվածությունը:

Այս գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Քայլ 2.6. Համալսարանում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության արդյունավետության վերլուծություն

Համալսարանի ֆինանսների կառավարման կառուցվածք տրվում է հետևյալ հիմնական ուղղությունների շրջանակներում՝

Համալսարանի ֆինանսատնտեսական վիճակի վերլուծություն և գնահատում, ֆինանսական գործունեության պլանավորում և ֆինանսական միջոցների բաշխում, ֆինանսների բաշխման վերահսկում:

Համալսարանի ֆինանսատնտեսական վիճակի վերլուծությունը և գնահատումը ներառում է համալսարանի եկամուտների և ծախսերի ընդհանուր և մասնակի վերլուծություն (բյուջետային և արտաբյուջետային), ֆինանսական վիճակի գնահատում և համալսարանի ֆինանսական միջոցներով ապահովվածության բացահայտում՝ ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման համար:

Ֆինանսական ռեսուրսներով ապահովումը ենթադրում է համալսարանի ֆինանսական աղբյուրների կառավարումը և ներառում է հետևյալ գործողությունները՝

-Անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ծավալների գնահատում,

-ֆինանսական ռեսուրսների կենտրոնացման մեթոդների և ժամկետների որոշում, ծախսերի և ռիսկերի գնահատում, ուղղիչ գործողությունների կազմակերպում:

-Այս գործընթացը կրում է շարունակական բնույթ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 3

ՄԿԾ-ների և ռազմավարական պլանի նպատակների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային բազայի հնարավորությունների գնահատման մեխանիզմների մշակում

Քայլ 3.1. Առկա ռեսուրսների ժամանակին բաշխելու մեխանիզմների մշակում

Քայլ 3.2. Առկա ռեսուրսների ժամանակին բաշխելու ընթացակարգի մշակում

Համալսարանի կողմից մշակվել և հաստատվել է (ՀԱԱՀ գիտ.խորհրդի կողմից 06.02.2015թ., արձ. № 9) Ռեսուրսների բաշխում ընթացակարգը, որը սահմանում է համալսարանի ռեսուրսների կառավարման կարգը և ներառում է պլանավորման, իրականացման և արդյունավետության գնահատման գործընթացները:

Սույն ընթացակարգի պահանջները տարածվում են համալսարանի բոլոր ռեսուրսների բաշխման գործընթացներին և դրանց իրականացմանը ուղղված պատասխանատվությունների բաշխմանը:

Ռեսուրսների բաշխման արդյունավետ մեխամիզմը համալսարանի ֆինանսական ռեսուրսների կառավարման առանցքային գործոնն է:

Համալսարանի ռեսուրսային ապահովման տակ հասկացվում է ռեսուրսների ձեռքբերման, համալրման, կատարելագործման, բաշխման, ինչպես նաև պլանավորման, վերահսկման և մշտադիտարկման գործընթացները՝ ուղղված առկա ռեսուրսների արդյունավետ և ռացիոնալ օգտագործմանը:

Համալսարանի առկա ռեսուրսները դասակարգվում են աշխատանքային, նյութական, ֆինանսականի, ինֆորմացիոնի և այլն:

Նյութական, ինֆորմացիոն և աշխատանքային ռեսուրսների ձեռքբերումը, համալրումը, և կատարելագործումը տեղի է ունենում համալսարանի կողմից գնման գործունեության միջոցով:

Ռեսուրսների բաշխումը ենթադրում է համալսարանի գործունեության պլանավորումն ու ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են գործունեությունն իրականացնելու համար:

Ռազմավարական պլանավորման մեջ ռեսուրսների բաշխումը դրված նպատակներին հասնելու համար առկա ռեսուրսների օգտագործման պլանն է: Այն իրենից ներկայացնում է սահմանափակ ռեսուրսների բաշխման գործընթաց՝ տարբեր բիզնես-գործընթացների միջև: Կարող է կիրառվել նպատակների իրականացման գերակայությունների ընտրություն և դրանց առաջնայնության ապահովում:

Համալսարանի ռեսուրսների բաշխման ընթացակարգը ներառում է համալսարանի զարգացման հետևյալ հիմնական սկզբունքները՝

Ռեսուրսները պետք է կառավարվեն ամբողջությամբ:

Ռեսուրսների պլանավորումը պետք է ուղեկցվի նրանց բաշխումով:

Բաշխման գործընթացը անհրաժեշտ է իրականացնել ելնելով համալսարանի առաքելությունից:

Ռեսուրսների բաշխման ֆինանսների կառավարումը պետք է բաշխված լինի պատասխանատուների միջև, որոնք պատասխանատու են իրականացված աշխատաքների արդյունքների համար:

Հիմնական բյուջեն կարող է փոփոխվել գործունեության արդյունքների հիման վրա:

Ռեսուրսների բաշխման գործընթացը կարելի է ներկայացնել փոխկապակցված գործողությունների հաջորդականության տեսքով՝

Սպառողների պահանջների և կրթական գործընթացի բնութագրիչների անհամապատասխանությունների բացահայտում և վերանայում:

Առկա անհամապատասխանությունների վերացման առաջնահերթությունների որոշում:

Գիտակրթական գործունեության կազմակերպում՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների առաջնայնությունները:

Ռեսուրսային ապահովման փաստացի մակարդակի գնահատում և փաստացի ռեսուրսային ապահովման մակարդակի որոշում՝ առավելագույնս հնարավոր նրա արժեքի նկատմամբ:

Ֆինանսական ռեսուրսները անհրաժեշտ են կրթական գործընթացի գործառնման նորմալ պայմանների ստեղծման համար: Նրանց միջոցով կարելի է կարգավորել բոլոր մնացած ռեսուրսները՝

Նյութական ռեսուրսները՝ ուսուցման տեխնիկական միջոցների ձեռքբերման միջոցով:

Տեղեկատվական ռեսուրսները՝ ուսուցման ծրագրային արտադրանքի ու ուսուցման մեթոդաբանության ձեռքբերման կամ մշակման միջոցով:

Աշխատանքային ռեսուրսներ՝ պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի խթանման միջոցով:

Համալսարանի բաշխման ենթակա ռեսուրսներն են՝

Դասավանդմանը առնչվող ռեսուրսներ,

Գիտությանը առնչվող ռեսուրսներ, մասնավորապես ասպիրանտուրայի ուսանողների ուսումնառության միջոցներ,

Կրթական ծառայություններին ուղղված ռեսուրսներ,

Կոմունալ ծախսերին ուղղված ռեսուրսներ:

Քայլ 3.3. Առկա ռեսուրսների ժամանակին բաշխելու գործընթացների իրականացում

Ռեսուրսների բաշխումը իրականացվում է կենտրոնացված կառավարման համակարգում, որը խիստ կապված է բյուջետավորման հետ:

Համալսարանի բյուջեյին համապատասխան իրականացվում է սահմանված ռեսուրսների բաշխում, մասնավորապես նյութատեխնիկական ռեսուրսների բաշխում համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ:

Այս գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Քայլ 3.4. Որակի շարունակական բարելավումն ու կայունությունը ապահովելու նպատակով համալսարանի ռեսուրսային բազայի արդյունավետության վերլուծության իրականացում

Համալսարանի Որակի վերահսկման հանձնաժողովը և Ընդհանուր գծով պրոռեկտորը ուսումնական տարվա ընթացքում իրականացնում են ստուգումներ՝ ուղղված ռեսուրսների բաշխման հստակ կազմակերպմանը: Ռեսուրսների բաշխման որոշումը անխուսափելիորեն պահանջում է ռեսուրսների վերաբերյալ տարբեր հարցումների կազմակերպում՝ տարանջատելով տարբեր առաջնային ոլորտները:

Որակի շարունակական բարելավումն ու կայունությունը ապահովելու նպատակով հարցումներ են անցկացվում դասախոսական կազմի և ուսանողների շրջանում:

Ստուգումների և հարցումների ընթացքում վեր են հանվում բաշխման թերությունները, իրականացվում է փաստերի վերլուծություն և գնահատում: Կազմվում է համապատասխան հաշվետվություն:

Այս գործընթացը կրում է շարունակական բնույթ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 4

Տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգերի մշակում և հաստատում

Քայլ 4.1. Տեղեկատվական և փաստաթղթաշրջանառության կառավարման կանոնակարգի մշակում և հաստատում

Համալսարանի կողմից մշակվել և հաստատվել է (ՀԱԱՀ գիտ.խորհրդի կողմից 03.06.2016թ.) Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման կանոնակարգը, որը հանդիսանում է համալսարանի փաստաթղթաշրջանառության կազմակերպման և վարման միասնական մեթոդաբանական հիմքը:

Կանոնակարգը պարտադիր է համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կիրառման համար:

Փաստաթղթերի կառավարման գործողությունները ներառում են՝ փաստաթղթերի անհրաժեշտության որոշում, մշակվող փաստաթղթերի պլանավորում, աշխատանքային խմբերի ձևավորում, մշակում, փորձաքննություն, գրանցում որակի վերահսկման և ինքնավերլուծության բաժնում, համաձայնեցում պրոռեկտորների և այդ ոլորտի մնացած շահագրգիռ կողմերի հետ (ստորաբաժանումների ղեկավարներ), հաստատումը ռեկտորի կողմից, ներդրման հրամանի պատրաստում, փաստաթղթերի տարածման համար թերթերի կազմում,

տեղադրում որակի վերահսկման և ինքնավերլուծության բաժնի էլեկտրոնային տվյալների բազա, փաստաթղթերի տարածում և տեղեկացում, պահպանում և կիրառում, մշտադիտարկում և աուդիտ, փաստաթղթի արդիականացում, և անհրաժեշտության դեպքում անվավեր ճանաչում կամ վերացում:

Քայլ 4.2. Փաստաթղթերի ընդունման և գրանցումների կառավարման ընթացակարգի մշակում և հաստատում

Գրանցումների կառավարումը ներառում է հետևյալ փուլերը՝

- գրանցումների ցուցակի սահմանում, ձևերի մշակում,
- գրանցումների վարում,
- հավաքագրված ինֆորմացիայի մշակում և վերլուծություն,
- գրանցումների պահպանում,
- գրանցումների ոչնչացում կամ հանձնում արխիվ:

Գրանցումները (առաջնային, մշակված և համակարգված) տարվում են համալսարանի գործունեության և գործընթացների որակի ապահովման նպատակով:

Համալսարանի մակարդակի վրա գրանցումների կառավարման պատասխանատվությունը կրում է ռեկտորը: Ըստ գործունեության տեսակի, որակի կառավարման համակարգի շրջանակներում գրանցումների կառավարման համար պատասխանատու են պրոռեկտորները և այլ ղեկավար անձինք: Ստորաբաժանումներում գրանցումների վարման համար պատասխանատու են ստորաբաժանումների ղեկավարները:

Գրանցումներ տանող բոլոր պատասխանատուները հաշվետու են ֆիքսված ինֆորմացիայի հավաստելիության և ժամանակին ներկայացման, տրամադրվող ձևերի ճիշտ լրացման համար:

Գրանցումներում ոչ հավաստի ինֆորմացիայի ներկայացումը կամ նշված ժամանակահատվածում չներայացումը որակավորվում է որպես գրանցման կարգի խախտում:

Քայլ 4.3. Ինֆորմացիոն միջավայրի կառավարման ընթացակարգի մշակում և հաստատում

Համալսարանի կողմից մշակվել և հաստատվել է (ՀՊԱՀ գիտ.խորհրդի կողմից 31.08.2012թ.) Ինֆորմացիոն միջավայրի կառավարման ընթացակարգը, որը հաստատում է համալսարանի ինֆորմացիոն միջավայրի որոշման, նկարագրման և կառավարման կարգը:

Ընթացակարգի պահանջները պարտադիր են համալսարանի բոլոր ստորաբաժանումների և կառույցների կիրառման համար, որոնք անմիջականորեն կապված են համալսարանի անհրաժեշտ ինֆորմացիոն միջավայրի պլանավորման և ստեղծման հետ:

Համալսարանում պետք է ստեղծել ինֆորմացիոն միջավայր, որը համապատասխանի կրթական, գիտական և կազմակերպական գործընթացների նյութատեխնիկական ապահովման նորմաներին և պահանջներին:

Ինֆորմացիոն միջավայրը իրենից ներկայացնում է համալսարանի կրթական տարածության մաս, որն ապահովում է մուտքը դեպի տարբեր ինֆորմացիոն ռեսուրսները և հանդիսանում է համալսարանի աշխատակիցների և դասավանդողների գործունեության հիմնական գործիքը, և ուսումնառողների ուսումնառության միջոց: Այն թույլ է տալիս արտաքին շահակիցներին ստանալ ինֆորմացիա համալսարանի ինֆորմացիոն ռեսուրսների և ծառայությունների վերաբերյալ: Ինֆորմացիոն միջավայրը պետք է համապատասխանեցված լինի ուսումնական, գիտական և կառավարման գործընթացներին, և հագեցված լինի այդ միջավայրն ապահովող սարքավորումներով և այլ միջոցներով:

Համալսարանը պետք է հաստատի և ապահովի փաստաթղթային տեսքով ձևակերպված ինֆորմացիոն միջավայրի կառավարման ոլորտի նպատակների և խնդիրների աշխատանքային վիճակը համալսարանի յուրաքանչյուր ստորաբաժանման համար: Ինֆորմացիոն միջավայրը պետք է փոխկապակցի կրթական, գիտական և կառավարման ոլորտները:

Ինֆորմացիոն միջավայրի կառավարմանը ուղղված գործունեությունը պետք է նախատեսի՝

Տեղեկացման ծրագրի մշակում:

Համալսարանի միասնական ցանցային ենթակառուցվածքի նախագծի մշակում և նրա ներդրում:

Գործարարական ընթացակարգերի կոմպլեքս ավտոմատացում:

Համալսարանի միասնական կրթական միջավայրի զարգացում:

Համալսարանի անձնակազմի և ուսանողության ուսուցանում և խորհրդատվության տրամադրում:

Համալսարանի ավտոմատացված ինֆորմացիոն համակարգի անընդհատ զարգացման կազմակերպում:

Քայլ 4.4. Անհամապատասխանությունների կառավարման ընթացակարգի մշակում և հաստատում

Որակի համակարգի փաստաթղթային բազայի ստուգումը իրականացվում է աուդիտի ծրագրի և պլանի համաձայն:

Աուդիտի ժամանակ փաստաթղթերի ստուգումը իրականացվում է ըստ հետևյալ չափանիշների՝

- փաստաթղթերի բովանդակության և ամբողջականության ստուգում,
- փաստաթղթերի համապատասխանությունը ձևավորման պահանջներին,
- փաստաթղթերի կառուցվածքային համապատասխանությունը դրվող պահանջներին,

-ստորաբաժանման գործընթացների որակի ապահովման պայմաններ (գործունեություն, գործունեությանը և նրա արդյունքների նկատմամբ պահանջներ, անձնակազմի որակավորումները, ապահովումը ռեսուրսներով):

Փաստաթղթերում հայտնաբերված անհամապատասխանությունները աուդիտորի կողմից գրանցվում են անձանագրության թերթում:

Քայլ 4.5. Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման համակարգի ստեղծում
--

Համակարգը իր մեջ ներառում է.

-Փաստաթղթաշրջանառության կազմակերպման սկզբունքները:

-Փաստաթղթերի ընդունման և փոխանցման գործողությունների կենտրոնացում:

-Փաստաթղթերի բաշխում փաստաթղթային հոսքերի, որոնք ունեն նույն ուղին:

-Ստացվող փաստաթղթերի նախնական քննարկման կազմակերպում:

-Փաստաթղթերի միանգամյա գրանցում:

Համալսարանի փաստաթղթաշրջանառության մեջ հետևյալ փաստաթղթային հոսքերի առանձնացում՝

-Ստացվող փաստաթղթեր (մուտքային). Համալսարան ստացված պաշտոնա-կան փաստաթղթեր:

-Ուղարկվող փաստաթղթեր (ելքային). Համալսարանից ուղարկվող պաշտոնական փաստաթուղթ:

-Ներքին ինֆորմացիա. Համալսարանի սահմաններից դուրս չեկող պաշտոնական փաստաթուղթ: Տվյալ փաստաթղթերը օգտագործվում են աշխատանքների կազմակերպման համար: Ներքին փաստաթղթերին են վերաբերում կազմակերպա-իրավական, կազմակերպակարգադրական և տեղեկատվավերլուծական փաստաթղթերը:

Հիմնական փաստաթղթային հոսքերը իրականացվում են համալսարանի պաշտոնյա մարմինների կողմից:

Մուտքային փաստաթղթերի ստացումը և ելքայինի ուղարկումը իրականացվում է փոստի կամ հեռահաղորդակցման այլ միջոցներով:

Փաստաթղթաշրջանառության կազմակերպման կարգը.

Փաստաթղթաշրջանառության հիմնական ընթացակարգերն են.

Մուտքային փաստաթղթերի ընդունում և առաջնային մշակում:

Մուտքային փաստաթղթերի նախնական ուսումնասիրում:

Մուտքային փաստաթղթերի գրանցում:

Մուտքային փաստաթղթերի ուսումնասիրում ղեկավարության կողմից և տրամադրում կատարողներին:

Մուտքային փաստաթղթերի մշակում, կատարում, ելքայինի պատրաստում:

Փաստաթղթերի թղթային տարբերակների և պատճենների քանակի կրճատում և դրանց փոխարինումը էլեկտրոնայինով:

Ելքային փաստաթղթերի գրանցում:

Ելքային փաստաթղթերի ուղարկում:

Ներքին փաստաթղթերի մշակում, ձևակերպում և գրանցում:

Փաստաթղթաշրջանառության հաշվառում, ծավալների վերլուծություն:

Համալսարանի փաստաթղթային ֆոնդը ձևավորվում է գործերի կոնսոլիդացված (միացված) անվանացանկի մշակման և վարման, նրանց պահպանման, հաշվառման և փոխանցման միջոցով:

Կոնսոլիդացված անվանացուցակը փաստաթղթերի և գործերի անվանումների համակարգված ցուցակ է՝ նրանց պահման ժամկետների նշումով:

Գործերի անվանացուցակի կիրառումը նպաստում է վարվող գործերի միավորմանը, ճիշտ և միատեսակ ձևավորմանը ու պահմանը:

Յուրաքանչյուր գործ ունի իր պահման ժամկետները, որը ավարտվելուց հետո գործը հանձնվում է արխիվ:

Քայլ 4.6. Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման գործընթացների բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում

Համալսարանում ինֆորմացիոն միջավայրի համակարգված բարելավման ապահովումը անհրաժեշտ է անցկացնել պլանավորված կարգով: Ինֆորմացիոն միջավայրի զարգացմանը ուղղված աշխատանքների պլանավորումը պետք է իրականացվի համալսարանի կառավարման բոլոր մակարդակներում (ռեկտորատ, ֆակուլտետ, ամբիոն, լաբորատորիա և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ):

Համալսարանում յուրաքանչյուր տարի կազմվում է ինֆորմացիոն միջավայրի զարգացման համար կազմակերպատեխնիկական միջոցառումների պլան: Պլանը հաստատվում է համալսարանի ռեկտորի կողմից:

Ինֆորմացիոն միջավայրի բարելավման աշխատանքների պլանավորման նպատակն է՝

Մուտքի ապահովումը դեպի էլեկտրոնային ինֆորմացիոն միջավայր:

Համալսարանի անձնակազմի ապահովումը աշխատանքի արդյունավետ գործիքով:

Ուսանողներին ուսումնառության միջոցով ապահովումը:

Կառավարման գործընթացների ավտոմատացում՝ հաշվի առնելով անհատական տվյալների անվտանգությանը ուղղված պահանջները:

Քայլ 4.7. Համալսարանում գործող տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության վերլուծության իրականացում

Քանի որ այս փաստաթուղթը հաստատվել է 03.06.2016թ. ՀԱԱՀ գիտ.խորհրդի կողմից, հետևապես համալսարանում գործող տեղեկատվության և

փաստաթղթաշրջանա-ռության գործընթացների կառավարման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության վերլուծություն պետք է իրականացնել առնվազն մեկ շրջափուլ հետո:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 5

ՈՒսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմների մշակում և հաստատում

Քայլ 5.1. Կրթական գործընթացների կարգավորմանն ուղղված ծրագրերի մշակում և իրագործում

Կրթական գործընթացների իրականացման ռեսուրսներից են՝ լսարաններ, լաբորատորիաներ (այդ թվում նաև ուսումնական կաբինետ, համակարգչային լսարան, կլինիկա), գրադարան, համակարգչային ծառայություն, ուսումնափորձնա-կան տնտեսություններ:

Լսարանների և լաբորատորիաների օգտագործման համար կազմվում են գրաֆիկներ տեսական և լաբորատոր-գործնական պարապմունքների անցկացման, բաց թողնված լաբորատոր պարապմունքների լրացման համար:

Լսարանները և լաբորատորիաները հասանելի են ինչպես ուսանողների, այնպես էլ դասավանդողների համար գիտափորձեր դնելու, արտաժամյա պարապմունքներ անցկացնելու, կուրսային և դիպլոմային աշխատանքներ կատարելու, խորհրդատվություններ անցկացնելու համար:

Կրթական ծրագրերի կատարման և արդյունավետության գնահատման համար դեկանատներում I և II կիսամյակների ավարտին կազմվում են հաշվետվություններ, վերլուծում կրթական ձեռքբերումների, ինչպես քանակական, այնպես էլ որակական ցուցանիշները, հաշվետվությունները քննարկվում են ֆակուլտետների գիտական խորհուրդներում և ընդունվում գործընթացի բարելավման համար համապատասխան որոշումներ:

Համալսարանի մասշտաբով կրթական գործընթացների արդյունքների տարեկան ամփոփիչ հաշվետվության կազմում և համալսարանի գիտական խորհրդի քննարկման է ներկայացնում ռեկտորը, իսկ ուսումնական տարվա ուսումնական գործընթացի արդյունքները և խնդիրները ներկայացնում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը: Հաշվետվություններում մանրամասնորեն քննարկվում են կրթական գործընթացների ձեռքբերումները, բացթողումները և թերացումները: Քննարկումների հիման վրա համալսարանի գիտական խորհուրդը ընդունում է գործընթացի արդյունավետության բարձրացման համար համապատասխան որոշումներ, նշելով կատարման ժամկետները, պատասխանատուները:

Այս գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Քայլ 5.2. Կրթական գործընթացների իրականացման արդյունքների վերլուծության իրականացում

Համալսարանում կրթական գործընթացների իրականացման արդյունավետության վերլուծության նպատակով իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

Ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների բացահայտում և գնահատում կրթական միջավայրից հարցումների միջոցով,

Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության ներքին գնահատում՝ ներքին աուդիտների միջոցով և այլն:

Իրականացվող միջոցառումների ավարտին կատարվում է արդյունքների վերլուծություն և գնահատում:

Համալսարանում կրթական գործընթացներից ներքին շահակիցների կախիքների գնահատումը իրականացվում է ԿԲՌՊՆՏ բաժնի կողմից:

Համալսարանի շահակիցների կախիքների գնահատման վերլուծությունը ըստ գնահատման ցուցանիշների ներկայացված է «ՀԱԱՀ շահակիցների բավարարվածության մակարդակի մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ» հաշվետվությունում:

Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության վերլուծությունը և գնահատումը իրականացվում է Ուսումնական գործընթացի վերահսկման, ինքնավերլուծության և որակի կառավարման բաժնի կողմից: Արդյունքները և համապատասխան վերլուծությունները ներկայացվում են հաշվետվության տեսքով և ներկայացվում համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը:

Վերլուծության արդյունքների հիման վրա կայացվում են որոշումներ համալսարանի գիտական խորհրդի կողմից: Որոշումները առկա են Համալսարանի կայք էջի Փաստաթղթեր բաժնի գիտական խորհրդի որոշումներ էջում:

Հղում՝ <https://www.anau.am/hy/2013-12-11-12-51-33/2013-12-12-06-23-59>

Քայլ 5.3. Ուսումնառողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման գործող մեխանիզմների և ծառայությունների արդյունավետության վերլուծության իրականացում

Համալսարանում տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման նպատակով իրականացվում են անանուն հարցումներ ուսումնառողների և դասավանդող կազմի շրջանում:

Հարցումները իրականացվում են մշակված, վալիդացված և հաստատված հարցաթերթիկների միջոցով:

Հղում՝ https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/harcumneri_anketaner/SQ.pdf

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/harcumneri_anketaner/PQ.pdf

Հարցումները որպես մեխանիզմ ապահովում են անհրաժեշտ արդյունավետություն, քանի որ հարցումը անանուն է, ինչը թույլ է տալիս լիարժեք բացահայտել և գնահատել ռեսուրսների կիրառելիությունը, հասանելիությունը և արդյունավետությունը:

Ուսումնառողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման արդյունքները պահվում են հարցաթերթիկների տեսքով և հաշվետվության տեսքով («ՀԱԱՀ շահակիցների բավարարվածության մակարդակի մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ հաշվետվության» մաս է):

Համալսարանն ունի անհրաժեշտ ռեսուրսներ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար:

«Հասարակական պատասխանատվություն» չափանիշի սահմաններում Համալսարանն իր առջև դրված առաջնահերթ խնդիրներ է դիտում հետևյալ հարցերի լուծումը.

- Համալսարանի արտաքին շահակիցների համար ներբուհական գործընթացների թափանցիկության, արտաքին հաշվետվողականության և հասարակության հետ հետադարձ կապի ապահովում
- Համալսարանի կողմից հասարակությանը գիտելիքի փոխանցման ապահովում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 1

Արտաքին շահակիցների համար հաշվետվողականության արտաքին ձևերի և ներքուհական գործընթացների թափանցիկության կատարելագործում

Քայլ 1.1. Համալսարանի շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովող քաղաքականություն և ընթացակարգերի մշակում և հաստատում

Քայլ 1.2. Համալսարանի շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների մշակում և հաստատում

Քայլ 1.3. www.azdarar.am պաշտոնական ինտերնետային և համալսարանի պաշտոնական կայքում (www.anau.am) համալսարանի ռեկտորի և այլ ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների հրապարակում

Քայլ 1.4. Համալսարանի պաշտոնական կայքում (www.anau.am) համալսարանի կողմից կայացված որոշումների, իրադարձությունների և այլ հաշվետվությունների հրապարակում

Քայլ 1.5. Հասարակությունը հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների արդյունավետության վերլուծության իրականացում

Բարելավման գործողություններ

1. Շահակիցներից ստացված արձագանքների հավաքագրում, կանոնակարգում և վերլուծում

Համալսարանը կարևորում է շահակիցներից ստացված ցանկացած կարծիք: Մենք հաշվի ենք առնում յուրաքանչյուր առաջարկություն ու դիտողություն: Արտաքին շահակիցների առաջարկությունները վեր հանելու համար ընտրված են տարբեր մեխանիզմներ և գործիքներ:

Համալսարանում շահակիցների շրջանում տեղեկատվության տարածման հիմնական մեխանիզմներն ու մեթոդներն են՝

- ✓ Ներքին շահակիցների համար սեմինարների անցկացումը,
- ✓ Համալսարանի պաշտոնական կայքում և պետական կայքերում հրապարակումների տեղադրումը,
- ✓ Համալսարանի պաշտոնական թերթում նյութերի հրապարակումը,
- ✓ Նորությունների հրապարակումը,
- ✓ ԶԼՄ-ների միջոցով հրապարակումների իրականացումը:

Հղում՝ <https://www.anau.am/>

Շահակիցներին տեղեկատվության տրամադրման արդյունքում համալսարանը կայքի հետադարձ կապի միջոցով նրանցից ստանում է արձագանք և դրա հիման վրա կազմակերպում է համալսարանի գործունեության բարելավումները:

- Շահակիցների հետ կապի հաստատման մեխանիզմներն են՝
- Կայքի միջոցով կարծիքների ուսումնասիրությունը,
- Ֆոկուս խմբերի կազմակերպումը,
- Հարցումների կազմակերպումը և անցկացումը,
- Շահակիցների բողոքների ուսումնասիրությունը,
- Շահակիցների հետ կազմակերպվող հանդիպումների արձանագրությունների կազմումը:

Շահակիցների հետ կապի հաստատման մեխանիզմներից SS և ԻՕ կենտրոնը կանոնակարգված ձևով իրականացնում է պաշտոնական էլեկտրոնային հասցեով շահակիցներից ստացված բոլոր նամակների համապատասխան ստորաբաժանումներին տրամադրման գործընթացը և անհրաժեշտության դեպքում ապահովում է նաև հետադարձ կապի ընթացքը, ինչպես նաև պահպանում է ստացված նամակների և դրանց պատասխանների բազան:

Համալսարանի պաշտոնական էլ.փոստ՝ info@anau.am

SS և ԻՕ կենտրոնի կողմից կապի այլ միջոցներին զուգահեռ ներդրվել է օնլայն հարց ու պատասխանի «skype» ծրագիրը, որ հնարավորություն է տալիս գլխավոր էջից զանգահարել կամ արագ նամակագրության միջոցով ստանալ բուհի հետ կապված ցանկացած հարցի պատասխան: Ստացված բոլոր զանգերն արձանագրվում են մատյանում և ցանկացած հարցադրման տրվում է սպառիչ պատասխան:

Համալսարանում գործում է նաև «Շահակիցներին տեղեկատվության ապահովման քաղաքականություն և ընթացակարգ», որը հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից 24.05.2013 թվականին (արձանագրություն № 13):

Հայաստանի ազգային ազրարային համալսարանը «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր տարի համալսարանի տարեկան գործունեության և ֆինանսական հաշվետվությունները, անկախ աուդիտորական ընկերության կողմից տրված եզրակացությունը տեղադրվում են azdarar.am հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջում:

Հղում՝ <https://www.azdarar.am/announcements/org/131/>

2. Համալսարանի կողմից տրամադրված որակական եվ քանակական տեղեկատվության հրապարակումների գնահատման մեխանիզմների արդյունավետության վերլուծության իրականացում եվ հասարակության հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների արդյունավետության վերլուծության իրականացում

Պաշտոնական կայքէջում ստեղծել ենք նաև «Փաստաթղթեր» հիմնական բաժինը, որը հնարավորություն է տալիս Հայաստանի ազգային ազրարային համալսարանի անհրաժեշտ բոլոր փաստաթղթերն ամփոփել մեկ բաժնում, ինչը կայքից օգտվողների համար տեղեկատվության որոնումն ավելի դյուրին է դարձնում:

«Փաստաթղթեր» հիմնական բաժնում ներառված են հետևյալ ենթաբաժինները.

- Ռազմավարություն
- Կանոնադրություններ

- Կանոնակարգեր
- հոգաբարձուների խորհրդի որոշումներ
- Ռեկտորատի որոշումներ և հրամաններ
- Գիտական խորհրդի որոշումներ
- Հաշվետվություններ
- Ծրագրեր
- Ուղեցույցներ

Հղում՝ <https://www.anau.am/> / «Փաստաթղթեր»

Ամեն մի ենթաբաժնում առկա է համապատասխան տեղեկատվություն: Այսպիսով, համալսարանի կայքը հասանելի է դարձնում շահակիցների համար բուհում առկա բոլոր հաշվետվությունները, այդ թվում համալսարանի գործունեության համառոտ հաշվետվությունները, վերլուծությունները, ինչպես նաև որակական և քանակական հետազոտությունների տվյալները, որոնք տրամադրվում են համապատասխան ստորաբաժանումների կողմից:

Համալսարանի պաշտոնական anau.am կայքի տարեկան այցելությունների թիվը կազմում է մոտ 230 000: Կայքը պարունակում է համալսարանին առնչվող հագեցած տեղեկատվություն, մասնավորապես նորություններ բաժնում լուսաբանվում է համալսարանում իրականացող ցանկացած իրադարձություն, միջոցառում: Առկա է նաև հայտարարությունների բաժին, բաժիններ՝ նախատեսված հատուկ

ուսանողների <http://anau.am/hy/component/content/article/483>,

շրջանավարտների <http://anau.am/hy/2011-11-07-07-19-59>,

դիմորդների <http://anau.am/hy/2011-10-24-07-02-23>,

աշխատակիցների <http://anau.am/hy/2011-11-07-07-27-03>,

գործատուների <http://anau.am/hy/2011-11-07-07-48-51> համար:

Առկա է նաև ֆակուլտետներին, ամբիոններին և ուսումնական գործընթացին առնչվող այլ տեղեկատվություն:

Ուսանողներին և դասախոսներին, ինչպես նաև համալսարանի արտաքին շահակիցներին տեղեկատվություն մատուցելու հաջորդ հարթակը համալսարանի աշխատակիցների, անվանի շրջանավարտների և երախտավորների շտեմարան-կայքէջն է, որը պարունակում է բուհում դասավանդող գրեթե բոլոր դասախոսների նկարները, կենսագրական տվյալները, գիտական գործունեության ու հրապարակումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ դասակարգված ըստ ամբիոնների: Այս բազայում ներկայացված են նաև համալսարանի երախտավորների կենսագրական տվյալներն ու շրջանավարտների մասին մանրամասն տեղեկատվություն: Բազան պարբերաբար համալրվում ու թարմացվում է: Այսօրվա դրությամբ ներառված է 577 դասախոսի, 74 շրջանավարտի և 18 երախտավորի կենսագրական տվյալ:

Համալսարանում հրատարակվում է եռամսյա «Տեղեկագիր» պարբերականը, որում հրապարակումների մատչելիությունը և օբյեկտիվությունը ապահովվում է երկու բաղադրիչով.

1. «ՀԱԱՀ տեղեկագիր» գիտական ամսագրում հոդվածների տպագրության համար յուրաքանչյուր համարի վերջին էջում մանրամասն ներկայացված են հրապարակման ենթակա հոդվածի չափանիշները http://anau.am/images/stories/journal/1_2016/Bull_53.pdf,

2. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի այն աշխատակիցները, ովքեր չեն տիրապետում անգլերենին, «ՀԱԱՀ տեղեկագիր» գիտական պարբերականի համար նախատեսված հոդվածները կարող են ներկայացնել ռուսերեն և հայերեն լեզուներով: Այդ հոդվածները անվճար կթարգմանվեն անգլերեն և կհրապարակվեն գիտական տեղեկագրում:
<http://anau.am/hy/2011-09-06-05-41-14/1743>

Համալսարանում գործում է նաև «Հասարակությանը տեղեկատվության ապահովում» ընթացակարգ և ՀԱԱՀ շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման քաղաքականություն, որը հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից 01.07.2013 թվականին (արձանագրություն № 14):

3. Ներքուհական գործընթացների թափանցիկության կատարելագործում

Տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոնի կողմից նախագծվել և ներկայումս շարունակվում են բուհի ավտոմատացված կառավարման համակարգի զարգացման աշխատանքները: Համակարգը հնարավորություն կտա ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների կիրառմամբ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում ուսումնական գործընթացը կազմակերպել ժամանակակից կրթական պահանջներին համահունչ: eBuh համակարգը զգալիորեն կնվազեցնի մարդկային գործունի կողմից թույլ տրվող սխալների հավանականությունը, տեղեկատվությունը վերջնական հասցեատիրոջը կհասնի անհամեմատ արագ և կապահովի դեկանատների գործունեության թափանցիկությունը: Համակարգը փորձնական ներդրվել է համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում և գտնվում է թեստավորման փուլում: Համակարգ են մուտքագրվել համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի բոլոր ուսանողների տվյալները (անձնական տվյալները, գնահատականները, ուսման վարձի և կրթաթոշակի հետ կապված տվյալները և այլն) 2016-2017 ուսումնական տարվա համար: Այժմ մուտքագրվում է նաև ուսանողների վերաբերյալ նախորդ ուսումնական տարիների տեղեկատվությունը: Ամբողջությամբ մուտքագրված են դասախոսների տվյալները և կազմված են տնտեսագիտական ֆակուլտետը սպասարկող ամբիոնների ծանրաբեռնվածությունները տվյալ ֆակուլտետի մասով:

Համակարգի միջոցով կազմվել է նաև տնտեսագիտական ֆակուլտետի բոլոր կուրսերի դասացուցակը:

Համակարգ են ներմուծվել նաև դասավանդվող առարկաների առարկայական ծրագրերի 80%-ը: Ներկա պահին համակարգը լիովին պատրաստ է, իսկ հաջորդ քայլով նախատեսվում է համակարգի միջոցով իրականացնել ուսանողների հաշվառում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 2

Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում

Քայլ 2.1. Հետադարձ կապի հաստատման քաղաքականության և ընթացակարգի մշակում և հաստատում

Քայլ 2.2. Հետադարձ կապերի հաստատման մեխանիզմների և գործիքների մշակում

Բարելավման գործողություններ

1. Հետադարձ կապերի մեխանիզմների եվ գործիքների մշակում, համալսարանում գործող հասարակայնության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմների արդյունավետության վերլուծության իրականացում

SS և ԻԾ կենտրոնի կողմից մշակվել և anau.am պաշտոնական կայքէջում ներդրվել են հետադարձ կապերի մեխանիզմներ և գործիքներ: Դրանք են.

- Հղում կայքի գլխավոր էջից - Կայքի գլխավոր էջում միանգամից աչքի է ընկնում կայքի այցելուների համար հատուկ հաղորդագրությունը՝ համապատասխան հղումով: <http://www.anau.am/hy/about-us/feedback>, որտեղ կայքի յուրաքանչյուր այցելու կարող է թողնել համալսարանին և կայքին վերաբերող ցանկացած դիտողություն ու առաջարկություն:
- «Հետադարձ կապ» բաժնում առկա են համալսարանի կոնտակտային տվյալները (հասցե, հեռախոս, E-mail), ինչպես նաև ստեղծված է հնարավորություն կայքից օգտվող ցանկացած անձի թողնել համապատասխան հաղորդագրություն և սեղմ ժամկետներում ստանալ իրեն հուզող հարցի պատասխանը: <http://www.anau.am/hy/about-us/feedback>,
- «Ռեկտոր» բաժնի մեջ գործում է նաև «Նամակ ռեկտորին» ենթաբաժինը, որը հնարավորություն է տալիս ցանկացած ուսանողի կամ կայքից օգտվող յուրաքանչյուր անձի իրեն հետաքրքրող հարցի վերաբերյալ նամակ գրել ռեկտորին: <http://www.anau.am/hy/rector/massage-to-rector>,
- «Skype» - օնլայն հարց ու պատասխանի ծրագիր, որը շաբաթվա երեք օրերին՝ երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ հնարավորություն է տալիս շահառուներին զանգահարել կամ արագ նամակագրության միջոցով կապ հաստատել բուհի հետ և ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանները:
- «Mulberry» ծրագրային փաթեթը հնարավորություն է տալիս բուհի և արտաքին շահառուների միջև տեղեկատվության փոխանակման գործընթացը դարձնել առավել արդյունավետ ու թափանցիկ: Մասնավորապես, ցանկացած ուսանողի կամ արտաքին շահառուի նամակ կամ դիմում մուտքագրելիս տրամադրվում է առցանց համար, որը հնարավորություն է տալիս հետևել իր փաստաթղթի շարժի ամբողջ ընթացքին, ինչպես նաև

կարող է վերջինիս գրության պատասխանը ստանալ էլեկտրոնային եղանակով:

- «Համալսարանի պաշտոնական էլեկտրոնային հասցե» - բոլոր շահակիցները հնարավորություն ունեն նամակներ ուղարկել բուհի ցանկացած ստորաբաժանման: Ստացված բոլոր նամակները տրամադրվում են համապատասխան ստորաբաժանումներին և անհրաժեշտության դեպքում ապահովվում է նաև հետադարձ կապի ընթացքը:

Վերոնշյալ մեխանիզմներից շահակիցների կողմից ավելի հաճախ կիրառվում է համալսարանի պաշտոնական էլեկտրոնային հասցեն:

Հետադարձ կապի ներդրված մեխանիզմներից է նաև Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի (ՄՏԲ) կայքի միջոցով շրջանավարտների հետ հետադարձ կապի հնարավորությունը:

ՄՏԲ-ուսանող, ուսանող-ՄՏԲ երկկողմ տեղեկատվական հոսքի արդյունավետությունն ապահովելու համար ՀԱԱՀ տեղեկատվական համակարգերի կառավարման բաժնի հետ տարվել են համատեղ աշխատանքներ Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի 2015թ. փետրվարից գործող career.anau.am կայքի գործարկման ուղղությամբ: Այս կայքի միջոցով, ուսանողներին ու շրջանավարտներին տրամադրվում է խորհրդատվություն և տեղեկատվություն թափուր աշխատատեղերի, վերապատրաստումների և պրակտիկաների, հարցազրույցների նախապատրաստվելու, ինքնակենսագրական փաստաթղթերի կազմման վերաբերյալ, գործատուներին՝ աջակցություն համապատասխան աշխատակիցների ընտրության և աշխատանքի տեղավորման հարցերում, իսկ համալսարանին՝ շրջանավարտների հետ հետադարձ կապի մեխանիզմ:

2013-17թթ. ընթացքում ՀԱԱՀ-ում գործում է ՏԵՄՊՈՒՄ «Հայաստանում մարդկային կապիտալի գնահատման և շրջանավարտների աշխատունակությանն ուղղված բարձրագույն կրթության ցանց» ծրագիրը, որի նպատակն է որակի ապահովման և շրջանավարտների զբաղվածության աջակցման ճանապարհով նպաստել բարձրագույն կրթության բարեփոխումների իրականացման գործընթացին:

Տեղական մակարդակով կրթության արդյունավետությունը բարելավելու և հայ շրջանավարտների տվյալների բազա ստեղծելու նպատակով, ծրագիրն աջակցում է հայկական բուհերին գործիքների և մեթոդաբանության հայտնաբերման գործում, ինչը հետապնդում է 2 հիմնական նպատակ.

1. համալսարաններին և կառավարությանն ապահովել արդյունավետ մեխանիզմներով, որոնք թույլ կտան հասարակության վրա բարձրագույն կրթության երկարատև ազդեցության մոնիթորինգ իրականացնել և բարելավել կրթության որակը,

2. աջակցել կրթական համակարգի ու գործարար հատվածի միջև կապերի ստեղծմանը և աշխատանքի տեղավորման համակարգի ձևավորմանը:

Համակարգը թույլ է տալիս ձեռնարկություններին՝ աշխատանքի ընդունման համար էլեկտրոնային տվյալների բազայում որոնել և գտնել այն շրջանավարտներին, ովքեր ունեն հմտությունների և գիտելիքների անհրաժեշտ մակարդակ, միևնույն

Ժամանակ ծրագրի միջոցով շրջանավարտները կարող են ազատ մուտք ունենալ դեպի տեղական և միջազգային աշխատաշուկա:

Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժինը ակտիվ մասնակցում է այս ծրագրի իրականացմանը և 2014թ. ծրագրի շրջանակներում գործարկված էլեկտրոնային պորտալում 2017թ. ապրիլի դրությամբ գրանցվել է ավելի քան 2700 ՀԱԱՀ շրջանավարտ:

Քայլ 2.3. Ագրոբիզնեսի դեպարտամենտի հետադարձ կապերի հաստատման փորձի տարածումը մյուս ստորաբաժանումներում

Բարելավման գործողություններ

Այսօր ՀԱԱՀ-ում գործող հետադարձ կապի մեխանիզմներն արդիականացված են: Կան նաև այնպիսի մեխանիզմներ, ինչպիսին է «Skype» - օնլայն հարց ու պատասխանի ծրագիրը, որը դեռ չի գործում Ագրոբիզնես դեպարտամենտում:

Ագրոբիզնեսի դեպարտամենտում գործում է հետադարձ կապի մեկ այլ մեխանիզմ, որն իրականացվում է յուրաքանչյուր տարի: Շրջանավարտները լրացնում են հարցաթերթիկ, որի շնորհիվ հավաքագրվում է նրանց մասին որոշակի տեղակատվություն՝ աշխատանքի ոլորտի, գտնվելու վայրի վերաբերյալ, որոնք օգնում են համալսարանին մշտապես հետևել շրջանավարտների կարիերայի զարգացմանը:

ՀԱԱՀ-ում Hen-Gear ծրագրի շրջանակում մշակվել և ստեղծվել է շրջանավարտների տվյալների բազա, որում առկա է հատուկ հարցաթերթ՝ նախատեսված շրջանավարտների համար: Յուրաքանչյուր շրջանավարտ լրացնում է հարցաթերթը՝ բուհին տրամադրելով իր կոնտակտային տվյալները հետագայում իր հետ կապ հաստատելու համար: Նրանք նաև հնարավորություն ունեն խմբագրել հարցաթերթը և իրենց կարիերայի զարգացման մասին իրազեկել բուհին:

Հղում՝ <https://www.anau.am/hen-gear/>

Քայլ 2.4. Համալսարանում գործող հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմների արդյունավետության վերլուծության իրականացում

Բարելավման գործողություններ

1. Տեղեկատվության եվ փաստաթղթաշրջանառության կառավարման գործընթացների բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում և տեղեկատվության հավաքագրման միասնական համակարգի ստեղծում

Համալսարանում փաստաթղթաշրջանառության առավել օպերատիվ կառավարման, տեղեկատվության արագ տարածման նպատակով իրականացվել են Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ծրագրային փաթեթի ներդրման աշխատանքները:

Համակարգը հնարավորություն կտա համալսարանի փաստաթղթաշրջանառությունը դարձնել առավել կանոնակարգված և վերահսկելի: Պատշաճ կերպով կպահպանվեն փաստաթղթերի, հանձնարարականների ժամկետները:

Mulberry ծրագրային համակարգը հնարավորություն կտա համալսարանի ներքին փաստաթղթաշարժի մեծ մասը (մոտ 80-85%) իրականացնել էլեկտրոնային եղանակով: Այն թույլ կտա հստակ հետևել փաստաթղթերի տեղաշարժին, ժամկետներին, պատասխանատու անձանց աշխատանքին, ինչպես նաև իրականացնել լիարժեք վերահսկողություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բոլոր պետական գերատեսչությունները, մարզպետարանները և մի շարք այլ պետական մարմիններ օգտագործում են Mulberry ծրագրային համակարգը՝ համալսարանի և այդ կառույցների միջև փաստաթղթաշարժը կլինի էլ ավելի արագ և արդյունավետ:

ՀԱԱՀ-ի Mulberry համակարգը հասանելի է ինտերնետում mul.anau.am հասցեով, ուր մուտքագրված են համալսարանի կառուցվածքային բոլոր ստորաբաժանումները: Առաջիկայում նախատեսվում է անցկացնել Mulberry համակարգով աշխատելու համար վերապատրաստման դասընթացներ համալսարանի այն աշխատակիցների հետ, ովքեր իրականացնելու են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության գործառույթներ:

Համակարգը նաև համալսարանի տեղեկատվության հավաքագրման միասնական համակարգ է և հնարավորություն է տալիս ապահովել փաստաթղթերի էլեկտրոնային կենտրոնացված արխիվացում, ինչպես նաև արագ հասանելիություն: Mulberry համակարգն ունի բազմաթիվ ֆիլտրերով որոնողական համակարգ, որը հնարավորություն է տալիս շատ արագ փնտրել և գտնել բոլոր այն փաստաթղթերը, որոնք մուտքագրվել են համակարգ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 3

Համալսարանի կողմից հասարակությանը գիտելիքի փոխանցման մեխանիզմների մշակում և հաստատում

Քայլ 3.1. Համալսարանի կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման քաղաքականության և ընթացակարգի մշակում և հաստատում

Քայլ 3.2. Հասարակությանը մատուցվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների ներքին և արտաքին գնահատման գործիքների մշակում

Քայլ 3.4. Հասարակությանը գիտելիքի փոխանցման հիմնական գործառույթների ներքին գնահատման գործընթացների իրականացում

Քայլ 3.5. Համալսարանի կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման արդյունավետության և արդիականության վերլուծության իրականացում

Բարելավման գործողություններ

1. Գյուղացիական տնտեսությունների և ֆերմերների համար նախատեսված խորհրդատվական-տեղեկատվական հարթակ

Տեղեկատվական տեխնոլոգիաների արագընթաց զարգացման և նորարարությունների պայմաններում ավելի է կարևորվում դրանց դերը գյուղատնտեսության կայացման և առաջընթացի գործում: Մեր կողմից այժմ մշակվում է խորհրդատվական-տեղեկատվական հարթակ, որտեղ համացանցի միջոցով առկա կլինի գյուղացիների և գյուղացիական տնտեսությունների համար անհրաժեշտ տեղեկատվություն:

Կատեգորիա ագրարային ոլորտի գրականության և խորհրդատվական նյութերի (տեսանյութեր, նկարներ և այլն) միասնական տեղեկատվական բազա՝ համալրված հարուստ և եզակի գրականությամբ, որը հասանելի կլինի բոլորին համացանցի միջոցով: Հարթակում նախատեսվում է ստեղծել միջոց հասանելի հետադարձ կապի մեխանիզմներ՝ հնարավորություն ընձեռելով ֆերմերներին ՀԱԱՀ-ի մասնագետներից ստանալ համապատասխան խորհրդատվություն, ինչպես նաև փորձի փոխանակման նպատակով հաղորդակցվել միմյանց հետ (օնլայն չաթ):

Հարթակում առկա կլինի նաև տեսաձայնային կապի միջոց, որը հնարավորություն կտա ֆերմերների, գյուղացիների և գյուղացիական տնտեսությունների միջև կազմակերպել ագրարային ոլորտին վերաբերող տարբեր քննարկումներ և օնլայն ֆորումներ:

Խորհրդատվական-տեղեկատվական միասնական էլեկտրոնային հարթակը գյուղացիների ու ֆերմերների համար կհանդիսանա նաև ագրարային ոլորտի վերջին նորարարությունների, իրականացվող ծրագրերի և միջոցառումների տեղեկատվության աղբյուր:

Ներկա պահին մեր մասնագետների կողմից նախագծվում են հարթակի կառուցվածքը և ֆունկցիոնալ հնարավորությունները:

Գինեգործության ուսումնագիտաարտադրական կենտրոնի ստեղծում

2016 թվականի սկզբից ՀԱԱՀ-ում կրթական ծրագրերի կենտրոնի տրամադրած դրամաշնորհային ծրագրի և սեփական ֆինանսավորման միջոցով սկսվեց իրականացվել «Գինեգործական կրթության գիտաարտադրական բաղադրիչի զարգացում» երկամյա ծրագիրը: Ծրագրի հիմնական նպատակն է ստեղծել գինեգործական կրթության համար նյութատեխնիկական բազա, միավորել մեկ միասնական համակարգի մեջ համալսարանին պատկանող տարբեր ստորաբաժանումների համապատասխան գիտական և նյութական ռեսուրսները՝ ապահովելով ՀՀ-ում մեծ պահանջարկ ունեցող «Խմորման արտադրությունների տեխնոլոգիա և գինեգործություն» մասնագիտությամբ բարձր որակավորում ունեցող շրջանավարտների թողարկումը և գիտաարտադրական ոլորտում նորարարությունների խթանումը:

Ծրագրի փուլերից է Ոսկեհատ ուսումնափորձական տնտեսությունում գտնվող շենքի վերանորոգումը և հարմարեցումը գինեգործարաններին, ուսումնական, պրակտիկ, լաբորատոր կրթական տարածքին ներկայացվող պահանջներին: Շենքի վերանորոգման և բարեկարգման աշխատանքներն այժմ ընթացքի մեջ են. իրականացվում են ներքին վերանորոգման աշխատանքներ, տեղադրվել են դրսի պարիսպները ու մուտքի դարպասները, բացվել է հիմնական շինության մուտքը, ամրացվել են կրող պատերը, ապամոնտաժվել է միջհարկային ծածկը, շշալցման շինությունում տեղադրվել են լուսամուտներ, ավարտվել են 2 շինությունների (հիմնական և օժանդակ) տանիքների շինարարական աշխատանքները:

Հաջորդ փուլը գործարանի հագեցումն է նորագույն սարքավորումներով, որոնց ձեռքբերման նպատակով պոտենցիալ մատակարարների ցանկի կազմման համար կատարվել է շուկայի ուսումնասիրություն: Գնային առաջարկները ստանալուց հետո ներկայացված տեխնիկական բնութագրերը համեմատվել են ուսումնական բազայի ստեղծման համար մեր կողմից նախապես մշակված տեխնիկական պահանջների հետ, իսկ բանակցություններից հետո որոշվել է համագործակցել G.B. Քոնսալթինգ ՍՊԸ-ի հետ և 2017 թվականի մարտ ամսին կնքվել է պայմանագիր, որով նախատեսվում է իտալական լավագույն արտադրողների սարքավորումների մատակարարումը: Ըստ պայմանավորվածության սարքավորումների մատակարարումը կիրականացվի հունիս ամսից:

Ծրագրի առանձին և կարևոր փուլերից է տակառների ձեռքբերումը, որի համար 2017 թվականի մարտին հայտարարվել է մրցույթ Հայաստանի տակառ արտադրողների միջև, ստացվել են գնային առաջարկները, իսկ այժմ ընթանում են քննարկումներ հաղթողի հաստատման համար:

Մրցունակ կադրերի պատրաստման, նորարարական գիտական ծրագրերի իրականացման, կրթական ծառայությունների մատուցման տեսանկյունից կարևորվում է մասնագիտական գրականությամբ ուսումնաարտադրական կենտրոնի հագեցումը: Այդ նպատակով ծրագրի թիմի կողմից մշակվել և պատրաստվել են մասնագիտական 4 ձեռնարկներ: Հայտարարվել է մրցույթ տպագրատների միջև, նրանց կողմից ստացվել են գնային առաջարկներ, որոնք հաստատվելուց հետո ձեռնարկները կհանձնվեն տպագրության:

Քայլ 3.3. Համալսարանի կայքում դասընթացներին վերաբերվող ուսումնական նյութերի տեղադրում
--

Բարելավման գործողություններ

Համալսարանի կայքի հիմնական բաժիններից է էլեկտրոնային ուսուցման հարթակը: Էլեկտրոնային ուսուցման Moodle հարթակը դասավանդվող առարկաների էլեկտրոնային տարբերակների տեղադրման պլատֆորմ է: Նախքան առարկաների տեղադրումը կայքում դրանք մշակվել են էլեկտրոնային ուսուցման բովանդակության մշակման eXe ծրագրի պահանջներին համապատասխան, արժանացել են

ատեստավորող հանձնաժողովի հավանությանը: Ներկայումս հարթակում ներկայացված է 29 առարկա: Մշակված առարկաները տեղադրված են ՀԱԱՀ-ի էլեկտրոնային ուսուցման հարթակում (<http://elearning.anau.am/>): Բացի առարկաներից ներկայացված են նաև առարկային առնչվող տարբեր տիպի փաստաթղթեր, որոնք նպաստում են ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: Հարթակում տեղադրված դասընթացները բաց են միայն դրանց բաժանորդագրված ուսանողների համար: Էլեկտրոնային ուսուցմամբ դասավանդման յուրահատկությունն ու արդյունավետությունը պայմանավորված են մուլտիմեդիոն տարրերի և տարբեր կայքեր տանող հղումների առկայությամբ:

2015թ.-ից սկսած՝ վերապատրաստվել է 63 դասախոս: 2017թ. առաջին կիսամյակում վերապատրաստվել է 10 դասախոս: Դասընթացներն անցկացվում են շաբաթական երկու անգամ՝ 2 ամիս տևողությամբ: Վերապատրաստման դասընթացների արդյունքում 25 դասախոս էլեկտրոնային ուսուցման բովանդակության մշակման ծրագրի միջոցով մշակել է դասավանդվող մեկական առարկա:

Վերապատրաստված դասախոսներն ատեստավորվել են համապատասխան հանձնաժողովի կողմից և արդեն երկրորդ կիսամյակում դասավանդման գործընթացում կիրառել են էլեկտրոնային ուսուցման տեխնոլոգիաները: Այժմ ընթացքի մեջ են դասախոսների երկրորդ խմբի հետ վերապատրաստման աշխատանքները: Նախատեսվում է, որ վերապատրաստումների ներկայիս փուլը կավարտվի հունիսին: 2016-2017 ուսումնական տարվա ընթացքում՝ երկու փուլերի շրջանակներում վերապատրաստված և ատեստավորված դասախոսները կստանան համապատասխան վկայականներ:

Էլեկտրոնային ուսուցման հարթակը լիարժեք գործում է բուհում և հնարավորություն կա հետագա զարգացման արդյունքում ունենալ նաև հեռավար ուսուցման ոլորտային ուղղվածությամբ կարճաժամկետ կուրսեր այն շահառուների համար, (օր.՝ ֆերմերներ), որոնք տարածության և ժամանակի առումով ունեն որոշակի սահմանափակումներ: Կուրսն ավարտելուց նրանց տվում է համապատասխան սերտիֆիկատ: Այս ուղղությունն ընդունված է եվրոպական մի շարք բուհերի կողմից: ՀՀ կրթության և գիտության նախարարությունը հաստատել է մասնագիտությունների ցանկ՝ այդ թվում մեր բուհին համապատասխան, որոնց գծով թույլատրվում է իրականացնել հեռավար կրթություն:

Էլեկտրոնային ուսուցման շարունակական զարգացման նպատակով առաջիկայում նախատեսվում է էլեկտրոնային դասընթացների ավելացում, նոր մոդուլների փորձարկում և տեղադրում, նոր թիմերի ձևավորում ու վերապատրաստում:

«Արտաքին կապեր և միջազգայնացում» չափանիշի սահմաններում Համալսարանն առաջնահերթ խնդիր է դիտում հետևյալ հարցի լուծումը.

-Համալսարանում փորձի փոխանակման, զարգացման և արտաքին կապերի ու միջազգայնացման նպաստող միջավայրի ապահովում:

Դրա լուծման արդյունքում, տեսանելի ապագայում համալսարանը ձգտում է հասնել գլխավոր վերջնարդյունքին՝ Համալսարանի միջազգայնացմանը նպաստող՝ փորձի փոխանակումը և զարգացումը խրախուսող համալսարանի արտաքին կապերի համակարգի ձևավորմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 1.

Քայլ 1.1. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելուն միտված խրախուսող քաղաքականության և ընթացակարգերի մշակում

Քայլ 1.2. Արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականության, ընթացակարգերի և մեխանիզմների մշակում և հաստատում

2016 թ.-ին վերանայվել և ՀԱԱՀ Գիտական խորհրդի կողմից հաստատվել է համալսարանի արտաքին կապերին և միջազգայնացմանը վերաբերող քաղաքականությունը, որտեղ ներառվել են նոր, համալսարանի համար ռազմավարական նշանակություն ունեցող կետեր (օրինակ՝ արտասահմանցի ուսանողների ներգրավմանն ուղղված քաղաքականությունը): Նոր մշակված քաղաքականության ներդրման արդյունքում համալսարանը նպատակ ունի ոչ միայն ընդլայնել միջազգային համագործակցությունը, այլև ունենալ կայուն և ուժեղ համագործակցություն այն բուհերի հետ, որոնց հետ համագործակցությունը հեռանկարային է և արդյունավետ: Մշակված քաղաքականությանը համապատասխան համալսարանը ներկայումս քայլեր է մշակում ուսուցման գործընթացում արտասահմանցի ուսանողներ ներգրավելու ուղղությամբ, ինչը ներկայումս համարվում է համալսարանի գլխավոր ռազմավարություններից մեկը:

Քայլ 1.3. Արտասահմանյան առաջատար համալսարանների և կազմակերպությունների հետ գործընկերային կապերի ընդլայնման և նոր կապերի ձևավորման աշխատանքների իրականացում

Հաշվետու ժամանակահատվածում (2014-2016) համալսարանն ընդլայնել է համագործակցող համալսարանների և երկրնարի աշխարհագրությունը: Մասնավորապես, այդ ժամանակահատվածում համալսարանը կնքել է շուրջ 52 փոխըմբռնման հուշագրեր: Մեծացել է նաև համագործակցության աշխարհագրությունը. այժմ սերտ կապեր կան նաև Բրազիլիայի, Արգենտինայի, Շոտլանդիայի, Նիդերլանդների մի քանի կազմակերպությունների և համալսարանների հետ: Բացի նոր կնքված հուշագրերից, վերջին 1 տարում իրական համագործակցության են վերածվել նախկինքում կնքված, սակայն կյանքի չկոչված մի քանի համաձայնագրեր (օրինակ՝ Ֆոջիայի համալսարան, Միգել Հերնանդեսի համալսարան և այլն): Համալսարանի միջազգայնացման գործընթացը ներկայումս ուղղված է ոչ թե միջազգային պայմանագրերի ու հուշագրերի քանակի ավելացմանը, այլ կայուն ու սերտ համագործակցությունների հաստատմանը, առավելությունը տալով ոչ թե համաձայնագրերի քանակին, այլև իրական համագործակցությանը:

Քայլ 1.4. Արտաքին կապերի և միջազգայնացման գործողությունների ծրագրերի կազմում և հաստատում, կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում

Որպես երկարաժամկետ պլանավորում, Արտաքին կապերի դեպարտամենտի կողմից հիմք է ընդունվում ՀԱԱՀ ինստիտուցիոնալ կարողությունների շարունակական բարելավման պլան-ժամանակացույցը: Սրա հիման վրա Արտաքին կապերի դեպարտամենտը կառուցում է միջնաժամկետ և կարճաժամկետ աշխատանքային պլաններ, որոնցով պլանավորվում է դեպարտամենտի աշխատանքն ու այն կառույցների գործունեությունը, որոնք քայլեր են անում միջազգայնացման ուղղությամբ:

Քայլ 1.5. Արտաքին կապերի և միջազգայնացման տարեկան հաշվետվությունների կազմում և ներկայացում

Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին Արտաքին կապերի դեպարտամենտը ներկայացնում է տարեկան հաշվետվություն՝ կատարված աշխատանքների, ձեռքբերումների, միջազգայնացմանն ուղղված քայլերի վերաբերյալ: Հաշվետվությունում, բացի ներկայացվող տվյալներից, վերլուծվում է նաև միջազգայնացմանն ուղղված գործընթացների ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև ներկայացվում են այն քայլերը, որոնք անհրաժեշտ են թույլ կողմերի վերացմանն համար: Դրա արդյունքում բացահայտվել են այն թույլ կողմերը, որոնք խոչնդոտում են միջազգայնացման գործընթացին (մասնավորապես՝ օտար լեզվին քիչ տիրապետող ուսանողներ, օտար լեզվով դասավանդող դասախոսների պակաս, միջազգային ծրագրերի վերաբերյալ տեղեկացվածության ոչ բավարար մակարդակ): Այդ թերությունների վերացման ուղղությամբ ներկայումս կատարվում են որոշակի քայլեր (մասնավորապես՝ ուսանողների և դասախոսների շրջանում միջազգային ծրագրերի տեղեկացվածության խթանում, օտար լեզվի կատարելագործման խթանում):

Գործողության նկարագիր 2.

Համալսարանի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքի գործառնությունների արդյունավետության գնահատման համապատասխան մեխանիզմների ստեղծում

Քայլ 2.1. Համալսարանի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքի գործունեությունը կարգավորող ընթացակարգերի մշակում և հաստատում

2015-2016 թթ Արտաքին կապերի դեպարտամենտի կողմից մշակվել և ՀԱԱՀ Գիտական խորհրդի կողմից հաստատվել են արտաքին կապերին ու միջազգայնացմանն ուղղված մի քանի ընթացակարգեր (արտասահմանցի ուսանողների ընդունման, արտաքին կապերի արդյունավետության գնահատման, միջազգային կառույցների կողմից պահանջների բացահայտման): Ապագայում ակնկալվում է կազմել և ներդնել նոր ընթացակարգեր, որոնցով ևս կհամակարգվի միջազգայնացման

գործընթացը: Դրանցից մասնավորապես՝ արտաքին կապերի արդյունավետության գնահատման ընթացակարգին համապատասխան կատարվում է միջազգայնացման գործընթացների վերլուծություն և գնահատում, ինչի արդյունքում բացահայտվում են այն թույլ կողմերը, որոնք առկա են և վերացման կարիք ունեն:

Քայլ 2.2. Համալսարանի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքի որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում:

Քայլ 2.3. Համալսարանի արտաքին կապերի և միջազգայնացման ենթակառուցվածքի աշխատանքի արդյունավետության գնահատման մեխանիզմների մշակում

Արտաքին կապերի դեպարտամենտի որակի ապահովումն իրականացվում է առաջին հերթին տարեկան հաշվետվություններով, որտեղ բացահայտվում են դեպարտամենտի կողմից իրականացվող աշխատանքների ուժեղ և թույլ կողմերը, առաջարկվում են վերջիններիս ուղղման քայլերը: Տարեկան կտրվածքով կատարվում է դեպարտամենտի գործունեության SWOT վերլուծություն, որի արդյունքները քննարկվում են դեպարտամենտում: Միջազգայնացման գործընթացում հետադարձ կապի ապահովման մեխանիզմներից է արտագնա ուսանողների շրջանում անցկացվող հարցումները, որում բացահայտվում են այն թույլ կողմերը, ինչպես նաև դեպարտամենտում պարբերաբար անցկացվող ժողովները: Դեպարտամենտի կողմից մշակվել և ՀԱԱՀ Գիտական խորհիդր կողմից հաստատվել է արտաքին կապերի արդյունավետության գնահատման և միջազգային կառույցների կողմից պահանջների բացահայտման ընթացակարգերը:

Քայլ 2.4. Համալսարանի արտաքին կապերի և միջազգայնացման ենթակառուցվածքի աշխատանքի արդյունավետության վերլուծության իրականացում

Արտաքին կապերի դեպարտամենտի աշխատանքի արդյունավետության վերլուծությունն իրականացվում է պարբերական հաշվետվությունների, ժողովների, հետադարձ կապի ապահովման մեխանիզմներով: Դեպարտամենտի կողմից տարեկան կտրվածքով կատարվում է SWOT վերլուծություն, իսկ բացահայտված թույլ կողմերի վերացման համար առաջարկվում են ուղղիչ գործողություններ: SWOT վերլուծության արդյունքները քննարկվում են դեպարտամենտի աշխատակիցների կողմից, առաջարկվում են թույլ կողմերի վերացման գործողություններ: Օրինակ, բացահայտվել է Արտաքին կապերի դեպարտամենտի և ուսանողական խորհիդրի միջև թույլ կապը, ինչի լուծման ուղղությամբ պետք է քայլեր կատարվեն: Բացահայտվել է նաև միջազգային ծրագրերի համակարգման նախկին ոչ այնքան արդյունավետ մեխանիզմը, իսկ դրա լուծման արդյունքում ներկայումս արդեն կատարվել է համակարգման հավասարաչափ բաշխում դեպարտամենտի աշխատակիցների միջև:

Սա էապես նպաստում է աշխատակցինների հմտությունների ձեռքբերմանն ու ծրագրերի առավել արդյունավետ համակարգմանը:

Կից ներկայացվող փաստաթղթեր.

ՀԱԱՀ կանոնադրություն

Արտաքին կապեր_swot_2015

Արտաքին կապեր_swot_2016

Արտաքին կապերի դեպարտամենտի աշխատանքի արդյունավետության գնահատման ընթացակարգ:

Միջազգային կառույցների կողմից պահանջների բացահայտման ընթացակարգ
ՀԱԱՀ Արտասահմանցի ուսանողների ընդունելության ընթացակարգ ՀԱԱՀ արտաքին կապերի և միջազգայնացման համագործակցությանը նպաստող քաղաքականությունը:

«Որակի ներքին ապահովման համակարգ» չափանիշի սահմաններում Համալսարանն իր առջև դրված առաջնահերթ խնդիրներ է դիտում հետևյալ հարցերի լուծումը.

-Որակի ներքին ապահովման համակարգի ստեղծում և կատարելագործում,

-Որակի ներքին ապահովման գործընթացների պատշաճ կառավարման ապահովում, ներքին և արտաքին շահակիցների համար համալսարանական գործընթացների թափանցիկության և դրանց որակի մասին օբյեկտիվ տեղեկատվության տրամադրման ապահովում,

Համալսարանում որակի ապահովման արտաքին գնահատման համար անհրաժեշտ հիմքերի ձևավորում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 1

Համալսարանի որակի ապահովման քաղաքականությանը համապատասխան ընթացակարգերի մշակում

Քայլ 1.1. Համալսարանի որակի ապահովման քաղաքականության մշակում և հաստատում

Քայլ 1.2. Համալսարանի որակի ապահովման հայեցակարգի մշակում և հաստատում

Բարելավման գործողություններ

Համալսարանի կողմից 2012 թ.-ին ինստիտուցիոնալ արտաքին գնահատումից հետո մշակվել են որակի ապահովմանը ուղղված մի շարք նորմատիվային փաստաթղթեր, որոնցից հիմնայինն էր ՀԱԱՀ որակի ապահովման հայեցակարգը և քաղաքականությունը:

Հայեցակարգը և քաղաքականությունը մշակելուց հետո հարցը քննարկվել է համալսարանի գիտական խորհրդում և ենթարկվել հաստատման (գիտական խորհրդի որոշում 31.08.12 թ. (արձանագրություն 1)): Սույն փաստաթղթերը տրամադրվել է բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներին և տեղադրվել համալսարանի կայք էջի «Որակի ապահովում» բաժնում՝ համալսարանի բոլոր շահակից կողմերին հասանելի լինելու նպատակով:

Հղում՝ https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/____.pdf:

Հայեցակարգը իր մեջ ներառում է ՀԱԱՀ առաքելությունը, տեսլականը, համալսարանի որակի ապահովման սկզբունքները, մասնագիտական կրթության որակի ապահովման ռազմավարությունը, համալսարանում որակի ապահովման համակարգի զարգացման ուղղությունները:

Քաղաքականությունը մշակելիս հաշվի են առնվել ESG ստանդարտները և միջազգային փորձը տվյալ ոլորտում:

Քաղաքականության մեջ ամրագրված են ՀԱԱՀ որակի ապահովման նպատակները և խնդիրները, որակի ոլորտի քաղաքականության իրականացման սպասվող արդյունքները:

ՀԱԱՀ Որակի ապահովման քաղաքականության *նպատակն է* բարձրացնել համալսարանի ուսումնական, գիտահետազոտական և կառավարման գործընթացների որակը և արդյունավետությունը:

Որակի ապահովման հայեցակարգը և քաղաքականությունը ներդրված է գործածության մեջ և ենթակա է իրականացման:

Քայլ 1.3. Համալսարանի որակի ապահովման քաղաքականությանը համապատասխան ընթացակարգերի մշակում և հաստատում

Համալսարանում որակի ապահովման քաղաքականության հստակ իրականացման նպատակով մշակվել են համապատասխան ընթացակարգեր, որոնք հաստատվել են և տրամադրվել են կառուցվածքային ստորաբաժանումներին: Համապատասխան ընթացակարգերը առկա են համալսարանի կայք էջի «Որակի ապահովում» բաժնում.

(https://www.anau.am/index.php?option=com_content&view=article&id=552&Itemid=145) և իրականացվում են համալսարանի կողմից:

Ընթացակարգերը ներառում են հետևյալ ոլորտները՝
-ռազմավարական պլանավորում և կառավարում,
մասնագիտությունների կրթական ծրագրերի պլանավորում, իրականացում, վերանայում,

- աջակցություն ուսանողներին,
- պրոֆեսորադասախոսական կազմ,
- հետազոտություն և զարգացում,
- ենթակառուցվածք և ռեսուրսներ,
- հասարակական պատասխանատվություն,
- որակի ներքին ապահովման համակարգ:

Մշակված, հաստատված և գործածության մեջ դրված որակի ապահովմանը ուղղված ընթացակարգերը ստեղծում են նորմատիվային հենք տվյալ գործընթացների պատշաճ իրականացման համար:

Ըստ համապատասխան ընթացակարգերի իրականացվում է տարբեր գործընթացների որակի գնահատում՝

-ռեսուրսային ապահովվածության գնահատում,
կառուցվածքային ստորաբաժանումների և ծառայությունների գործունեության գնահատում,

-մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման գնահատում
-պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակների և դասավանդման որակի գնահատում այլն:

2016-թ.-ին որակի ապահովմանը ուղղված փաստաթղթերի փաթեթը ամբողջակացվել է:

Քայլ 1.4. Որակի ապահովման ձեռնարկի մշակում, հաստատում և տրամադրում կառուցվածքային ստորաբաժանումներին

Համալսարանի կողմից մշակված բարելավման պլանին համապատասխան մշակվել է Որակի ներքին ապահովման ձեռնարկը, որը ներառում է համալսարանում իրականացվող հիմնական ոլորտները, որակի ապահովման և կառավարման սկզբունքները և մոտեցումները:

ՀԱԱՀ Որակի ներքին ապահովման ձեռնարկը հաստատվել է գիտական խորհրդի կողմից (գիտական խորհրդի որոշում 31.08.12 թ. (արձանագրություն 1)), առկա է կառուցվածքային ստորաբաժանումներում և դրվել է գործածության մեջ:

Հղում՝

(https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/nerqin%20apahovman%20dernark.pdf):

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 2

Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով համալսարանի տրամադրած մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բավարարվածությունը պարզելու մեխանիզմների ստեղծում

Քայլ 2.1. Որակի ապահովման համակարգում ներգրավված համալսարանական հիմնական ստորաբաժանումներն ու կառույցները և նրանց միջև պարտականությունների բաշխման կարգի մշակում և հաստատում

Համալսարանում որակի ապահովման քաղաքականության և այլ փաստաթղթերի մշակմանը զուգահեռ մշակվել է ՀԱԱՀ Որակի ապահովման համակարգում ներգրավված համալսարանական հիմնական ստորաբաժանումներն ու կառույցները և նրանց միջև պարտականությունների բաշխման կարգը (գիտական խորհրդի որոշում 31.08.2012 թ. արձ. 1):

Կարգում ներառված են կառուցվածքային ստորաբաժանումների և պատասխանատու անձանց պարտականությունները և իրավունքները, մասնավորապես՝

- Համալսարանի գիտական խորհրդի կրթության որակի վերահսկման հանձնաժողովը,
- Համալսարանի Ուսումնամեթոդական կենտրոնը իր բաժիններով,
- Համալսարանի Որակի ապահովման ֆակուլտետային հանձնաժողովները:

Կարգը քննարկվել է գիտական խորհրդում, հաստատվել և ներդրվել գործածության մեջ:

Հղում՝ https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/____.pdf:

Քայլ 2.2. Որակի ապահովման գործընթացներում մարդկային ռեսուրսների ներգրավվածությունը կարգավորող կարգի մշակում և հաստատում

Համալսարանի որակի ապահովման գործընթացներում մարդկային ռեսուրսների ներգրավվածության գործընթացը կանոնակարգելու նպատակով մշակվել են և գիտական խորհրդի կողմից հաստատվել են հետևյալ նորմատիվային փաստաթղթերը՝

«Որակի ապահովման և կառավարման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության ապահովման կարգ», որը տվյալ գործընթացը կարգավորող նորմատիվային հիմք է: Փաստաթուղթը ներկայացնել է գիտական խորհուրդ և ենթարկվել հաստատման (ՀԱԱՀ գիտական խորհրդի արձ. № 10, “03”.06. 2016 թ.):

ՀԱԱՀ Որակի ապահովման համակարգում ներգրավված համալսարանական հիմնական ստորաբաժանումներն ու կառույցները և նրանց միջև պարտականությունների բաշխման կարգը (գիտական խորհրդի որոշում 31.08.2012 թ. արձ. 1):

Համալսարանի անձնակազմը ներգրավված է՝

-Կառուցվածքային ստորաբաժանումների ներքին աուդիտի իրականացման գործընթացում,

-Մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում,

-Շահակիցների կարիքների գնահատման գործընթացում,

-Որակի ապահովմանը ուղղված տվյալների հավաքագրման և մշակման գործընթացներում:

Սույն նորմատիվային փաստաթղթերում սահմանված են համալսարանի ներքին և արտաքին շահակիցները, նրանց ներգրավվածության գործառույթները, ներգրավման մեխանիզմները:

Սույն փաստաթղթերը գտնվում է գործառության մեջ:

Քայլ 2.3. Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող ֆինանսական ռեսուրսների բաշխման կարգի մշակում և հաստատում
--

Համալսարանում ֆինանսների տնօրինման, բաշխման և կառավարման գործընթացի կանոնակարգման նպատակով մշակվել են և հաստատվել են գիտական խորհրդի կողմից տվյալ գործընթացը կարգավորող հետևյալ նորմատիվային փաստաթղթերը՝

- Ֆինանսների տնօրինման քաղաքականություն և ընթացակարգ,
- Ֆինանսական ռեսուրսների բաշխման և կառավարման քաղաքականություն և ընթացակարգ (ՀԱԱՀ գիտական խորհրդի որոշում “06”. 02. 2015 թ. (արձ. № 9):

Համալսարանում Որակի ապահովման գործընթացների իրականացման ֆինանսական կողմը ապահովվում է պատասխանատու կառույցների կողմից զբաղեցված հաստիքներին հատկացվող աշխատավարձերին համապատասխան (համալսարանի բյուջե):

Մասնավորապես դա ֆիքսված է ՀԱԱՀ Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների բաժնի աշխատակարգի կետ 3.2.-ում:

Հղում՝ (https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/kbrpnt.pdf):

Քայլ 2.4. Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող նյութական ռեսուրսների բաշխման կարգի մշակում և հաստատում

Համալսարանի բոլոր տեսակի գործընթացների, մասնավորապես որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող նյութական ռեսուրսների բաշխումը կարգավորելու նպատակով մշակվել և գիտական խորհրդի կողմից հաստատվել է «Ֆինանսական ռեսուրսների բաշխման և կառավարման քաղաքականությունը և ընթացակարգը» և «Ռեսուրսների բաշխման ընթացակարգը», որը թույլ կտա ապահովել տվյալ գործընթացի ապահովման նորմատիվային հենքի առկայությունը և դրա պատշաճ իրականացումը (Հաստատվել է ՀԱԱՀ գիտական խորհրդում “06”. 02. 2015 թ. (արձ. № 9)):

Որակի ապահովման գործընթացները իրականացումը նյութատեխնիկական ռեսուրսներով ապահովելու համար Վարչատնտեսական դեպարտամենտը և ՏՏ և ԻԾ կենտրոնը համալսարանի բյուջեյի շրջանակներում Որակի ապահովման մասնագիտական կառույցին տրամադրում է անհրաժեշտ նյութական, տեխնիկական և ծրագրային միջոցներ:

Համալսարանում յուրաքանչյուր տարվա սկզբին Վարչատնտեսական դեպարտամենտի կողմից իրականացվում է տվյալ գործընթացների իրականացման համար անհրաժեշտ նյութական ռեսուրսների կարիքի բացահայտում և տրամադրում դրանք՝ ըստ անհրաժեշտության:

Քայլ 2.5. Որակի ապահովման ենթակառուցվածքի տարրերի սահմանում՝ ներառյալ մարդկային ռեսուրսները և նրանց աշխատանքային նկարագրերի սահմանում

Համալսարանում որակի ապահովման ենթակառուցվածքի բնականոն գործունեությունը ապահովելու նպատակով վերանայված և վերամշակված է Ուսումնամեթոդական կենտրոնի գործունեությունը կարգավորող կանոնակարգը, որտեղ հստակ սահմանված են որակի ապահովումով զբաղվող կառույցների նպատակը, խնդիրների, պարտականությունները և իրավունքները:

Մշակված է և գիտական խորհրդի կողմից հաստատված է Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների աշխատակարգը (https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/kbrpnt.pdf), որում սահմանված են կառույցի նպատակը, գործառույթները, աշխատակիցների պարտականություններն ու իրավունքները, աշխատանքային նկարագրերը:

Տվյալ փաստաթղթերը թույլ են տալիս հստակ տարանջատել աշխատակիցների պարտականությունները, կառույցի գործունեությունը և կապը այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 3

Որակի ներքին ապահովման գործընթացների ներքին և արտաքին շահակիցների ընդգրկվածության ընդլայնման նպատակով շահակիցների մասնակցության մեխանիզմների վերանայում և բարելավում

Քայլ 3.1. Որակի ներքին ապահովման գործընթացների ներքին և արտաքին շահակիցների ընդգրկվածության աստիճանի բացահայտում և արդյունավետության վերլուծություն

Համալսարանի բարելավման պլանին համապատասխան 2016 թ.-ին իրականացվել է Համալսարանի որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության վերլուծություն:

Վերլուծության արդյունքները ամփոփ ներկայացված են հաշվետվության տեսքով:

Համալսարանի բոլոր շահակից կողմերը ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, մասնավորապես՝

- Որպես պաշտոնական մասնակիցներ համալսարանի կառավարման խորհուրդներում (ձայնի իրավունքով):
- Որպես պաշտոնական մասնակիցներ համալսարանի ինքնագնահատման և այլ գնահատման գործընթացներում:
- Անկետավորման գործընթացին՝ կանոնավոր հիմունքներով:

(https://www.anau.am/index.php?option=com_content&view=article&id=1656&Itemid=145)

Գործընթաց / Մասնակիցներ	Վարչական կազմ	Պրոֆեսորադոսսալ կազմ	Ղեկավար կազմ	Ուսանողներ	Շրջանավարտների	Գործատուներ	Պետական մարմիններ
Ներգրավվածությունը համալսարանի կառավարման խորհուրդներում	✓	✓	✓	✓	✓	✓	✓
Ներգրավվածություն ինստիտուցիոնալ ինքնավերլուծության և այլ գնահատման գործընթացներում	✓	✓	✓	✓			✓
Ներգրավվածությունը անկետավորման գործընթացում (հարցումներ)		✓		✓	✓	✓	
Ներգրավվածություն ներքին աուդիտներին	✓	✓					
Ներգրավվածություն արտաքին աուդիտներին							✓

Իրականացվել է ընդգրկվածության աստիճանի բացահայտման SWOT վերլուծություն:

SWOT մատրից	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Համալսարանի ներքին շահակիցները ներգրավված են համալսարանի գործունեության գնահատման գործընթացում՝ անկետավորման միջոցով: Համալսարանի ղեկավար կազմը իրականացնում է որոշումների ընդունում՝ ուղղված համալսարանի որակի համակարգի զարգացմանը և բարելավմանը: Համալսարանի վարչական և պրոֆեսորադասախոսական կազմը ներգրավված է որակի կառավարման համակարգում՝ որպես ներքին աուդիտորներ: Արտաքին շահակիցները ներգրավված են համալսարանի որոշումների կայացման, հավատարմագրման գործընթացներում: Գործատուները ներգրավված են համալսարանի ՄԿԾ-երի վերանայման գործընթացին՝ տալով առաջարկություններ՝ ուղղված ծրագրերի բարելավմանը:	Համալսարանի արտաքին շահակիցները ներգրավվածությունը համալսարանի գործունեության անկետավորման գործընթացին թույլ է:

Քայլ 3.2. Որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունն ապահովող կանոնակարգի մշակում և հաստատում

Համալսարանի որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունն ապահովող կարգավորող փաստաթուղթը մշակելու համար համալսարանի կողմից առանձնացվել են ներքին և արտաքին շահակից կողմերը, սահմանվել նրանց ներգրավվածության գործառնությունները, ներգրավման մեխանիզմները: Արդյունքում մշակվել է և գիտական խորհրդի կողմից հաստատվել է «Որակի ապահովման և կառավարման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության ապահովման կարգը» (գիտական խորհրդի որոշում “03”.06. 2016 թ. (արձ. № 10)):

Հղում՝

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/nergravvacutyman_pahpvmayn_karg.pdf

Ներքին և արտաքին շահակիցների որակի ապահովման գործընթացներում պատշաճ ներգրավվածությունը ապահովող սույն կանոնակարգային փաստաթուղթը դրված է գործածության մեջ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 4

Կրթության որակի ապահովմանն ուղղված կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների արդյունավետությունը բացահայտող մեխանիզմների մշակում, դրանց հիման վրա պարբերական գնահատումների անցկացում

Քայլ 4.1. Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում

Համալսարանում որակի ներքին ապահովման համակարգի վերանայման գործընթացը կարգավորող նորմատիվային հենք ստեղծելու նպատակով մշակվել և գիտական խորհրդի կողմից հաստատվել է Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականությունը և ընթացակարգը:

Հղում՝

https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/voraki_nerqin_apa_hovman.pdf

Ընթացակարգը ներառում է որակի ներքին ապահովման համակարգի վերանայման նպատակը և խնդիրները, մեխանիզմները և գործիքակազմը:

Քաղաքականությունը և ընթացակարգը կկիրառվի մեկ լիարժեք շրջափուլը փակվելուց հետո:

Քայլ 4.2. Որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի առաջավոր փորձի համեմատական վերլուծության իրականացում

Համալսարանում իրականացվում է որակի ապահովման ոլորտում առաջավոր փորձի ուսումնասիրում, մասնավորապես որակի ապահովման գործընթացները կարգավորող նորմատիվային հենքի ստեղծման համար առաջավոր փորձի ուսումնասիրություն:

Մասնավորապես որակի ոլորտում ուսումնասիրվել է հետևյալ համալսարանների փորձը՝

- Carnegie Mellon University,
- American University Washington .DC,
- Ազգային հետազոտական համալսարան «Высшая школа экономики»,
- Կուբանի պետական ագրարային համալսարան:

Քայլ 4.3. Որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմների և գործիքների մշակում

Համալսարանի բարելավման պլանին համապատասխան մշակվել և հաստատվել են Որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման

մեխանիզմներ և գործիքներ, որոնք ներառված են «ՀԱԱՀ որակի ապահովման համակարգի վերանայման ընթացակարգում»:

Հղում՝

(https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/voraki_nerqin_apahovman.pdf):

Այն ներառում է որակի ապահովման ողջ համակարգի, մասնագիտությունների կրթական ծրագրերի, Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետության վերանայումը և այլն:

Քայլ 4.4. Որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմների արդյունավետության վերլուծություն

Համալսարանում մշակվել և հաստատվել են որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմները:

Որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմների վերլուծություն չի իրականացվել, քանի որ որակի ներքին ապահովման համակարգի ստեղծելու և գործածման մեկ ամբողջական շրջափուլ չի իրականացվել:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 5

Ներքին և արտաքին շահակիցների համար համալսարանական գործընթացների թափանցիկության ապահովման և դրանց որակի մասին օբյեկտիվ տեղեկատվության տրամադրման համակարգում ու կանոնակարգում և համապատասխան գնահատման մեխանիզմների մշակում

Քայլ 5.1. Համալսարանի ներքին և արտաքին տեղեկացվածությունն ապահովող ընթացակարգերի և մեխանիզմների մշակում և հաստատում

Համալսարանի ներքին և արտաքին շահակիցներին որակի ապահովմանը ուղղված տեղեկատվության ապահովման նպատակով մշակված է և հաստատված է «Համալսարանի ներքին և արտաքին տեղեկատվության ապահովման ընթացակարգը» (գիտական խորհրդի որոշում “03”.06. 2016 թ. (արձ. № 10)), որը ներառում է տվյալ գործընթացի իրականացման նպատակը և խնդիրները, տարբեր շահակից կողմերի համար տեղեկատվության տեսակների դասակարգումը, հաղորդման միջոցների ընտրությունը, տեղեկատվության ապահովման աստիճանի գնահատումը և արդյունքների վերլուծությունը:

Հղում՝

(https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/2017/hamalsarani_nerqin_ev_artaqin_apahovum.pdf):

Սույն նորմատիվային փաստաթուղթը ներդրված է գործածության մեջ:

Քայլ 5.2. Համալսարանի ներքին և արտաքին շահակիցների տեղեկացվածության աստիճանի գնահատման մեխանիզմների մշակում

Համալսարանի կողմից մշակված են ներքին և արտաքին շահակիցների տեղեկացվածության աստիճանի գնահատման մեխանիզմներ, որոնք ներառված են «Համալսարանի ներքին և արտաքին տեղեկատվության ապահովման ընթացակարգի» Շահակից կողմերին տեղեկատվության ապահովման աստիճանի գնահատում կետում (3.3.5. կետ):

Համալսարանի շահակիցների տեղեկացվածության աստիճանը պարզելու նպատակով իրականացվում են հարցումներ, որոնք ներառում են տեղեկացվածության աստիճանի ուսումնասիրումը այս կամ այն կառույցի գործունեությունից (ուսանողներ), կամ այս կամ այն գործընթացից (պրոֆեսորադասախոսական կազմ): Արդյունքները ներկայացվել են հաշվետվության տեսքով:

Քայլ 5.3. Համալսարանի գործունեության թափանցիկությունը ապահովող մեխանիզմների արդյունավետության վերլուծություն

Համալսարանի կողմից 2016 թ.-ին իրականացվել է Համալսարանի կողմից տրամադրված հրապարակումների գնահատման մեխանիզմների արդյունավետության վերլուծություն, կազմվել է ամփոփ հաշվետվություն:

Հրապարակումների արդյունավետության գնահատումը իրականացվում է՝ շահակից կողմերի շրջանում իրականացվող հարցումների միջոցով,


Համալսարանի կայքում առկա հետադարձ կապի գործիքների աշխատանքի արդյունքում,

Համալսարանի կայք էջում ներկառուցված Google Analytics գործիքի միջոցով,

Համալսարանների կայքերի ռանկավորման համար նախատեսված <http://www.webometrics.info/> կայքի միջոցով:

Պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում տեղեկատվության ապահովման գործընթացի արդյունավետության գնահատման նպատակով իրականացվում է հարցում՝ համապատասխան հարցման թերթիկների միջոցով:

2016 –ին իրականացված հարցումների արդյունքները ցույց են տվել, որ դրանց մեծ մասը բավարարված են տվյալ գործընթացից:




Ուսանողներին որակական և քանակական տեղեկատվությունը հիմնականում տրամադրվում է համալսարանի կայք էջի միջոցով:

Տեղեկատվությունը ներառում է՝

- Ինֆորմացիա քննությունների և վերահանձնումների գրաֆիկների վերաբերյալ,
- Տարաբնույթ մրցույցների վերաբերյալ,
- Կրթաթաշակների տրամադրման կանոնների վերաբերյալ,
- Էլեկտրոնային գրադարանի և նրանից օգտվելու վերաբերյալ,
- Ուսանողին վերաբերող նորմատիվային փաստաթղթերի վերաբերյալ:

2016 թ.-ին ուսանողների շրջանում իրականացված հարցումների արդյունքները համալսարանի կայքի ինֆորմատիվ հազեցվածության վերաբերյալ բերված են նկարում:



Համալսարանի կայքի յուրաքանչյուր բաժին ունի հետադարձ կապի ապահովման հնարավորություն, որի միջոցով այս կամ այն շայակից կողմը կարող է

դիմել այս կամ այն հարցով կամ կատարել իր դիտարկումը տեղեկատվության ապահովման վերաբերյալ: Կայքի հետադարձ կապի գործիքից մասնավորապես օգտվում են համալսարանի դիմորդները:

Համալսարանի կայք էջի այցելությունների դինամիկան ստուգվում է ներկառուցված Google Analytics գործիքի միջոցով, որի արդյունքները հրապարակվում են համալսարանի գործունեության տարեկան հարվետվությունների մեջ, իսկ տարեկան դինամիկային հետևում է ՏՏ և ԻԾ կենտրոնի Տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման բաժինը:

Ցուցանիշ	2012/13	2013/14	2014/15	2015/16
Համալսարանի կայքի հաճախելիության ցուցանիշները	212945	216000	227744	229700

Համալսարանի կողմից տեղեկատվության տրամադրման գործընթացը (որակական և քանակական տեղեկատվության տրամադրում) գնահատվում է նաև <http://www.webometrics.info/> կայքի միջոցով, որը նույնպես հանդիսանում է գնահատման գործիք:

Ռանկավորման արդյունքներով ՀԱԱՀ-ն գրավել է 2-րդ դիրքը:

ranking	World Rank	University	Det.	Presence Rank*	Impact Rank*	Openness Rank*	Excellence Rank*
1	2299	Yerevan State University	99	770	6631	2144	2385
2	13630	Armenian National Agricultural University	99	1350	16060	4121	5824
3	11373	Yerevan State Linguistic University	99	2873	12494	4121	5824
4	12930	Armenian State University of Economics	99	3954	14249	4121	5824
5	8185	Russian Armenian State University / Российско-Армянский Славянский университет	99	5024	9790	4121	5269
6	4626	American University of Armenia	99	5206	7187	4121	4060
7	15317	Eurasia International University	99	7573	16371	4121	5824
8	8940	Armenian State Pedagogical University	99	8754	7677	4121	5824
9	8096	Yerevan State Medical University	99	9533	11558	4121	4512
10	22821	Vanadzor State University	99	9736	23164	4121	5824
11	15487	Yerevan State Academy of Fine Arts	99	11648	15844	4121	5824
12	21090	Moscow State University of Economics Statistics and Informatics Yerevan branch	99	12186	21704	4121	5824

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 6

Տեղեկատվության հավաքման քաղաքականություն ու ընթացակարգերի վերանայում,

որակի ապահովման արտաքին գնահատման անհրաժեշտ հիմքեր ձևավորող համապատասխան մեխանիզմների մշակում

Քայլ 6.1. Տեղեկատվության հավաքման քաղաքականություն ու ընթացակարգերի վերանայում

ՀԱԱՀ-ում տեղեկատվության հավաքման և կառավարման գործընթացը կանոնակարգելու նպատակով մշակվել են գործընթացը կարգավորող հետևյալ փաստաթղթերը՝

- «Ռազմավարական ծրագրերի իրականացման մշակատնտեսական, չափումներ և գնահատում ընթացակարգի» կետ 4.,
- ՀԱԱՀ կրթական գործունեության որակի մշտադիտարկման կարգ,
- Ուսումնական և գիտահետազոտական գործունեության մշտադիտարկման ինֆորմացիոն քարտեզ,
- Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման կանոնակարգ:

Համալսարանում տեղեկատվության հավաքագրման և մշակման համար մշակվել և ներդրվել է EBus հավտումատացված համակարգը, որը կնպաստի տեղեկատվության արդյունավետ հավաքագրման և մկամնա գործընթացի ապահովմանը:

Քայլ 6.2. Ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների համապատասխան տարեկան ինքնավերլուծության իրականացում և անհրաժեշտ հաշվետվությունների հավաքագրում

Համալսարանը պարբերաբար իրականացնում է արտաքին գնահատման համար տվյալների հավաքագրում, մասնավորապես՝

- համալսարանի գործունեության առանցքային ցուցանիշների հավաքագրում և վերլուծություն, համալսարանի վարկանիշավորման տվյալների հավաքագրում և այլն:

Համալսարանի կողմից իրականացված գործունեությունը արտացոլվում է երկու հիմնական փաստաթղթերում՝

- «Ուսումնական տարվա ուսումնական գործընթացի արդյունքները և խնդիրները», «ՀԱԱՀ գործունեության հաշվետվություն» (ռեկտորի հաշվետվություն):

2016 թ.-ին Ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշներին և չափորոշիչներին համապատասխան իրականացվել է «Որակի ներքին ապահովման համակարգ» չափանիշի վերլուծություն և ներկայացվել հաշվետվության տեսքով:

Հղում՝ https://www.anau.am/images/stories/Voraki_kentron/inqnaverlucutyun.pdf